22620

«ՅԱՌԱՋ»-ի գրադարան № 45

Է. ՎԱՆԴԷՐՎԷԼԴ

ԲԱՆՒՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԲԷԼԳԻԱՅՈՒՄ

Թարգմ. ռուս. Ա. Գ.

Գինը 45 կոպ.

331(493)
Վ-22

1907

ԹԻՖԼԻՍ

0 7 AUG 2013
18247-59
4-22
300
1622-4Ա

№ 45 «Յ Ա Ռ Ա Ջ»-ի գրադարան № 45

05 FEB 20
ՀԱ.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI. 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Է. ՎԱՆԴԷՐՎԵԼԴ

ԲԱՆՈՒՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԲԵԼԳԻԱՅՈՒՄ

1003
19423

Թարգմ. ռուս. Ա. Գ.

ՈՒՍԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ
8692
28651-60

Թ Ի Ֆ Լ Ի Ս
ԵԼԵԿՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՕԼԻՑ.
1907 (54)

22620

Գլ. I.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՅԹԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Եւրոպական պետութիւնների շարքում—եթէ չը հաշւենք այնպիսի մանր իշխանութիւնները կամ հասարակապետութիւնները, ինչպէս Չերնոգորիան, Լիւկսեմբուրգի Մեծ Դքսութիւնը, Անեգան կամ Սան-Մարինօ—Բելգիան ամենափոքր երկիրն է։

Նրա տերրիտօրիան, որ կազմում է 29,456 քառ. կիլօմետր, հէնց միայն եւրոպական Ռուսաստանում կարող է հարիւր ութսուն և երեք անգամ տեղաւորուել։ Բայց մինչ դեռ Ռուսաստանում ամեն մի քառ. կիլօմետրի վրայ գալիս է 20 բնակիչ, Բելգիայում նոյն տարածութեան վրայ ապրում է 227 մարդ. և այս մի կտոր հողի վրայ, որ այնքան փոքր տեղ է գրաւում քարտէզի վրայ, իրանց գոյութեան միջոցներն են գտնում եօթը միլլիօնի չափ մարդիկ—ըստ վերջին՝ 1900 թ. դեկտ. 31-ի ժողովրդագրութեան 6,693,548 մարդ։

Եւրոպական և ոչ մի երկրում (բացի Սակսօնիայից) արդիւնագործութիւնը չէ հասել խտութեան այն աստիճանին, արդիւնաբերական և քաղաքային կեանքի կենտրօնները ոչ մի տեղ այնքան բազմաթիւ և միմեանց մօտ դասաւորուած չեն որքան Բելգիայում։ Այստեղ գլխաւոր քաղաքները, ինչպէս Գենտ, Անտվերպեն, Լիէժ գտնւում են մայրաքաղաքից երկաթուղու գծով 1 կամ ամենաշատը երկու ժամւայ հեռաւորութեան վրայ։ Ածխի ընդարձակ աւազանը, որ կազմում է Վեստֆալիայի և Շուրջրէյնեան գաւառների ածխաշերտերի շարունակութիւն, իր հանքերով, ապակու և մետաղի գործարաններով համարեա անընդհատ երկարութեամբ ձգւում է Կուշան-դը-Մօնսից (արևմտքում) մինչև Վերվէ (արևելքում)։ Երկաթուղիների և օժանդակ տրամվայների (տեղական նշանակութիւն ունեցող երկաթուղիների) ցանցը, սարդոստայնի նման ծածկել է ամբողջ տերրիտօրիան Բէլգիայում, որտեղ հաղորդակցութեան ճանապարհները զարգացած են աւելի քան աշխարհի որ և է ուրիշ երկրում, որտեղ ամեն մի հազար

քառ. կիլոմետր տարածութիւնից 155 կիլոմետր շահագործւում է հաղորդակցութեան համար, մինչ դեռ Անգլիայում նոյն հազար կիլոմետրից շահագործւում է 112, իսկ Ռուսաստանում միայն 8 կիլ.: Պետութիւնը, որ հանդիսանում է երկաթուղիների մեծ մասի սեփականատէր, արդիւնագործական ձեռնարկուներին աւելորդ բանւորական ձեռքեր մատակարարելու նպատակով գիւղական բանւորներին տալիս է այսպէս կոչւած շաբաթական տոմսեր, որոնք աւելի արժան են, քան երրորդ կարգի հատով գնալ-գալու տոմսերը. այս շաբաթական տոմսերը գիւղացի բանւորներին հնարաւորութիւն են տալիս ամեն օր գնալ քաղաք իրանց գործի և միևնոյն ժամանակ մշտականապէս ապրել իրանց գիւղերում: Շնորհիւ այսպիսի արժան հաղորդակցութեան այժմ, կարելի է ասել, չի գտնւիլ ոչ մի համայնք, ոչ մի փոքր ի շատէ խոշոր գիւղ, որ պահպանած լինի զուտ երկրագործական բնաւորութիւն: Նրանցից ամեն մէկը ունի դուրսը աշխատող բանւորների մի գունդ և գիւղի բնաւորութիւնը—առաջիկայ 10 կամ 15 տարիների ընթացքում, երբ կը սկսեն Բելգիայի հիւսիսում մօտ ժամանակները գտնւած քարածխի շերտերը մշակել—հետզհետէ կը զարգանայ *):

Բայց նոյն իսկ այժմ արդիւնաբերական ազգաբնակութիւնը նրան յարող ազատ պրօֆեսսիաների ներկայացուցիչների և առևտրով զբաղւող անհատների հետ միասին կազմում են ամբողջ ազգաբնակութեան ամենախոշոր մասը:

1846 թ.—այս ժամանակներին է վերաբերում գիտական պահանջներին համապատասխան առաջին արդիւնաբերական ժողովրդագրութիւնը—Բելգիայում հաշւում էին մօտ 160,000 գործատէրեր կամ ինքնուրոյն արհեստաւորներ, 200,000՝ տանը զբաղւած և 300,000՝ դուրսը աշխատող բանւորներ—ընդամենը մօտաւորապէս 660,000 արդիւնաբերական ազգաբնակութիւն ի դիմաց մի միլլիօն հողագործների **):

---

*) Կամպինում քարածխի հանքեր գտնելու բիբլիօգրաֆիան և պատմական տեսութիւնը կարելի է գտնել Dolenner-ի Wodon-ի Waxweiler-ի գրքում. «Le charbon dans le nord de la Belgeqne» Publication de l'instits solvay. Byuxelles. Misch sf Thorn. *1903*

**) Մանրամասն տեղեկութիւններ տես. Reɔeusement général des iudustrves et des méfiers (31 ocholre 1896). Analyse des volumes I et II p. 41 Bruteles, Hayez, *1900*

Յիսուն տարի յետոյ, 1896 թ. հոկտ. 31-ի «Ընդհանուր արդիւնաբերական և արհեստաւորական ժողովրդագրութիւնը» արդիւնաբերական ազգաբնակութիւնը հաշւում էր 1,102,244 մարդ:

Այս ընդհանուր թիւը բաժանւում էր հետևեալ առանձին խմբերի.

	Տղամարդիկ	Կանայք	Ընդամենը
Գործատէրեր . . .	168,699	69,296	237,995
Վերատեսուչներ, ծառայողներ, միջնորդներ . .	37,946	2,529	40,475
Իսկական բանւորներ . .	597,418	175,700	773,118
Ձեռնարկողների ընտանիքների անդամներ, որոնք զբաղւած էին իբրև հասարակ բանւորներ .	33.182	17,474	50,658
	837,255	264,989	1,102,244

Բայց այս 1,102,244 գումարին անհրաժեշտ է աւելացնել և այն մարդկանց թիւը, որոնք թէև աշխատում էին հասարակական ձեռնարկութիւնների վրայ, այն է պետական երկաթուղիների և մի քանի ուրիշ արդիւնաբերական ասպարէզների վրայ, բայց զանազան պատճառով չեն ցուցակագրւել, այնպէս որ 1896 թ. արդիւնաբերական աշխատանքով զբաղւած մարդոց թիւը կարելի է մօտաւորապէս հաշւել 1,200,000 *):

Վերջին ժամանակի համար մենք չունենք պրօֆեսսիաների (զբաղմունքների) այնպիսի մի վիճակագրութիւն, որ իր գիտական ճշտութեամբ նոյնքան վստահելի լինէր, որքան «արդիւնաբերական և արհեստաւորական ժողովրդագրութիւնը»:

Բայց 1900 թ, դեկտ 31-ին կազմած «Ընդհանուր ժողովր-

---

*) Մանրամասնութիւնները տես Recenslment des 1896, Ahalyse desvol. l et ll, uote á la page 12.

դագրութիւը» ցոյց է տալիս, որ արդիւնաբերութեամբ պարապողների թիւը աճել է համարեա երեք հարիւր հազարով (290,748), այնպէս որ եթէ ընդունենք աճման այս յարաբերութիւնը, այն ժամանակ նրա միւս թւերն էլ կը համապատասխանեն 1896 թւի ժողովրդագրութեան հետևանքներին։

«Ընդհանուր ժողովրդագրութեան» համաձայն Բելգիայի առանձին պրոֆեսսիաների թւական կազմը grosso modo (ընդհանուր առմամբ) կարելի էր որոշել այսպէս.

Արդիւնաբերական զբաղմունքները . .	1,370,000	41,5 %
Երկրագործական զբաղմ.	700,000	21,2 »
Առևտրական զբաղմ.	385,000	11,7 »
Մտաւոր աշխատանքները և ազատ պրոֆեսսիաները	267,000	8,0 »
Զանազան զբաղմունք.	580,000	17,6 »
	3.302,000	100 »

Պէտք է նկատել որ թւերն ըստ պրոֆեսսիաների հաշւելիս ընդհանուր գումարը ստացւում է աւելի, քան այն դէպքում, եթէ հաշւելու լինենք այն մարդոց, որոնք ունեն որ և է զբաղմունք (այն է 3,071,301 մարդ, կամ ազգաբնակութեան 46%), որովհետև առաջին դէպքում նրանք, որոնք միաժամանակ պարապում են մի քանի պրոֆեսսիաներով, հաշւում են առանձին, ամեն մի համապատասխան պրոֆեսսիայի խմբի մէջ*)։ Այդպէս ուրեմն ամեն մի

*) Մասամբ գոնէ սրանով կարելի է բացատրել այն ահագին զանազանութիւնը, որ գոյութիւն ունի երկրագործական աշխատանքով պարապող մարդկանց թւի նկատմամբ, ազգաբնակութեան ժողովրդագրութեան և մասնաւորապէս երկրագործական ժողովրդագրութիւնների նկատմամբ։

Այն ժամանակ, երբ 1900 թ. դեկտ. 31-ի ընդհանուր ժողովրդագրութեան յառաջաբանը հատ. I. եր. LXXIV-ը երկրագործութեամբ պարապող մարդկանց թիւը հաշւում է կլոր թւով 700,000 մարդ, երկրագործական ժողովրդագրութիւնները տալիս են հետևեալ թւերը.

1864	թիւը	1,083,601	մարդ,	որոնք	սովորաբար	զբաղւած	են	երկրագործութ.
1880	»	1,199,319	»	»	»	»	»	»
1895	»	1,204,910	»	»	»	»	»	»

հարիւր՝ երկու սեռի և ամեն հասակի բելգիացիներից 46 հոգի (տղամարդ, կին և երեխայ) ունեն որոշ զբաղմունք. իսկ որ և է աշխատանքով զբաղւող ամեն մի հարիւր անհատից իսկապէս արդիւնագործութեամբ պարապում են քառասունից աւելի մարդ, չը հաշւելով այն մարդոց անվերջ թիւը, որոնք երկրագործութիւնից, առևտրի կամ ազատ պրոֆեսսիաների ասպարէզում որ և է օժանդակ ֆունկցիա են կատարում արդիւնագործութեան համար։

Բայց այս թւերն ինքն ըստ ինքեան չեն կարող գաղափար տալ այն զարմանալի յառաջադիմութեան մասին, որ արդիւնաբերութիւնը կատարել է 1864 թւից սկսած։

Ինչպէս նկատում է Waxweiler-ը վերջին արդիւնագործական ժողովրդագրութեան «I և II հատորների վերլուծութեան» մէջ Բելգիայի վերջին հարիւրամեակի արդիւնագործութեան զարգաց-

Հետևաբար վերջին շրջանում նրանց թիւը աւելացել է աւելի քան հինգ հազար մարդով։

Բայց նա ով ծանօթ է բելգիական երկրագործութեան իսկական դրութեան, անկասկած գիտէ, որ այս տեսակ յաւելումը գոյութիւն ունի միայն թղթի վրայ։ Ասենք այս բանը վկայում են և իրանք պաշտօնական փաստաթղթերը։

Նախ և առաջ, երկրագործական ժողովրդագրութիւնը կատարւում էր դեկտեմբերի 31-ին, այսինքն այն ժամանակ, երբ յիսուն հազար ֆլամանդիական երկրագործ բանւորներ, որոնք ամեն տարի գնում են Ֆրանսիա, իրանց տանն էին. հետևաբար երկրագործ ազգաբնակութեան իսկական թիւը ստանալու համար պէտք է հանել այն բանւորների հետզհետէ աճող մասսան, որոնք գարունքից սկսած մինչև աշունք անցնում են երկրի սահմանը, իսկ ձմեռը պարապում են օր. կտաւատի մաքրելով կամ որ և է ուրիշ արտադրական աշխատանքով։ Այնուհետև 1895 թւի երկրագործական ժողովրդագրութեան քննադատական մասից կարելի է տեսնել, որ «Լիէժի և Նամերի վերաբերմամբ ցոյց տւած յաւելումը (+17,263) առաջ է եկել հաւանականաբար շնորհիւ այն հանգամանքի, որ այս գաւառների շատ վայրերում երկրագործական դասակարգ են հաշւել այն բանւոր ազգաբնակութիւնը, որ իր հաշւով մշակում է հողի մի-մի անշան կտոր»։ Ինչպէս յայտնի է, գիւղում երբեմն ոչ մի բան այնքան դժւար չէ, որքան որոշել, թէ ինչ դասակարգի պէտք է վերագրել ազգաբնակութեան մի ամբողջ շերտ-արդիւնաբերական աշխատանքով զբաղւողներին թէ երկրագործներին։ Եւ իրաւ գիւղում ապրողներից շատերը միաժամանակ թէ արդիւնաբերողներ են և թէ երկրագործներ։ Հասկանալի է, որ հաշւողները, որոնք

ման էական և բնորոշ առանձնայատկութիւնը կազմում է արդիւնաբերութեան մէջ գործադրւող շարժիչների (двигатели) ույժի աճումը։ Եթէ նոյն իսկ մի կողմ թողնենք փոխադրական գործը (տրանսպորտ), այդ դէպքում ևս 1846 թւից մինչև այժմ երկրում գործադրւող շոգեմեքենաների ույժը աւելի քան տասնապատկւել է 40,000-ից աճելով մինչև 430,000։ Հետևեալ հաշիւը կարող է գաղափար տալ արտադրող ույժերի այն աճման մասին, որ վկայում են այս թւերը։ Շոգեձիու ույժը սովորաբար հաշւում են հաւասար տասը բանւորի ույժին. ուրեմն այս հիման վրայ 1862 թւի արդիւնագործութեան ամբողջ արտադրողական ույժը հաշւում էր 400,000+660,000=1,060,000 հասակաւոր բանւորներին. իսկ այս վերջին թիւը ներկայացնում է հէնց այն ազգաբնակութիւնը, որ այժմ զբաղւած է արդիւնագործութեամբ (1,102,000 մարդ, 1896 թ.)։ Այսպէս ուրեմն այն ամբողջ շարժիչ ույժը, որ հիմա պարփակւած է մեքենաների մէջ, արտադրող ընդունակութիւնների համար մի զուտ յաւելումն է։ Այդ շարժիչ ույժը հաշւում էր 430,000 ձիու ույժ։ Սա նշանակում է, որ եթէ մենք մեր տրամադրութեան տակ չունենանք շոգեշարժ մեքենաներ, այդ դէպքում արտադրութեան ժամանակակից մակերևոյթին հասնելու համար մեզ կը հարկաւորւէր լրացուցիչ 430,000×10=4,300,000 բանւոր. (այս եզրակացութիւնը ի հարկէ զուտ էմպերիքական նշանակութիւն ունի)։

Այսպիսով Բէլգիայի արդիւնագործական զարգացումը կրկնում է (վերարտադրում է) նոյն էւօլիւցիան, ինչ որ նկատւում է բոլոր կապիտալիստական երկրներում։ Պրօլետարիատը աճում է արագ քան ազգաբնակութիւնը, իսկ միւս կողմից մեքենայական արդիւնաբերութիւնը զարգանում է աւելի արագ քան պրօլետարիատը։ Սրա հետևանքը լինում է այն, որ ընկնում են աշխատանքի հին ձևերը—տնային և արհեստաւորական ար-

---

քիչ են հոգում աշխատանքի գիտական բնաւորութեան մասին, նրանց անխտիր վերագրում են այս կամ այն կատեգորիային։

Այս պատճառով էլ մենք կարող ենք միայն որոշ զգուշութեամբ ընդունել ժողովրդական և երկրագործական ժողովրդահամարի հաշիւները—ի հարկէ վերոյիշեալ կէտերի վերաբերմամբ։ Այլ դրութեան մէջ է 1896-ի արդիւնաբերական և արհեստաւորական ժողովրդագրութիւնը, որ կատարւել էր համաձայն խիստ հրահանգների և միանգամայն գիտական հիմունքների վրայ։

դիւնագործութիւնը, իսկ գործարանային արդիւնաբերութիւնը՝ խոշոր գործարաններում կենտրոնացած արդիւնագործութիւնը դառնում է ազգային արդիւնաբերութեան տիրապետող ձև։

Մեր ասածները միանգամայն կը պարզւեն, եթէ ընդհանուր տեսութիւնից անցնենք գոյութիւն ունեցող դրութեան և արդիւնաբերական գործունէութեան զանազան ճիւղերում կատարւող բարեփոխութիւնների առանձնակի ուսումնասիրութեան։

Այստեղ մենք կաշխատենք խուսափել աւելորդ մանրամասնութիւններից։ Մի և նոյն ժամանակ 1896 թւի ժողովրդագրութեան նման տնային արդիւնաբերութիւնը կամ ընդհանուր արհեստանոցներում կատարւող արդիւնաբերական աշխատանքը մենք կը զատենք բառիս նեղ մտքով հասկացւող արդիւնաբերութիւնից։

§ 1. Տնային արդիւնաբերութիւնը

Սրանից մօտ վաթսուն տարի առաջ, երբ կազմւում էր 1846 թւի ժողովրդագրութիւնը, տնային արդիւնաբերութեամբ զբաղւած էր մօտաւորապէս երկու հարիւր հազար բանւոր, իսկ արհեստանոցներում, գործարաններում կամ հանքերում զբաղւած բանւորների թիւը երեք հարիւր հազարից մի փոքր աւելի էր։ Հետևաբար ամեն մի 5 մարդոց երկուսը աշխատում էին տանը ի հաշիւ գործարանատիրոջ, որոնք մեծ մասամբ իրանց արդիւնագործական աշխատանքին միացնում էին և երգրագործութիւնը *)։

1896 թ. դուրսը աշխատող բանւորների թիւը անցնում էր 700,000-ից, մինչդեռ տանը աշխատող բանւորների թիւը հասնում էր ամենաշատը հարիւր քսան հազարի։

Սա երևում է հետևեալ աղիւսակից, որ ցոյց է տալիս, թէ ինչպէս են դասաւորւում ձեռնարկողներն ու բանւորները ըստ արդիւնագործութեան բառիս նեղ մտքով, տնային արդիւնագործական աշխատանքի և ըստ ընդհանուր արհեստանոցների արդիւնագործական աշխատանքի (բանւորները առանձին վճարով վարձում են ձեռնարկողներից մեքենայական յարմարութիւններ այդ նպատակին յատկացրւած արհեստանոցներում)։

---

*) Receusement des iu duvtries et des metisr (31 actabre 1896)· Analyse des vol. I et II, p. 41.

Ձեռնարկութիւնների կարգը	Ձեռնարկութիւնների և նրանց ճիւղաւորութիւնների թիւը	Գործատէրեր	Կառավարիչներ, ծառայողներ և այլն	Գործարանների, արհեստանոցների և այլ բանւորները.	Տանը զբաղւող բանւորները.	Միջնորդները.	Ձեռնարկողների ընտ. անդամները.	Ընդ. արհեստանոց. զբաղ. բանւորները.	Ընդ. թիւը մարդոց: Բացարձակ թիւը.	%
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.
Արդիւնաբերութիւնը բառիս նեղ մտքով	231420	232534	37834	664035	—	—	34471	—	968874	8790
Տնային արդիւնաբերութիւնը	94334	5461	1260	1) 6712	101156	1372	16161	—	132122	1190
Արդիւնագործական աշխատանքը ընդհանուր արհեստանոցներում։	335	—	9	849	—	—	24	336	1248	0,11
Երեք կարգերը միասին	326089	237995	39103	671596	101156	1372	50656	366	1102244	100,00.

Այսպիսով այն ժամանակ երբ բառիս նեղ մտքով հասկացւող արդիւնագործութեամբ զբաղւած բանւորների թիւը 1846-1896 թ. ժամանակամիջոցում աւելի քան կրկնապատկւել է, տանը զբաղւող բանւորների թիւը ընդհակառակն պակասել է մինչև 40 %։

Այսպիսի նւազման պատճառն այն է, որ Ֆլանդրիայում համարեա անհետացել են 300,000-ից աւելի կտաւատ մանող տղամարդիկ և կանայք. ըստ 1846 թ. ժողովրդագրութեան այս կատեգօրիայի բանւորների թիւը հասնում էր 115,000, 1896 թ. նրանցից մնացել էին 262 մարդ, իսկ ներկայումս, անկասկած, հազիւ թէ կարելի լինի նրանցից գոնէ մէկին գտնել։

Եթէ տնային արդիւնագործութեան մի ճիւղերում նոյնպէս նւազում էր նրանցով զբաղւողների թիւը, ինչպիսի նւազումը, օրի-

*) Receusemeut de 1896. Analyse pes vol. I et II p. 46

նակ, նկատելի էր մեխերի արտադրութեան (—91%), տնայնագործական ջուլհակութեան (—59%), կանեակի պատրաստելու (—10%) արհեստների մէջ, բայց դրանց փոխարէն աւելանում էր այն բանւորների թիւը, որոնք զբաղւած էին ուրիշ արհեստներով, ինչպէս օր. դերձակութեամբ, զինագործութեամբ և ձեռնոցներ պատրաստելով *)։

Բայց այնտեղ, որտեղ տնային արդիւնագործութիւնը շարունակում է պահպանել իր գոյութիւնը, այդ բանը յաջողւում է նրբան կամ այն պատճառով, որ բանւորները—և մանաւանդ բանւորուհիները—համաձայնում են աշխատել այնպիսի մի վարձով, որով չեն կարող նրանք ապրել նոյն իսկ քաղցից, և կամ այն պատճառով, որ մեքենայական արդիւնաբերութեան խանգարում են տեխնիքական խոչընդոտներ և կամ աշխարհագրական պայմանները։ Սրա ամենահամոզեցուցիչ փաստերը տալիս է աշխատանքի դեպարտամենտի՝ 1900-902 թ. թ. հրատարակած «Euquête sur les industris á domicle en Belgiqne»։ Այս աշխատութիւնը ձեռնարկել էին—մենք ի նկատի ունենք ոչ թէ նրանց, որոնք պէտք է ի կատար ածէին, այլ նրանց, որոնց պատկանում էր այս գործի նախաձեռնութիւնը—այն գաղտնի յուսով, որ ցոյց տան, թէ տնային արդիւնագործութիւնը աշխատանքի այս «ընտանեկան և նահապետական ձևը» կարող է յաջողութեամբ մրցել բառիս խոկական մտքով արդիւնագործութեան հետ։ Բայց մենագրութիւնների մեծ մասը անողոք փաստերի առաջ ստիպւած էր խոստովանել, որ թէև բանւորի ոյժի սիստեմատիկ շահագործումը չնչին բացառութեամբ, ճիշտ է, կարող է նոյն իսկ բաւական երկարացնել տնայնագործութեան մահւան տագնապը, բայց և անկարող է շնորհիւ մեքենայական արդիւնաբերութեան յաջողութեան նրա տխուր վիճակի առաջն առնել *)։

*) 3,672 բանւոր զբաղւած են ֆաբրիկանտների մօտ, որոնք տալիս են գործը տան տանելու, 376-ին զբաղեցնում են միջնորդները, իսկ 2,674 բանւոր զբաղւած են տնային արդիւնաբերութեամբ։

**) Minishère de l'iudustpie dt du travart. Office dn travasl. Les inolnstrv à domicle eu Belgique vol. Bruxelles, Lebeyne. 1902

§ 2 Արդիւնագործութիւնը բառիս իսկական մտքով

Թէև տնայնագործութիւնը անպայման գտնւում է անկման վիճակի մէջ, բայց սա դեռ չի նշանակում, թէ Բելգիան—բացառապէս կամ խիստ խոշոր չափով արդիւնաբերական երկիր է։

Եւ, իրաւ, 1896 թ. ժողովրդագրութիւնը ցոյց է տալիս, որ գործարաններում, հանքերում, արհեստանոցներում և այլն զբաղւած եօթը հարիւր հազար բանւորների և բանւորուհիների դիմաց հաշւում էին 231,000 արդիւնաբերական ձեռնարկութիւններ. ուրեմն ամեն մի ձեռնարկութեանը միջին թւով 3 բանւորից աւելի չի գալիս։

Բայց շտապում ենք նկատել, որ այս թիւը միանգամայն չունի այն նշանակութիւնը, ինչ որ աշխատում են նրան տալ այն մարդիկ, որոնք ակնյայտնի իրականութեան հակառակ ցանկանում են ժխտել արդիւնաբերական կենտրօնացումը։

Անկասկած, որքան զարգանում է աշխատանքի բաժանումը, աւելանում է մի գործին մասնագիտականացած բանւորների թիւը, որքան աւելի արդիւնաբերական բնաւորութիւն են ձեռք բերում նախկին տնայնագործութեան ձևերը—օր. հաց թխելը կամ գարեջուր եփելը—այնքան աւելի անհրաժեշտօրեն առաջ է գալիս և ձեռնարկութիւնների ընդհանուր թւի բազմանալու տենդենցը։ Սակայն միայն սօցիալիզմի նախապաշարւած և անպայման հակառակորդը կարող է չը տեսնել, որ տնտեսական զարգացումը միանգամայն չը հասկանալու ամենալաւ միջոցն է խառնել միատեղ միանգամայն տարբեր արդիւնաբերութիւնները, ինչպէս օր. հանքերի շահագործումը, շաքարէ արդիւնագործութիւնը, մեքենաների կառուցումը, քաղցրաւէնիքների արդիւնաբերութիւնը կամ մօդայի առարկաների պատրաստելը, որպէսզի այսպիսով վերջապէս յանգինք այն եզրակացութեան, թէ Բէլգիան մանր արդիւնաբերութեան երկիր է, որովհետև այտեղ ամեն մի գործարանին կամ արհեստանոցին միջին թւով 3 բանւորից աւելի չի գալիս։

Ընդհակառակն, եթէ ցանկանում են ճիշտ գաղափար կազմել, թէ որ աստիճան կենդրօնացման է հասել բելգիական արդիւնաբերութիւնը, դրա համար ընդհանուր միջին թիւը պէտք է

վերլուծել նրա բաղկացուցիչ տարրերի *)։ Այսպէս վարւելով կը
ստանանք հետևեալ դրութիւնը. 1896 թ. ցուցակագրւած բոլոր
231,420 ձեռնարկութիւններից և նրանց ճիւղաւորութիւններից
160,411 կամ որ մի և նոյն է թէ աւելի քան երկու-երրորդը (այն
է 69,32%) գործում էին առանց բանւորների, միայն ընտանիքի
մէկ կամ մի քանի անդամների օգնութեամբ և կամ առանց նոյն
իսկ նրանց մասնակցութեան։

Սա ամբողջ մի բանակ է, բաղկացած իրանց արհեստով ապ-
րող մարդկանցից. այստեղ մենք տեսնում ենք օր. տասը հազար
հիւսն և ատաղձագործ, նոյնքան հացագործ և կօնդիտեր. երեսուն
և հինգ հազար կօշկակար, երեսուն և եօթը հազար հագուստ կա-
րող։ Եթէ հանենք այս արհեստաւորներին, որոնք յամենայն դէպս
միայն ըստ երևոյթին են ներկայացնում իբրև անկախ արտա-
դրողներ (որովհետև ով գիտէ նրանցից քանիսը կապւած են «ա-
ներևոյթ կապերով» կապիտալիզմի հետ), այն ժամանակ կը մնան
միայն 70,991 (կամ մէկ երրորդականից պակաս) ձեռնարկութիւն-
ներ իրանց ճիւղերով, որոնք զբաղեցնում են առնւազն գոնէ մի
բանւոր, բառիս իսկական մտքով։

Այժմ տեսնենք թէ ինչպէս են բաժանւում այս ձեռնարկու-
թիւնները ըստ ծաւալի—այն է՝ մանր, միջին, խոշոր և խիստ
խոշոր ձեռնարկութիւնների. (այսպիսի դասաւորութիւնը ընդու-
նում է և ժողովրդագրութիւնը)։

Մանր արդիւնաբերութեան մէջ (որոնք ունեն 5-ից պակաս
բանւոր) մենք տեսնում ենք 54,997 ձեռնարկութիւն և ձեռնար-
կութիւնների բաժանմունքներ—և 95,926 բանւոր. միջին արդիւ-
նաբերութեան մէջ (4-ից աւելի և մինչև 50 բանւոր ունեցող՝)
13,838 ձեռնարկութիւններ և բաժանմունք—172,971 բանւորով,
խոշոր արդիւնաբերութեան մէջ (50-500 բան.) 2,023 ձեռնարկու-
թիւն և բաժանմունք և 294.984 բանւոր. վերջապէս շատ խոշոր
արդիւնաբերութեան մէջ (500-ից աւելի բանւոր) 133 ձեռնարկու-
թիւն և բաժանմունք 100,154 բանւորով։ Սակայն պէտք է նկա-
տել, որ այս թւերը վերաբերում են ձեռնարկութիւններին և ձեռ-
նարկութիւնների բաժանմունքներին, այսինքն մի և նոյն գործարանում

*) Recensement de 1896. Analyse des vol IV et V, p. 12 et suivantes.

միացած տարբեր ձեռնարկութիւնների, ինչպէս օր. մի և նոյն գործարանում շաղկապւած մանել—հիւսելու ձեռնարկութեանը: Բնական է, որ ըստ մանր և խոշոր կատեգորիաների այս ստորաբաժանումը բաւականաչափ կը կերպարանափոխւի, եթէ ձեռնարկութիւնները համախմբենք այնպէս, որ բարդ ձեռնարկութիւնները վերարտադրենք այնպէս, ինչպէս նրանք գոյութիւն ունին իրականութեան մէջ:

1896 թ. ժողովրդագրութեան IV և V հատորների անալիզը փորձում է այդպէս համախմբել, ի հարկէ մօտաւոր թւերի օգնութեամբ, և ստանում է հետևեալ պատկերը *): (Տես 15-րդ երես):

Հեշտ է նկատել, որ խոշոր և շատ խոշոր արդիւնաբերութիւնը թէև բոլոր ձեռնարկութիւնների թւի համեմատ ներկայացնում է չնչին մասը (0,73%), բայց և այնպէս նա գրաւում է ամբողջ բանւորութեան համարեա երկու երրորդական մասը (61,75%):

Պէտք է նկատել և այն, որ մանր և միջին ձեռնարկութիւնների որոշ մասը,—գուցէ և մեծագոյն մասը— իրականապէս ոչ այլ ինչ է, եթէ ոչ կապիտալիստական արդիւնաբերութեան մի յաւելուած, գլխաւոր արդիւնաբերութեան բնի մի հասարակ ճիւղաւորութիւն: Հէնց այս երևոյթի վրայ պէտք է դարձնել գլխաւոր ուշադրութիւնը, երբ կամենում են չափել արտադրութեան կամ կապիտալի կենտրոնացման իսկական յաջողութիւնները:

Դժբախտաբար այս հարցին վերաբերող մեր ունեցած ստատիստիքական տեղեկութիւնները ընդհանրապէս անբաւար են և դժւար համեմատելի:

1846 թ-ից մինչև 1896 թ. կենտրոնացումը նկատելի է արդիւնաբերութեան հետևեալ ճիւղերում—որոնց վերաբերմամբ լաւ թէ վատ կարելի էր համեմատութիւն անել—այն է՝ текстильное արտադրութիւն, երկաթէ մշակումը, ճենապակու և յախճապակու պատրաստելը, լուցկու արտադրութիւնը, թղթէ արդիւնաբերութիւնը: Ընդհակառակն, ցինկի մշակման, ապակու և քիմիական արդիւնաբերութեան, շաքարի արտադրութեան, ծրխախոտի արդիւնաբերութեան և տպարանական գործի ապարէ-

*) Receucewent de 1896· Analyse de vol IV et V, p. 26

Արդիւնաբերութիւն բաժին նեղ մտքով (առանց վարձու բանւորների)	Ձեռնարկութիւններ	Գործատէրեր	Կառավարիչներ և ծառայողներ	Բանւորներ	Գործատէրերի ընտանիքների անդամներ	Ընդամենը
Շատ փոքր արդիւնաբերութիւն (առանց վարձու բանւորների)	160000 (70,69) %	164000	500	—	26000	190500 (19,66) %
Մանր արդիւնաբերութիւն (1,2,3, և 4 բանւորներով)	517000 (22,84)	55000	5000	92000 (13,85)	8471	160471 (16,56)
Միջին արդիւնաբերութիւն (5-49 բանւորներով)	13000 (5,74)	13000	17000	1620000(24,40)	—	1923000 (19,85)
Խոշոր արդիւնաբերութիւն (50 - 499 բանւորներով)	1466 (0,65)	534	10500	250000 (37,65)	—	261034 (26,96)
Շատ խոշոր արդիւնաբերութիւն (500 և աւելի բանւորներով)	184 (0,08)	—	4534	160035 (27,10)	—	164569 (16,97)
Բոլոր 5 կատեգորիաները միասին (ճիշտ թւերով)	226350	232534	37834	664035	34471	968874

գում նկատելի է արդիւնաբերական գործարանների թւի անընդհատ աճումը *)։

Բայց պատկերը փոխւում է և բոլորովին այլ հետևանքներ են ստացւում, երբ փոխանակ դիմելու արդիւնաբերական յեղափոխութեան առաջին քայլերին—քննելու լինենք արդիւնաբերութեան գլխաւոր ճիւղերի զարգացումը Բելգիայում 1870-1900 թ. թ. շրջանում։

Այսպիսի մի համեմատութիւն հնարաւոր է անել մի կողմից երկաթուղիների, միւս կողմից այն զանազան արտադրութիւնների վերաբերմամբ, որոնց ստատիստիկայով զբաղւում են լեռնային և ֆինանսական վարչութիւնները։

1870 թ. Բելգիական պետութիւնը շահագործում էր 869 կիլօմետր երկաթուղու ցանց ընդդէմ 1,582 կիլօմետրի, որ շահագործում էին մասնաւոր ընկերութիւնները։ Այժմ երկաթուղային ցանցի կենտրօնացման, շահագործման միօրինակութեան օգուտներն այնքան ակներև են, որ պետութիւնը մէկը միւսի յետևից վերադնում է (выкупать) մասնաւոր անհատներին տւած կօնցեսսիաները—և պէտք է ասել որ այդ վերադնումը նա կատարում է հարկատու ազգաբնակութեան համար չափազանց ծանր պայմաններով. 4,552 կիլօմետր տարածութիւն ունեցող երկաթուղիական ցանցից այժմ պետութիւնը շահագործում է 4,021 կիլօմետր, 531 կիլօմետրի դիմաց, որը—մինչև նոր կազմը—մնում են մասնաւոր մարդկանց ձեռքին **)։

Նոյնչափ պարզ նկատելի է կենտրօնացման տենդենցը և այն արտադրութիւնների մէջ, որոնք ենթարկւած են ակցիզի տուրքին և կամ ենթակայ են լեռնային տեսչութեան։

Սա ցոյց է տալիս հետևեալ աղիւսակը, որտեղ բերւած են արդիւնաբերութեան յիշեալ ճիւղերի մասին եղած թւերի ընդհանուր գումարները։

Քարածխի հանքերը	1870 թ.	1900 թ.
Հանքերի թիւը . . .	169	. 118
Բանւորների թիւը . .	91,993	. 132,749
Ամեն մի հանքին հասնող բանւորի թիւը	554	. 1,125

*) Analyse des vol I et II. du recensement de 1896 թ. 47—48.
**) Amuavre statipue de la Belgigua. 1903. Brnxellis 1914.

Թարհատելու գործարաններ	1870 թ.	1900 թ.
Գործարանների թիւը . .	2319	1579
Բանւորների թիւը . .	23662	37281
Ամեն մի գործարանին հասնող բան.-ի թիւը	10	24

Հալելու վառարանները

Վառարանների թիւը . . .	37	17
Բանւորների թիւը . .	4764	3637
Ամեն մի վառարանին հասնող բան. թիւը	129	214

Պողպատ ձուլելու և երկաթագործական գործարանները

Գործարանների թիւը . .	121	69
Բանւորների թիւը	4048 (+մօտ 1500 պատրաստում)	11162
Ամեն մի գործարանին հասնող բան. թիւը	46	162

Ապակու գործարանները

Գործարանների թիւը . .	56	55
Բանւորների թիւը . . .	6999	22780
Ամեն մի գործ. հասնող բան. թիւը .	124	414

Նոյն երևոյթը նկատելի է և արդիւնաբերութեան այնպիսի ճիւղերում, որոնք ենթարկւում են ակցիզի տուրքին. այնտեղ ևս, թէև արտադրութիւնը բաւականաչափ մեծացել է, այնուամենայնիւ արդիւնաբերական գործարանների թիւը պակասել է. այսպէս՝ օղի մաքրելու գործարանների թիւը 457-ից իջել է 274-ի, շաքարի գործարաններինը՝ 131-ից մինչև 121, շաքարը մաքրելու գործարաններինը՝ 43-ից մինչև 25, իսկ գարեջրի գործարանների թիւը, ընդհակառակն, 2528-ից բարձրացել է մինչև 3253 *)։

Առհասարակ 1870—1900 թ. թ. ժամանակաշրջանի համար

*) Վերը բերած համեմատական աղիւսակի թւերը մենք վերցրել ենք 1903 թւի Annuaire statistique-ի 338, 339, 370 երեսներից. Բրիւսէլ 1904.

2867-60
1003
12423
ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ С.С.Р.А Публичная Библиотека 7/XI. 1922 имени А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ունեցած մեր տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ բանւորների և արտադրւած ապրանքների քանակութեան աճման հետ զուգընթացաբար, մեծ կամ փոքր չափով, նւազում է ձեռնարկութիւնների թիւը։

Այսպիսի մի տեխնիքական կենտրօնացումն, ինչպիսին է մանր ձեռնարկութիւնների դուրս մղումն և խոշոր ձեռնարկութիւնների փոխարինումը, այնուամենայնիւ դեռ չէ ապացուցանում, թէ հասել է կենտրօնացման պրօցեսի այն վերջին աստիճանը, որ մենք նկատում ենք ամենախոշոր արտադրութիւնների մէջ։ Եթէ Բելգիայում դեռ գոյութիւն չունի ամերիկական տրեստների համապատասխան, ձեռնարկութիւնների «ձուլումն», բայց և այնպէս այժմ իսկ կարելի է դիտել, թէ ինչպէս ծաւալւում են անանուն ընկերութիւնները, կազմւում են զանազան պայմանաւորումներ, pools, կարտելներ, որոնք վերջին տարիների ընթացքում այնքան արագութեամբ բազմանում են և միևնոյն ժամանակ նախապատրաստում են արդիւնաբերական մօնօպօլիաների ծնունդը։

Ճիշտ է ակցիօներական ընկերութիւններին պատկանող ձեռնարկութիւնները կազմում են—կամ աւելի ճիշտը կազմում էին 1896 թւի արդիւնաբերական գործարանների ընդհանուր թւի 1 տոկոսից պակաս (1,584 կամ 0,08 տոկոս). բայց միայն այդ ձեռնարկութիւնների մէջ ընդհանուր արդիւնաբերական բանւորութիւնից (664,035) զբաղւած էին 278,237 մարդ (41,90 տոկոս)։

Միւս կողմից Deleneer-ի ուսումնասիրութիւնը «Բելգիայի արդիւնաբերական սինդիկատներ»-ի մասին մանրամասնօրէն ցոյց է տալիս, թէ ինչպէս կապիտալիստական ձեռնարկութիւնները արտայայտում են համախմբւելու տենդենցը։ Լինի այդ այն նպատակով, որ կարողանան կռւել բանւորների պահանջների դէմ, կամ որպէս զի գները դարձնեն կայուն ապրանքները վաճառելիս և հում նիւթերը գնելիս, կամ վերջապէս, որպէսզի կենտրօնացնեն ամբողջ վաճառքը, վաճառականական կազմակերպութիւնը, արտադրողներին վերապահելով միայն իրանց գործարանների տեխնիքական ղեկավարութիւնը։

1901 թ. դեկտ. 21-ին բելգիական արդիւնաբերութիւնը հաշւում էր ապրանքները վաճառելու եօթ գրասենեակ։ Նրանցից կարևորագոյններն էին, կօքսի (անգլիական մաքուր քարածուխ)

սինդիկատը, որ համախմբել էր 22 ընկերութիւն և ծախում էր երկրի ամբողջ արդիւնաբերութեան կէսը. հայելիներ վաճառելու գրասենեակը, որ ներկայացուցիչ էր 8 բելգիական հայելու գործարանների, կամ որ միևնոյն է թէ ամբողջ ազգային արդիւնաբերութեան. Լիէժի ածխի սինդիկատը (որ կազմւել էր յայտնի Հռենոս-Վեստֆալիայի սինդիկատի օրինակով) վերահսկում էր Լիէժի շրջանի երեսուն ընկերութիւնները. Նրա արտադրութիւնը 1899 թ. հասնում էր 5,059,944 տօննի, որ կազմում է յիշեալ շրջանի ամբողջ արտադրութեան 88 տոկոսը։

Չը պէտք է մոռանալ և այն, որ Բէլգիան դեռ նոր է մըտնում սինդիկատների զարգացման նախնական շրջանը, մինչդեռ ուրիշ երկրները, օր. Միացեալ-Նահանգներն ու Գերմանիան, այդ ուղղութեամբ շատ են առաջադիմել։ Այդ ուղիի վրայ կանգնելը անհրաժեշտութիւն կը դառնայ բէլգիական կապիտալիստների ինչպէս և համաշխարհային շուկայում գտնւող նրանց մրցակիցների համար։ Եւ նրանք ըստ երևոյթին սկսում են այդ բանը հասկանալ։ Ահա, օրինակ, ինչպիսի ճառով դիմեց արդիւնաբերութեան օժանդակելու ընդհանուր ընկերութեան նախագահ M. Beyens, Բելգիայի գահի վրայ բազմող extra dry-ին, երբ վերջինս 1895 թ. յունվարի 1-ին Բրիւսէլի պալատում ընդունում էր նոր տարւայ շնորհաւորութիւնները. «Վերջին ժամանակները, նշանաւորագոյն եւրօպական արտադրողները ուսումնասիրում էին արդար համաձայնութեան պայմանները, որպէսզի կարողանան ոչնչացնել մրցման ստեղծած շահագործումը։

Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի և Բելգիայի կարևորագոյն ձեռնարկութիւնների միջև այս նպատակով սկսած բանակցութիւնները յաջող ընթացք են ստացել։ Կարելի է յուսալ, որ Միացեալ-Նահանգների արդիւնաբերական գործիչները կը միանան այս համերաշխութեան»։

—

Ամփոփենք մեր ասածները։

Բելգիան ինչպէս և Սաքսոնիան, որը համեմատական ստատիստիկան մեծ մասամբ չի յիշատակում իբրև ինքնուրոյն պետական միութիւն,—Բելգիան Եւրոպայի ամենաարդիւնաբերական երկիրն է։

Ընդհանուր առևտրի բացարձակ թւերով նա գրաւում է

հինգերորդ տեղը—Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա, Նեդերլանդիայից յետոյ, բայց գնում է Ռուսաստան, Իտալիա, Աւստրօ-Ունգարիա և Իսպանիայից առաջ։

Ամեն մի բնակչի վրայ ընկնող ներմուծման և արտահանութեան թւերի վերաբերմամբ Բելգիան գրաւում է առաջին տեղը, նոյնպէս առաջին տեղն է գրաւում և իր ազգաբնակութեան խըտութեամբ, երկաթուղային ցանցի երկարութեամբ և այն նշանակութեամբ, որ ազգային գործունէութեան միւս ճիւղերի համեմատութեամբ, այնտեղ ձեռք է բերել արդիւնաբերութիւնը։

Երեք միլլիոնից մի փոքր աւելի է հաշւում այն Բելգիացիների թիւը, որոնք ունեն որոշ պրօֆեսսիա, հաշւելով այս թւի մէջ 109,000 սեփականատէրերին, բանտեօրների, թօշակաւորներին կամ կապիտալ ունեցողներին (մնացածը կազմում են երեխաները, միջոցներից զուրկ հիւանդները և մանաւանդ կանայք, որոնք ըզբաղւած են տնային տնտեսութեամբ). ըստ 1896 թ. արդիւնաբերական ժողովրդագրութեան ամիջապէս արդիւնաբերութեամբ զբաղւածների թիւը հասնում է 1,000,000. իսկ ըստ 1900 թ. ժողովրդագրութեան՝ 1,300,000-ից աւելի,

Այս թւից ընդհանուր առմամբ 238,000 մարդոց կարելի է երկու խմբի բաժանել. մէկ երրորդը կազմում են գործատէրերը, կառավարիչները, տեխնիքական ծառայողները, իսկ երկու երրորդը՝ արհեստաւորները, և «անկախ բանւորները», որոնք սեփական միջոցներով են աշխատում. մնացած, տղամարդ թէ կին, բանւորները զբաղւած են իրանց տանը կամ գործարանում։

Ըստ 1900 թւի ժողովրդագրութեան 1,133,590 արդիւնաբերական բանւորներից կանայք կազմում էին 268, 237, իսկ տղամարդիկ՝ 865,353։

Ակներև է, որ արդիւնաբերութեան այս խմբիցն են դուրս գալիս սօցիալ-դէմօկրատիայի ամենագիտակից և ամենից շատ գործունեայ տարրերը, բայց ամբողջ պրօլետարիատի թիւը որոշելու համար, պէտք է սրան աւելացնել երկրագործական բանւորներին, ինչպէս և մանր ծառայողներին տան, ծառաներին և արդիւնաբերական աշխատանքով զբաղւած բանւորներին։

Այս խմբերի համար 1900 թւի ժողովրդագրութիւնը տալիս է այսպիսի թւեր։

	Տղամարդիկ	Կանայք	Ընդամենը
Ամեն տեսակ բանւորներ որոնք զբաղւած են գիւղական, այգեգործական և անտառային տնտեսութեամբ	192,012	55,458	247,470
Մանր ծառայողները, ծառաները	206,415	223,718	430,133
	398,427	279,176	677,603

Այսպէս ուրեմն ամբողջ պրօլետար մասսաների թիւը կազմում է ընդհանուր առմամբ 1,800,000 (նրանցից նոյնպէս ընդհանուր առմամբ 1,200,000 տղամարդ) ընդդէմ երեք միլլօնից մի փոքր աւելի կազմող այն անհատների, որոնք ունեն որոշ պրօֆեսսիա կամ գրաւած ունեն ռոճիկով պաշտօն. և այս յարաբերութիւնը, որ արդէն ինքն՝ըստ ինքեան բաւական աչքի ընկնող է, աւելի ևս նշանակալից կը դառնայ, եթէ այսպիսի որոշ, դիֆֆերենցիացիայի ենթարկւած պրօլետարիատին աւելացւի ծառայութեան մէջ գտնւած զինւորներին, մանր աստիճանաւորներին և մանր հողաբաժիններ (պարցելլներ) մշակողներին, աղքատ սեփականատէրերին, հատով առևտուր անողներին, որոնք իջել են մինչև խոշոր ֆիրմաների հասարակ գործակալների դըրութիւնը և դեռ պահպանում են ինքնուրոյնութեան միայն ըստւերը, որոնք եթէ ոչ ըստ ձևի, գոնէ ըստ էութեան ոչ այլ ինչ են, եթէ ոչ պրօլետարներ։

Եթէ յիշեալ բոլոր տարրերը, միմեանց արհամարհելու և իրար դէմ կռւելու փոխարէն, համախմբւէին ընդհանուր գործողութիւնների համար, այս հանգամանքն արդէն բաւարար կը լինէր, որպէս զի պրօլետարական շարժումը հէնց այժմեանից դառնար ըստ «Կօմունիստական Մանիֆեստի» արտայայտութեան—ահագին մեծամասնութեան շարժում, յօգուտ ահագին մեծամասնութեան»։

Գլ. II.

ԲԱՆՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Մի ժամանակ Կարլ Մարքսը գրում էր, թէ Բելգիան—կապիտալիստական արքայութիւնն է։ Սրան կարելի է աւելացնել որ նա՝ բանւորների համար, եթէ չասենք դժոխք, քաւարան է, որովհետև թէև պրօլետարիատը կարողացաւ մի փոքր բարձրացնել իր «standart of life» («կեանքի մակերևոյթը») այնուամենայնիւ բելգիացի ձեռնարկողները ուրիշ ժողովուրդների մրցման դէմ կռուելու գլխաւոր միջոցը շարունակ համարում են բանւորական օրի սիստեմատիկ երկարացումը և բանւորավարձի մինիմումի կրճատումը։

Սրա անհերքելի ապացոյցները տալիս են այն սիստեմատիքական աղիւսակները, որ Վաշինգտոնի «Աշխատանքի դեպարտամենտը» ի ցոյց էր դրել Սէն-Լուիում և այնուհետև հրատարակել էր 1904 թւին իր «Բիւլլետէն»-ի դեկտեմբերի համարում։

Այս ստատիստիքական աղիւսակների ու դիագրամների նպատակն է համեմատել արդիւնաբերական տասն և երեք կարևորագոյն ճիւղերի ամեն մի ժամի բանւորավարձի չափը և շաբաթական բանւորաժամերի թիւը երկու կամ երեք վայրերում, որոնք ընտրւած են այնպիսի կարևորագոյն արդիւնաբերական երկրների շարքից, ինչպէս են Միացեալ-Նահանգները, Անգլիան, Գերմանիան, Ֆրանսիան, Բելգիան։

Այս աղիւսակներում ցուցակագրւած արդիւնաբերութիւնների բոլոր ճիւղերում (բացի երեք կամ չորս ճիւղերից) Բելգիան առաջին տեղն է գրաւում իր բանւորական օրի տևողականութեամբ և առանց բացառութեան բոլոր ճիւղերում գրաւում է նա վերջին տեղը իր բանւորավարձի չափով։ Այս թւերը կարելի է ընդունել ի հարկէ միայն cum grano salis։ Թւերի այսպիսի հետևանքների վրայ նախ և առաջ ազդել է այն քաղաքների ընտրութիւնը, որտեղ «Աշխատանքի դէպարտամենտը» կատարել է իր «հետախուզութիւնը», միևնոյն պայմաններում անւանական բանւորավարձը պէտք է լինի աւելի բարձր Բերլինում, Փարիզում և Լօնդօնում, քան Բրիւսէլում, որովհետև առաջին քաղաքներում

կեանքն էլ անհամեմատ աւելի թանկ է. այնուհետև դարձեալ նոյն պատճառաբանութեամբ հիմք կայ սպասելու, որ խոշոր սխալ կը կատարենք երբ համեմատում ենք անւանական բանւորավարձը մի կողմից ազատ առևտուր ունեցող երկրում, ինչպիսին է Բէլգիան, և միւս կողմից օր. Ֆրանսիայի, Գերմանիայի, Միացեալ-Նահանգների նման երկրներում, որտեղ գոյութիւն ունի մաքսային հովանաւորութիւնը (և նոյն իսկ ծայրայեղ պրօտեկցիօնիզմ)։ Վերջապէս չը պէտքէ մոռանալ, որ եթէ բելգիացի բանւորները հիմք ունեն նախանձելու Անգլիայի և Ամերիկայի իրանց ընկերների կեանքի պայմաններին (և նոյն իսկ Ֆրանսիայի և թերևս Գերմանիայի բանւորներին, թէև վերջին ենթադրութիւնը մեզ կասկածելի է թւում), բայց միւս կողմից նրանց դրութիւնը կարող է նախանձելի երևալ իտալացիներին և արևելեան Եւրոպայի բանւորներին։

Բայց և այնպէս չը նայելով այս վերապահումներին, այնուամենայնիւ դժբաղտաբար անկասկած է այն փաստը, որ Բելգիան —երկար բանւորական օրի և ցած բանւորավարձի երկիր է։

§ 1 Բանւորական օրը

1896 թ. արդիւնաբերական ժողովրդագրութիւնը նւիրում է մօտ տասը հազար երես 71,000 ձեռնարկութիւնների ուսումնասիրութեան, ձեռնարկութիւնների, որտեղ զբաղւած է առնւազն մի բանւոր։ Նա պարունակում է իր մէջ իւրաքանչիւր գործարանի բանւորութեան ամեն մի կատեգօրիայի վերաբերմամբ բանւորավարձի և աշխատանքի ժամերի թւի մասին ամենաճշգրիտ տեղեկութիւններ *)։

Ուսումնասիրութեան հեղինակները բանւորական օրի տևողականութիւն ասելով հասկանում էին ամենօրեայ աշխատանքի իսկական տևողականութիւնը, այն աշխատանքի ժամերի իսկական թիւը, որ կատարում է բանւորը, ի բաց առեալ հանգստու-

*) Լրացուցիչ տեղեկութիւնները տ. «Expose´ ge´ne´ra »-ում, որ հրատարակւած է իբրև յաւելւած «Recensement ge´ne´ral des industries et des me´tiers. Ministère de l'industrie et du travail 1892»-ի XVIII հ.։ Այս բոլոր տեղեկութիւնները մեզանից աւելի մանրամասնօրէն ի մի է գումարել Waxweiler-ը Revue d'e´conomie politique-ի 1902 թւին զետեղւած մի յօդւածում։

թեան ժամերը, հաշւելով նաև յաւելեալ աշխատանքի ժամերը։ Իսկ քարածխի հանքերի վերաբերմամբ, որտեղ աշխատանքը կատարւում է գետնի տակ, բանւորական օրը հաշւում է շախտը մտնելու մօմենտից մինչև դուրս գալու րօպէն առանց հանգստութեան ժամանակը հանելու։

Այս պատճառով և մանաւանդ տարբեր փաստերը չը շփոթելու համար, ժողովրդագրութիւնը զատ-զատ է դասաւորում քարածխի հանքերին և արդիւնաբերութեան մնացած ճիւղերին վերաբերող թւերը։

Բանւորական օրի տևողութեան վերաբերմամբ ցուցակագրւած բանւորների ընդհանուր թիւը, այն է 555,172 մ. (չը հաշւելով քարածխի հանքերը) բաժանւում է հետևեալ ձևով (այստեղ չեն հաշւած այն 50,868 բանւորները, որոնց աշխատանքի տևողութիւնը անկարելի է ճշտութեամբ որոշել)։

Այն բոլոր բանւորների ընդհանուր թիւը, որոնց բանւորական օրի տևողութիւնը որոշւած է, հաւասար է 504,304-ի։

Բան. թիւը, որոնք աշխատ. են 8 ժ. և աւելի պակաս							19,138	կմ.	3,79%
»	»	»	»	8ժ-ից աւ. մինչև 9 ժ.			34,741	«	6,88%
»	»	»	»	9	»	» 10	172,012	«	34,09%
»	»	»	»	10	»	» $10\frac{1}{2}$	77,854	«	15,44%
»	»	»	»	$10\frac{1}{2}$	»	» 11	88,166	«	17,48%
»	»	»	»	11	»	» $11\frac{1}{2}$	79,898	«	14,08%
»	»	»	»	$11\frac{1}{2}$	»	» 11	30,951	«	6,15%
»	»	»	»	12	»	»	10,544	«	2,09%

Այստեղ չեն հաշւած քարածխի հանքերը։
Գիշերւայ և ցերեկւայ աշխատանքը։

Քննենք այժմ քարածխի արդիւնաբերութիւնը։

Ի մի գումարելով բանւորների բոլոր կատեգորիաները և նախընթաց աղիւսակի նման չը տարբերելով բանւորների ոչ ըստ սեռի և ոչ ըստ հասակի, մենք ստանում ենք—հանելով այն 18461 բանւորներին, որոնց բանւորական օրի տևողութիւնը անկարելի է եղել ճիշտ որոշել,— հետևեալ բաշխումը քարածխի հանքերում։

7,748	մարդ	կամ	7,95%	աշխատ.	են	8 ժամ	և	պակաս.	
7,293	»	»	7,48	»	»	8-ից աւ. մինչ.			9
43,054	»	»	43,76	»	»	9	»	»	10
16,127	»	»	16,55	»	»	10	»	»	$10\frac{1}{2}$
9,735	»	»	9,98	»	»	$10\frac{1}{2}$	»	»	11
4,029	»	»	4,11	»	»	11	»	»	$11\frac{1}{2}$
7,481	»	»	7,68	»	»	$11\frac{1}{2}$	»	»	12
2,346	»	»	2,49	»	»	12			

Հաշւած են միայն քարածխի հանքերը։
Գիշերւայ և ցերեկւայ աշխատանքը։

Եթէ գետնի տակ անցրած ժամանակը հաշւենք համազօր իսկական աշխատանքի, այդ դէպքում բոլոր արտադրութիւնների վերաբերմամբ կլօր թւերն ընդունելով ստացւում է հետևեալը. 600,000 բանւորից, որոնց բանւորական օրի տևողութիւնը հնարաւոր է եղել որոշել։

70,000	բան. կմ.	մի փոքր աւ. քան	$\frac{1}{10}$	աշխատ.	պակաս քան	10 ժ.
215,000	»	»	» $\frac{1}{3}$	»	մօտ	10
95,000	»	մօտաւորապէս	$\frac{1}{6}$	»	»	$10\frac{1}{2}$
100,000	»	»	$\frac{1}{6}$	»	»	11
125,000	»	մի փոքր աւ. քան	$\frac{1}{5}$	»	աւելի քան	11

Ենթադրելով, որ 1896 թւից մինչև այժմ բանւորական օրի տևողութիւնը մնացել է անփոփոխ, իսկ մի քանի արտադրութիւնների բացառութեամբ այս ենթադրութիւնը համարեա ամբողջապէս համապատասխանում է իրականութեան, կարելի է ասել, որ արդիւնաբերութեան բոլոր ճիւղերի համար սովորական բանւորական օրը տևում է 10 ժամ. 8 ժամ աշխատում են միայն 27,000 մարդ կամ ընդհանուր թւի 4%։ Հազւադէպ երևոյթ չէ 11 ժամից աւելի տևող աշխատանքը. բանւորների աւելի քան $\frac{1}{5}$-մասի համար այդպիսի աշխատանքը կազմում է ընդհանուր կանոն։

Կարելի է մատնացուցել իբրև ընդհանուր երևոյթ, որ բանւորական օրի տևողութիւնը աւելի երկար է մանր արդիւնաբերութեան մէջ, քան խոշոր արդիւնաբերական ձեռնարկներում։

Այսպէս 12,630 արդիւնաբերական գործարաններից, որտեղ, բանւորական օրը 11 ժամից աւելի է, 10,000 գործարանը կամ ընդհանուր թւի $80^0/_0$-ը ունին 5-ից պակաս բանւորներ։ Միւս կողմից եթէ զբաղւած բանւորներին բաժանենք ըստ հասակի և սեռի, այդ դէպքում կը տեսնենք, որ երկար բանւորական օրը գերիշխում է գլխաւորապէս երեխաների և կանանց վերաբերմամբ, մինչդեռ տղամարդոց վերաբերմամբ յաճախ չի կարելի հանդիպել երկարատև բանւորական օրի։ Այս տարբերութիւնը ստեղծում է գլխաւորապէս ջուլհակութեան արդիւնաբերութիւնը. այստեղ են կենտրօնացած այն բոլոր կանանց $^8/_{10}$-ը և երեխաների (որոնց թիւը 15,000 է) $^6/_{10}$ մասը, որոնք—չը հաշւելով հանգստութեան ժամերը—աշխատում են 11 ժամից աւելի։ Եւ մենք ականատես կը լինենք աւելի տխուր հետևանքների, եթէ 1889 թւի դեկտ. 13-ի օրէնքից յետոյ արքայական ուկազները ջուլհակութեան արդիւնաբերութեան վերաբերմամբ չը սահմանափակւէին $11^1/_2$ ժամով երեխաների և կանանց աշխատանքը որոնք դեռ չեն հասել 21 տարեկան հասակի։

Այս է 1896 թ. ժողովրդագրութեան լուսանկարչական ճշտութեամբ ներկայացւած, այն բանւորների և բանւորուհիների դրութիւնը, որոնք աշխատում են տանից դուրս։

Անկասկած այս դրութիւնը չի կարելի մխիթարական համարել։ Բայց և այնպէս այստեղ կատարւող զեղծումները միանգամայն դատարկ բաներ են, եթէ նրանց համեմատելու լինենք այն ամենի հետ, ինչ որ կարելի է նկատել և դիտել տնայնագործութեան մէջ։

Աշխատանքի դեպարտամէնտի մենագրութիւնների կազմողները, չը նայելով իրանց պաշտօնական օպտիմիզմի, խոստովանում են, որ որոշ պերիօդներում այսպէս կոչւած «մեռած սեզօնի» թշւառութիւններին յաջորդում է բանւորական օրի ֆիզօլօգիական սահմանների չափազանց մեծ տևողութիւնը։ Ահա օր. ինչ է ասում P. Verhaegen իր «Կրուժեվաները և սեղանատան սպիտակեղէնի կարը» մենագրութեան մէջ *)։

«Իր ամբողջ ժամանակը կրուժեվաներ պատրաստելուն նւի-

*) Les industries á domicile en Belgigue. Vol. IV հ. 1 p. 158. Bruxelles, 1902.

րած բանւորուհու աշխատանքը, չը հաշւելով քնի և հանգստութեան ժամերը, տևում է 13 ժամ։ Բայց, ինչպէս ասացինք, կան շատ բանւորուհիներ, որոնք կրուժեվաների արհեստին նայում են իբրև օժանդակ զբաղմունքի և նայելով թէ որքան ժամանակ է մնում նրանց ընտանեկան տնտեսութիւնից, նւիրում են նրան 5, 6, 8 ժամ։ Կան և այնպիսի բանւորուհիներ, որոնք կրուժեվայի արհեստին նւիրում են 14 և 15-ական ժամեր, իսկ բացառիկ դէպքերում, երբ աշխատանքը շտապողական է, օրը աշխատում են և 16 ժամ»։

Նոյնպիսի փաստեր են յայտնագործում և տնայնագործութեան նւիրած միւս մենագրութիւնները։

Լիէժի շրջանի զէնագործութեան մէջ իսկական աշխատանքը տևում է 12—$12^1/_2$ ժամ. բացի դրանից այնտեղ երբեմն կարելի է տեսնել այնպիսի դէպքեր, երբ մարդիկ զբաղւած են լինում առաւօտեան ժամի 4-ից մինչև գիշերւայ 11-ը *)։ Ջուլհակային և կտաւի արտադրութեան մէջ նոյնպէս աշխատանքը տևում է 12 ժամ, թէև կան և 14 ու 15 ժամ աշխատող բանւորներ**)։ Երկրի ֆլամանդական մասում, կօշկակարական գործարաններում, միջին թւով աշխատում են տասներկու ժամ, բայց բանւորների դրութիւնը վատթարանում է շնորհիւ գիշերային աշխատանքի, որը, սովորաբար, եթէ չասենք միշտ, կատարում են բանւորները լոյս շաբաթ գիշերը, երբեմն նոյն իսկ հինգշաբթի օրւանից սկսած, յաճախ նոյն իսկ շաբաթ գիշերւանից մինչև կիրակի առաւօտ, իսկ երբեմն և մինչև ուշ առաւօտ այն օրւայ, որ նշանակւած է բանւորների հանգստութեան համար ***)։

Այսպիսով ստիպւած ենք նորից շեշտել այն հանգամանքը, որ տնայնագործութիւնը, «ընտանեկան աշխատանքը», դրանով զբաղւողների համար ոչ այլ ինչ է եթէ ոչ վատթարագոյն ճորտութիւն։ Սրան կաւելացնենք հետևեալը։

Արդիւնաբերական բանւորները իհարկէ միայն հազւագիւտ դէպքերում էն ստիպւած լինում կատարել այնքան չափազանց

*) Les industries á domcilie en Belgigue, vol. 1, p. 40.

**) Ib. vol. II p. 166

***) Ib. vol. II p. 113

շտապողական աշխատանք. բայց չը պէտք է մոռանալ, որ եթէ նրանք ապրում են արհեստանոցից կամ գործարանից որոշ տարածութեան վրայ, այդ դէպքում աշխատանքից առաջ եկած յոգնածութեանը աւելանում է և այն ճանապարհի յոգնածութիւնը, որ նրանք ստիպուած են անցնել աշխատաքից թէ առաջ և թէ յետոյ:

Շնորհիւ բանւորական գնացքի սիստեմի, բանւորներից շատերը, որոնք կապուած են իրանց գիւղին կամ ընտանեկան կապով, կամ իրանց տիրած տան և մի կտոր հողին, կարող են ապրել իրանց աշխատանքի վայրից իրաւ ոչ չափազանց մեծ հեռաւորութեան վրայ:

Այն ստատիստիքական տեղեկութիւններից, որ մեզ 1897 թ. հաղորդել է երկաթուղիների վարչութիւնը, երևում է, որ ամեն օր երկաթուղով տանից մինչև աշխատանքի վայրը և ընդհակառակն, հինգ հազարից աւելի բանւոր մօտ յիսուն կիլօմետր ճանապարհ են կտրում. իսկ մօտ չորս հարիւր բանւոր, հարիւր կիլօմետրից էլ աւելի:

Այս բանւորների մեծ մասը (որոնց թիւը վերջին ժամանակները բաւական աւելացել է)—ֆլամանդական երկրագործներ են, որոնք ամենայն օր ուղևորւում են Գենօ գաւառի քարածխի հանքերը:

Շախտից դուրս գալուն պէս, այս դժբախտ մարդիկ իսկոյն և եթ թափւում են երրորդ կարգի գնացքները. ճանապարհ ընկնելուց առաջ լուացւելու ոչ մի հնարաւորութիւն չունեն. լցնելով գնացքները, ածխի թոզից սևացած, նրանք քնում են գնացքում, աշխատելով լրացնել իրանց գիշերային անկատար հանգստութեան պակասը: Լաւ է, եթէ ճանապարհորդութիւնը դրանով էլ վերջանում է. չէ որ շատերը մինչև բնակարան հասնելը, ստիպուած են տասներկու ժամեայ աշխատանքից և չորս ժամեայ ճանապարհորդութիւնից յետոյ (երկու ժամ առաւօտեան, երկու ժամ երեկոյեան), դարձեալ մի նոր ճանապարհորդութիւն կատարել դաշտերի միջով *):

Երբ տեսնում ես մարդիկ, որոնք համաձայնւում են աշխատանքի գոյութեան այդպիսի պայմաններին, ակամայ հարց ես տալիս ինքդ քեզ, ուրեմն ինչ պիտի լինէր դրանց կեանքը նախ

*) Մանրամասնութիւնները տ. E. Wandervelde. Exode rurai et retour aux champs. p. 130. Paris, Alcan. 1903.

քան կը համաձայնւէին այդպիսի ամենօրեա ճանապարհորդութեան:

Այս հարցը պարզելու համար, որչափ խնդիրը վերաբերում է գլխաւորապէս բանւորական օրի տևողականութեան, հարկաւոր կը լինէր ճիշտ տեղեկութիւններ ունենալ այն դրութեան մասին որ այս տեսակէտից ստեղծւել է երկրագործական օրավարձով աշխատող բանւորների և բատրակների համար: Բայց շորհիւ երկրագործական աշխատանքների բնորոշ բնաւորութեան և ստատիստիքական տեղեկութիւնների անբաւարարութեան ստիպուած ենք բաւականանալ հատ ու կտոր տեղեկութիւններով և մօտաւոր հաշիւներով.

Երկրագործութեան դեպարտամենտը 1900-901 թ. յանձնարարեց պետական ծառայութեան մէջ գտնւած ագրօնօմներին երկրի զանազան շրջանների մասին մի շարք մենագրութիւններկազմել:

Ահա թէ ինչ է հաղորդում բանւորական օրւայ տևողութեան մասին ֆլանդրիային նւիրւած երկու մենագրութեան հեղինակը (պէտք է ասել, սր այս մենագրութիւնները կազմւած է ամենից աւելի բարեխիղճ կերպով և ամեից աւելի հետաքրքիրն են):

«Բանւորի օրական աշխատանքի տևողականութիւնը փոփոխւում է նայելով տարւայ եղանակին, բայց յամենայն դէպս այդ աշխատանքը տևում է չափազանց երկար և չի նպաստում բանւորների ընտանեկան զգացմունքին և մտաւոր զարգացման, մանաւանդ որ դեռ այնքան թերի է բանւորների մտաւոր լուսաւորութիւնը և կրթութիւնը: Ամառը նրանք վեր են կենում մօտաւորապէս 4 ժամին և մօտաւորապէս 5—$5^{1}/_{2}$-ին են դիմում գործի, որ, եթէ չը հաշւենք կէսօրեայ երկու ժամեայ հանգստութիւնը, տևում է մինչև երեկոյեան $8^{1}/_{2}$ ժամը: Առաւօտեան 8-ից մինչև $8^{1}/_{2}$ ժամը տրւում է երկրորդ նախաճաշիկի համար հանգիստ. նոյնպիսի հանգիստ է տրւում և կէսօրին, 4—$4^{1}/_{2}$ ժամը: Ձմեռը աշխատանքը աւելի վաղ է վերջանում և որովհետև բանւորները ընդհանուր առմամբ ոչ ախորժակ ունեն և ոչ էլ կարող են կարդալ, այդ պատճառով էլ երկար գիշերները անցնում են ընտանիքում, որտեղ ժամանակի մեծ մասը անց են կացնում քիչ արդիւնաւէտ աշխատանքի մէջ»*):

*) Ministére de l'agricultue. Service des agronomes de l'Etat Monographie de la région sablonneuse des Flandres. p. 35

Նոյնպիսի դրութիւնն են նկարագրում պետական ագրոնոմների մենագրութիւնները երկրի միւս մասերի վերաբերմամբ։ Առհասարակ կարելի է ասել, որ երկրագործական բանւորների ցերեկուայ աշխատանքը միայն մի սահման ունի. այն է արեւածագն ու արեւի մայր մտնելը։

Ամփոփում ենք մեր ասածները։

Անկախ այն բանից թէ ինչպիսի բանւորների մասին է խօսքը—արդեօք երկրագործական, տնայնագործական թէ բառիս իսկական մտքով արդիւնաբերական, բանւորական օրը բանւորների խոշոր մեծամասնութեան համար այնքան երկարատեւ է, որ եթէ նոյն իսկ չէ անցնում ֆիզիօլօգիական սահմաններից, այնուամենայնիւ ամեն պարագայում անյաղթելի խոչնդոտներ է դնում բանւորութեան մտաւոր զարգացման առաջ։ Բայց նոյն իսկ այն դէպքում, երբ պարապելու և կարդալու համար ազատ ժամանակ կայ, բանւորների մեծամասնութիւնը չի կարողանում զբաղուել, որովհետեւ այդ մեծամասնութիւնը բոլորովին անգրագէտ է։ Չէ որ արեւմտեան Եւրոպայում Բէլգիան միակ երկիրն է, որտեղ գոյութիւն չունի պարտադիր ուսումը։ 1900 թ. դեկտ. 31-ին 8 տարեկանից մեծ ազգաբնակութեան ամեն մի հարիւրից տասն և ինը ոչ կարդալ գիտէին և ոչ գրել։ Հարիւր զինուորակոչներից դեռ այժմ էլ տասն և մէկն հաշւում են անգրագէտ, իսկ եթէ այսպիսի յարաբերութիւն է տիրում հասարակութեան բոլոր խաւերին պատկանող երիտասարդների վերաբերմամբ, այդ դէպքում ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այդ յարաբերութիւնը անհամեմատ աւելի կը լինի բանւոր դասակարգի երիտասարդութեան վերաբերմամբ։

Այդ պատճառով մնում է միայն զարմանալ, տեսնելով պրօլետարիատի եռանդն և բնական ընդունակութիւնները, պրօլետարիատի, որ չը նայելով այսքան անբարեյաջող պայմաններին, կարողացել է ստեղծել մի հզօր կազմակերպութիւն, որի նկարագրութիւնը կազմելու է մեր նպատակը։

§ 2 Բանւորավարձը

Ով ցանկանում է գաղափար կազմել զանազան կատեգորիայի բանւորների աշխատավարձի չափի մասին, անհրաժեշտ տե-

ղեկութիւնները կարող է քաղել բազմաթիւ հրատարակութիւններից, որոնցից կարեւորագոյններն են արդիւնաբերական ժողովրդագրութիւնները, երկրագործական ժողովրդագրութիւնները, աշխատանքի դեպարտամէնտի մենագրութիւնները, իսկ որոշ արտադրութիւնների մասին—քարածխի հանքերի բանւորավարձի ըստատիստիկան կամ Varlez-ի գեղեցիկ ուսումնասիրութիւնները ձեռնոցների արդիւնաբերութեան բանւորավարձի ստատիստիքան *)։

Ինչ վերաբերում է ընդհանրապէս արդիւնաբերական բանւորներին, 1896 թուի ժողովրդագրութիւնը տալիս է չափազանց վստահելի տեղեկութիւններ, այնքան վստահելի, որքան դա հնարաւոր է այսպիսի մի ծանր և բարդ գործի մէջ **)։

Աշխատանքի դեպարտամէնտը, որի ուսումնասիրութիւնները տեւեցին չորս տարի, չը բաւականանալով ժողովրդագրութեան տուած աղիւսակներով, որոնք պարունակում էին և մի առանձին ցանկ բանւորավարձի համար, իր սեփական աղիւսակները կազմելիս դիմեց հետեւեալ լրացուցիչ միջոցներին։

1) Մանր արհեստանոցների վերաբերմամբ (որոնք ըստ ժողովրդագրութեան ունէին 10-20-ից պակաս բանւոր) դեպարտամէնտը ուղարկում էր ժողովրդագրական թերթերը արհեստանոցների տէրերին, խնդրելով բաժանել բանւորներին առանձին խմբերի, ըստ զբաղմունքի և բանւորավարձի չափի։

2) Մնացած արդիւնաբերական գործարանները այցելում էր մասնաւորապէս դրա համար լիազօրութիւն ստացած անձնաւորութիւնը, որ նշանակում էր իսկական բանւորավարձը, ստուգելով բանւորական գրքերի հիման վրայ։

Այսպիսի պայմաններում մանր գործատէրերի տուած և ոչ ոքի կողմից չըստուգուած տեղեկութիւնները կարող են իհարկէ

*) Ministére du travail. Les salaires dans l'industrie gantoies. Bruxelle, 1901.

**) Այս տեղեկութիւնները ամփոփուած և լրացրած են Waxweiler-ի Revue d'Economie Politique-ի 1902 թ. համարում դետեղուած «Heurres du travail» և այլ յօդուածում։

գունաւորւած լինել օպտիմիզմով, բայց դրա փոխարէն խոշոր և միջին արդիւնաբերութեան վերաբերող տեղեկութիւնների ճշգրտութիւնը հասնում է մաքսիմումի։ Ժողովրդագրութեան ցուցակագրած բանւորների թիւն է 671,596 նրանցից 58,619 բանւորի իսկական բանւորավարձը անհնար է եղել որոշել։ Մնացած 612,892 բանւորներին վերաբերող թւերը եթէ համախմբենք և կլորացնենք, կըստանանք հետևեալը։

Բանւորութեան մէ քառորդից մի փոքր աւելին կամ 170,000 մարդ օրական աշխատում են 2 ֆր. պակաս։

Բանւորութեան մէկ քառորդից մի փոքր աւելին կամ 170,000 մարդ օրական ստանում էին 2-ից մինչև 3 ֆր.

Բանւորութեան մէկ քառորդից մի փոքր աւելին կամ 169,00 մարդ օրական ստանում էին 3-4 ֆր.

Բանւորութեան մէկ վեցերորդականից մի փոքր աւելին կամ 102,000 մարդ օրական ստանում էին 4 ֆր.-ից աւելի,

Սակայն վերոյիշեալ թւերը վերաբերում են ինչպէս հասակաւորներին, այնպէս և երեխաներին, ինչպէս բանւորներին, նոյնպէս և բանւորուհիներին։ Այս պատճառով մենք այս թւից պէտք է հանենք 16 տարեկանից փոքր երեխաներին, որոնց $^4/_5$-ը ստանում է 1 ֆր. 5 սանտիմից պակաս և ցոյց տանք տղամարդկանց ու կանանց բանւորավարձը առանձին առանձին։

16 տարեկ. բարձր. բան.-տղամարդ. ընդհանուր թւից մօտաւորապէս
$^1/_4$ (113,000) աշխ. էին պակաս քան 2 ֆր. 50 ս.
$^1/_5$ (87,000) « « « « 2 ֆր. 50 ս. մինչև 3 ֆր.
$^1/_5$ (100,000) « « « « 3 ֆր. « 3 ֆ. 50 ս.
$^1/_4$ (116,000) « « « « 3 ֆր. 50 ս. « 4 ֆ. 50 ս.
$^1/_{10}$ (50,000) « « աւելի քան 4 ֆր. 50 ս.

Ինչ վերաբերում է կանանց, ինչպէս և ամեն երկրում, նրանց միջին բանւորավարձն համեմատաբար շատ պակաս է։

16 տարեկանից բարձր կանանց վերաբերմամբ ստանում ենք հետևեալ թւերը (կլոր)․ չորս տասնորդականը կամ մօտ 30,000 կ. աշխատում էին 1 ֆր. 50 ս. $^1/_5$ (կէսը) կամ 35,000 ստանում էին 1 ֆր. 50 ս.-ից մինչև 2 ֆր. 5 ս. մի տասնորդականը կամ մօտ 9,000 կ. ստանում էին 2 ֆր. 50 ս-ից աւելի։

Ինչպէս տեսնում էք համարեա բոլոր բանւորուհիները և

հասակաւոր բանւորների մէկ քառորդը օրական ստանում է 2 ֆր. 50 ս-ից պակաս և մանաւանդ երկրի ֆլամանդական մասում, նրանց մէջ պատահում են այնպիսինները, որոնք շաբաթական աշխատում են ոչ աւելի քան 12, 10, իսկ երբեմն էլ 9 ֆր. *) (գլխաւորապէս տնայնագործութեան մէջ, ինչպէս օր. կօշկակարութեան և ձեռքի ջուլհակագործութեան մէջ)։

Այստեղ, ակներև է, որ մենք գործ ունենք բացառութիւնների հետ. բայց այն, ինչ որ բացառութիւն է արդիւնաբերական բանւորների համար, մի քանի գաւառներում կազմում է ընդհանուր կանոն երկրագործութեամբ զբաղւողների համար։

Սա երևում է հետևեալ աղիւսակից, որի թւերը սակայն պէտք է ստուգւեն, որովհետև նախ և առաջ երկրագործական ժողովրդագրութեան մէջ կիրարւող մեթոդները չեն կարող համարւել կատարեալ և, որ գլխաւորն է, կասկածելի է այն պատասխանների ճշտութիւնը, որ գիւղատնտեսները տւել են ժողովրդագիրներին **)։

34-րդ երեսի աղիւսակի տւած թւերից, որոնք աւելի շուտ իրական մակերևոյթից բարձր են քան թէ ցածր (որովհետև այդ թւերը հաղորդել են գիւղատնտեսները ու իշխանութիւնները և ոչ թէ բանւորները) երևում է։

1) Որ բանւորավարձը 1846 թւից սկսած բարձրացել է։

2) Բոլոր գաւառներում նոյն իսկ տղամարդկանց բանւորավարձը 2 ֆր. 50 ս-ից պակաս է. որ 9-ից 5 գաւառներում վարձը պակաս է 2 ֆր.-ից։

3) Որ բանւորավարձը անհամեմատ աւելի պակաս է բարեբեր գաւառներում, ինչպէս օր. երկու Ֆլանդրիայում, քան այնտեղ, որտեղ վատ հող է, ինչպէս Նամիւր և Լիւկսեմբուրգ։

Օրինակ Լիւքսէմբուրգում (բելգիական Արդիններում) ամեն մի կիլոմետրի վրայ ապրում է աւելի քիչ ազգաբնակութիւն, քան Բելգիայի ուրիշ մի որև է շրջանում. կլիման դաժան է, հողի մշակումը—ծանր, բայց շնորհիւ համայնական հողերի, լայն չափերով զարգացած գիւղացիական սեփականութեան և այն

*) Ֆլամանդիայի որոշ կատեգորիայի բանւորների թշւառ դրութիւնը սրտաշակի տարագրել է A. De Winne-ը իր ուսումնասիրութեան մէջ «A. travers les Flanbres, avec préface d'Anseele. 1902.

**) Տես 34-րդ երես.

Երկրագործական բանուորների օրավարձը
Օրավարձի միջին չափը

Գաւառները	1846				1880				1890				1895			
	խաղէյնի հացով		առանց խաղ. հացի		խաղ. հացով		առանց խաղ. հացի		խաղ. հացով		առանց խաղ. հացի		խաղ. հացով		առանց խաղ. հացի	
	տղամարդիկ	կանայք	տղամարդիկ	կանայք	տղամարդիկ	կանայք	տղամարդիկ	կանայք	տղամարդիկ	կանայք	տղամարդիկ	կանայք	տղամարդիկ	կանայք	տղամարդիկ	կանայք
	Ֆր.	Ֆր.	Ֆր.	Ֆր.	Ֆր.	Ֆր.	Ֆր.	Ֆր.	Ֆր.	Ֆր.	Ֆր.	Ֆր.	Ֆր.	Ֆր.	Ֆր.	Ֆր.
Անտվերպեն	1,05	0,68	0,65	0,40	1,50	1,00	1,00	0,60	1,62	1,05	1,00	0,64	1,62	1,06	1,00	0,65
Բրաբանտ	0,96	0,66	0,60	0,44	1,74	1,09	1,03	0,67	1,60	1,06	1,00	0,68	1,61	1,07	1,01	0,68
Արևմտ. ֆլանդրիա	1,15	0,70	0,60	0,42	1,83	1,16	0,98	0,64	1,70	1,09	0,94	1,61	1,68	1,08	0,94	0,61
Արևել. ֆլանդրիա	1,04	0,67	0,52	0,35	1,65	1,07	0,83	0,53	1,61	1,02	0,83	0,52	1,63	1,04	0,84	0,53
Գենօ	1,24	0,70	0,59	0,41	2,41	1,24	1,37	0,74	2,26	1,21	1,36	0,77	2,26	1,20	1,36	0,77
Լիէժ	1,21	0,80	0,75	0,47	2,46	1,48	1,52	0,87	2,22	1,38	1,40	0,84	2,23	1,38	1,40	0,84
Լիմբուրգ	0,90	0,62	0,51	0,32	1,62	1,11	0,88	0,55	1,43	1,01	0,83	0,57	1,44	1,02	1,84	0,58
Լիւկսէմբուրգ	1,16	0,79	0,67	0,49	2,48	1,62	1,54	0,92	2,27	1,53	1,45	0,93	2,40	1,63	1,54	0,99
Նամիւր	1,45	0,78	0,72	0,46	2,67	1,44	1,70	0,86	2,42	1,41	1,62	0,90	2,43	1,42	1,62	0,90
Ամբ. Թագաւորութ.	1,18	0,72	0,60	0,40	2,04	1,25	1,21	0,71	1,96	1,21	1,20	0,73	1,98	1,22	1,21	0,74

հանգամանքի, որ իրանք հողատէրերն են իրանց աշխատանքը կատարում, այստեղ ծայրայեղ աղքատութիւնը նոյնքան անծանօթ է, որքան և ծայրայեղ հարստութիւնը. ով կարիք ունի երկրագործական բանուորների, նա պէտք է փնտռէ նրանց, և, ինչպէս երևում է Արդեննների մասին 1895 թւի ժողովրդագրութիւնից յետոյ լոյս տեսած Մենագրութիւնից, օրով աշխատող բանուորների վարձը լաւ սեզօնին, առանց կերակրի, հասնում էր 1 ֆր. 75 ս.—2 ֆր 50 ս. *)։

Ընդհակառակն, Ֆլանդրիայի գաւառներում, որոնք իրաւացի կերպով կոչւում են Եւրոպայի այգիներից մէկը, հողի գները չափազանց մեծ են. շատ քիչ կարելի է տեսնել, որ հողը մշակի ինքը հողի տէրը, կապալը ինչպէս ասում են տեղացիք «պղպեղի նման թանգ է», իսկ բանուորավարձը, եթէ չը հաշւենք Կամպինան, աւելի պակաս է, քան մի որևէ ուրիշ տեղ։ Ահա օրինակ, ինչ է ասում այս առիթով «Ֆլանդրիայի նկարագրութիւնը երկրագործական տեսակէտից» գրքի հեղինակը, այնպիսի մի անկեղծութեամբ, որ յաճախ չէ կարելի տեսնել նման հրատարակութիւնների մէջ։

«Սովորական պայմաններում բանուորավարձը մեծ չէ. 1875 թւից մինչև հիմա նա մի փոքր բարձրացել է։ Այդ ժամանակներին է վերաբերում այն երջանիկ տարիները, որ երբ և իցէ տեսել է երկրագործութիւնը։ Այն ժամանակ Oostroosbeke կանտօնում բանւորը ստանում էր 7 սու կամ 0,63 ֆր. կանանց վճարում էին 5 սու, ամառը երբեմն 6 սու, որ հաւասար է 0,45 և 0,54 ֆր. նոյն դրութիւնն էր տիրում և Ֆլադրիայի աւազոտ շրջանի միւս վայրերում, ինչպէս օրինակ Deynze-ի շրջանում։ Այնտեղ ներկայումս բանուորական օրւայ համար վարձատրում են հետևեալ կերպով **)։

Հասակաւոր տղամարդիկ հնձի ժամանակ 0,80-ից մինչև 1,00 ֆր. (բացի կերակրից). կանայք 0,50-ից 0,60 ֆր.

Բերքերով վարձատրելը աւազոտ շջանում բոլորովին չէ ընդունւած։ Բայց պատահում է, որ ֆերմերը իր բանւորին տալիս է

---

*) Departement de l'agriculture. Service des agronomes de l'Etat. Monograpihe agricole de l'Ardenne, p. 35.

**) ibid.

մի քիչ գետնախնձոր կամ կաթ, կամ ձրի հերկում է բանւորին պատկանող հողի կտորը, բայց այս բոլորը առատաձեռնութեան հազւագիւտ դէպքերն են, որոնք չեն մտնում աշխատանքի վարձատրութեան պայմանագրի մէջ»։

Սրանք են—առաջին տեղերի վերաբերմամբ աննշան փոփոխութիւններով—աշխատանքի պայմանները, որոնք տիրում են Ֆլամանդիայի գիւղական մասի բանւորական այն շրջաններում, որոնց դեռ չէ հասել սօցիալիստական պրօպօգանդը։ Հասկանալի է, որ բանւորավարձի այսքան ցածր մակերևոյթի վրայ կանգնած լինելով, բանւորները քանի գնում, այնքան աւելի մեծ հակումն են ցոյց տալիս դէպի ժամանակաւոր կամ մշտական գաղթականութիւնը, միայն թէ կարողանան խուսափել իրանց շաղկապող թշւառութեան սեղմ օղակից։

Ոմանք—սրանց թիւը հինգ հարիւր հազարից աւելի է—ամեն տարի գնում են Ֆրանսիայի հիւսիսը կամ նոյն իսկ կենտրօնական շրջանները, այնտեղ հաց կամ ճակնդեղ հաւաքելիս աշխատանք գտնելու. ոմանք վերջնականապէս փոխադրւում են քաղաքները կամ արդիւնաբերական կենտրօնները. իսկ ոմանք էլ աւելացնում են, բոլոր երկրներում այնքան բազմացած, բանւորների կօնտինգենտը, որոնք ամեն օր երկաթուղով գնում են իրանց աշխատանքի վայրը։

Ստորև բերւած ստատիստիկան, որ հաղորդել է մեզ երկաթուղիների վարչութիւնը, գաղափար է տալիս ամենօրեայ դուրսերթի (ОТХОДЪ) նշանակութեան և զարգացման մասին։

Աբօնիմենտ բանւորական տոմսակների թիւը, որ տրւած է այդ սիստեմն ընդունելուց այն է 1870 թւի փետր. 10-ից սկսած՝

1870 թ. . . .	14,223	տոմսակ
1875 » . . .	193,675	»
1880 » . . .	355,556	»
1885 » . . .	667,522	»
1890 » . . .	1,759,025	»
1900 » . . .	4,515,214	»
1902 » . . .	4,580,910	»
1903 » . . .	4,862,202	»
1904 » . . .	5,005,002	»

Տարէնը հաշւելով քառասուն և հինգից մինչև յիսուն շաբաթական կուպօններ, կըստանանք 100-ից մինչև 110 հազար բանւոր, որոնք ամեն օր ճանապարհորդում են պետական երկաթուղիական գծերով։ Աւելացրէք սրանց և այն բանւորների թիւը, որոնք ճանապարհորդում են տրամվայների վրայ extra muros օժանդակ երկաթուղիական գծերով և այն մի քանի երկաթուղիներով, որոնց դեռ շահագործում են մասնաւոր ընկերութիւնները և դուք կստանաք առնւազն 125,000 բանւոր, որոնք իրանց զբաղմունքով կապւած են քաղաքի հետ, բայց շարունակում են ապրել գիւղում *)։

Ոչ ոք չի զարմանայ, եթէ ասենք, որ բուրժուական պետութիւնը մարդասիրական նպատակներով չէ հնարել այդ էժանացրած տոմսերը։ Նրանք ընդունեցին ֆրանս-պրուսական պատերազմի շրջանում այն նպատակով, որ դէպի քաղաքները գրաւեն հնազանդ և քիչ պահանջկոտ բանւորների, որոնք, ինչպէս յոյս ունէին, պէտք է իջեցնէին և մեղմացնէին պրօֆեսիօնալ կազմակերպութիւնների պահանջները։ Եւ իսկապէս գիւղական այս արշաւանքի անմիջական հետևանքը այն եղաւ, որ քաղաքներում և արդիւնաբերական կենտրօններում իջաւ բանւորավարձը։

Բայց շփւելով քաղաքի իրանց ընկերների հետ, գիւղական բանւորներն էլ փոքր առ փոքր սկսեցին գալ իրանց դասակարգային շահերի գիտակցութեան։ Նրանք ևս պահանջեցին աւելացնել իրանց աշխատավարձը. իւրացրին սօցիալիստական գաղափարները և սկսեցին տարածել գիւղերում, այնպէս որ վերջ ի վերջոյ, սօցիալական կեանքում այնքան սովորական դարձած ճակատագրի ծաղրի համաձայն, այս միջոցը, որը ուղղւած էր պրօլետարական կազմակերպութեան դէմ, այն հետևանքն ունեցաւ, որ ընդհակառակն, լայնացրեց և ամրացրեց այդ կազմակերպութիւնը և կրճատելով գիւղական շրջաններում աշխատանքի առաջարկը, հնարաւորութիւն տւեց գիւղի բանւորական դասակարգին մասնակցելու այն յաջողութիւններին, որոնց նւաճել է կօլլեկտիվ ջանքերով քաղաքի պրօլետարիատը։

*) Vandervelde. L'exode rural, թ. 130 et suiv. Paris, Alcan. 1904 թ.

§ 3 *Բանւորավարձի աճումը 1846 Թւից մինչև 1896 Թ.*

Ինչպէս տեսանք Բելգիական պրօլետարիատի աշխատանքի և վարձատրութեան պայմանները ներկայացնում են մի տխուր հակապատկեր այն պայմաններին, որոնց մէջ ապրում են Անգլիայի և Ամերիկայի skilled labourers, *բարձր որակի, բանւորները. բայց այս հանգամանքը դեռ չի թոյլ տալիս հերքելու այն նկատելի բարւոքումը, որ տեղի է ունեցել* XIX *դարի երկրորդ կիսում:*

Պէտք է կարդալ 1848 Թ. հրատարակած «բանւոր դասակարգի դրութեան մասին անկետը»-ը տեսնելու, թէ որպիսի աղքատութեան ընդունակ է հասնել բանւոր դասակարգը, շնորհիւ կապիտալիստական շահագործման, երբ ձեռնարկողների տենդենցիային՝ այն է իջեցնել բանւորավարձը և երկարացնել բանւորական օրը, խոչնդոտ չի հանդիսանում օրէնսդրական միջամտութիւնը և բանւորների կօլեկտիվ ընդդիմադրութիւնը:

Վերականգնելով այն փաստը, որ երեխաները, որոնց և մանաւորապէս ի նկատի ունէր ուսումնասիրութիւնը, ստիպւած են աշխատել չափազանց երկար և հնարաւորթիւն չունէին, յաճախելու ոչ ցերեկւայ և ոչ էլ երեկոյեան դպրոցները. որ հասակաւորների համար նշանակած դպրոցները անբաւարար էին. որ համարեա ամենուրէք բացակայում էր պրօֆֆեսսիօնալ կրթութիւնը, որ համարեա անծանօթ էին դժբաղտ դէպքերի դէմ նախազգուշութեան միջոցները. որ truk systemc *աւերծութիւն էր գործում բազմաթիւ տեղեր—մատնանշելով այս բոլորը, հետախուզող կօմիսսիան իր վերջին զեկուցումը վերջացնում է այսպիսի մռայլ խօսքերով:*

*«Աղքատութիւնը, բաւարարաչափ առողջարար և սննդարար կերակրի բացակայութիւնը, բնակարանների վատ դրութիւնը, կեղտը, առողջապահական կանօնների անգիտութիւնն ու մոռացութիւնն, ամեն տեսակ զրկանքները, այս բոլորը միւս վերոյիշեալ պատճառների հետ միասին գործում են այն ուղղութեամբ, որպէսզի քայքայեն բանւոր ազգաբնակութեան առողջապահութիւնը և կրճատեն նրա կեանքը» *):*

*) Ministére de l'interieur. Enquête sur la condition des classes ouvrières et le travail des enfants. Rapport de la Commission institute′ par arrêt royal de 7 septembre 1843 Թ.CXVII. Bruxelle, Zesigne 1848 Թ.

Այս ողբալի դրութիւնը չափազանց յիշեցնում է Անգլիայի արդիւնաբերական յեղափոխութեան առաջին և սոսկալի քայլերը, յեղափոխութեան, որ կատարւել էր վերը նկարագրած ժամանակից 30—40 տարի առաջ: Այս դրութիւնը կարող էր բարեփոխել միայն պրօլետարիատի յամառ կռիւը, որ նւաճել էր կօալիցիայի իրաւունքը, ստեղծել էր իր առաջին «կռւի դաշնակցութիւնները» (sociétes de resistance) *և այս առաջին ատիճանն անցնելուց յետոյ, 1886 Թ. և 1893 Թ. արիւնայեղ ընդհարումների միջոցով կորզել էր տիրապետող դասակարգերից սօցիալական օրէնքներից կարևորագոյնները և ընտրողական իրաւունքի մի քանի փշրանքները:*

Շնորհիւ գլխաւորապէս այս ջանքերի, վերջին կէս դարի ընթացքում բանւոր դասակարգը հնարաւորութիւն ստացաւ թէկուզ փոքր չափով օգտւելու այն աճող հասարակական հարըստութիւնից, որ հէնց ինքն է արտադրում և ձեռք բերելու աշխատանքի մի վարձատրութիւն, որը, թէև ճիշտ է դարձեալ անբաւարար է, բայց որը յամենայն դէպս բաւականաչափ գերազանցում է այն «սովեալ» բանւորավարձին, որ նրան վճարում էին յիսուն տարի առաջ:

1846 Թ. 1896 Թ. արդիւնաբերական ժողովրդագրութիւնները հնարաւորութիւն են տալիս մեզ յայտնի ճշմարտութեամբ ուրոշելու այն յաջողութիւնները, որ այս տեսակէտից ձեռք է բերել բանւորութիւնը:

Հետևեալ աղիւսակը, որ մենք վերցրել ենք Waxweilér-*ի աշխատութիւնից, կարող է այդ գաղափարը տալ.*

Այս աղիւսակը ցոյց է տալիս, որ տղամարդկանց անւանական բանւորավարձը 1846-ից մինչև 1896 Թ. աճել է երկու անգամ:

Եթէ այսպէս համեմատելու լինենք կանանց բանւորավարձը, կը տեսնենք, որ նա մի փոքր աւելի քան կրկնապատկւել է:

Այնուհետև, չը նայելով այն հանգամանքին, որ նոյն ժամանակաշրջանում աւելացել են բնակարանի վարձն ու մի քանի ուտելեղէնների գները, այնուամենայնիւ երևի ամենքը կը համաձայնեն, որ կեանքն ընդհանրապէս աւելի էժանացել է:

«Եթէ վերցնելու լինենք տարիների մի երկար շարք, սկսած 1850 Թւից—ասում է Հեկտօր Դենին իր «Տնտեսական և սօցիալական անշարժութիւն» գեղեցիկ գրքի մէջ—օգտւելով այն հաւաքւած ստատիստիքական տեղեկութիւններից, որոնք հնարաւո-

Արդիւնաբերութեան և արհեստների ճիւղերը	Հաշւած բանւորների ընդհ. թիւը		Երևում է, որ բանւորների 3/4-ը (դամարդիկ 16 տարեկանից մեծ)		Սա նշանակում է յաւելումն	
	1846 թ.	1896 թ.	Ստանում էին 1846 թ.	Ստանում էին 1896 թ.	մօտաւոր վձգշնեճտաո հիվչա մձափ	մօտաւոր վձգշնեճտաո հիվչա մջման
1. Արհեստներ.						
Ատաղձագործներ, հիւսներ	8,673	9,523	1 ֆր. և 2 ֆ. 50 ս.	2 ֆր. և 4 ֆ. 50 ս.	100 %	80 %
Քարտաշներ	7,120	13,824	1 » և 2 »	2 ֆր. և 4	100 %	100 %
Նախշքարներ, սւաղ քսողներ	2,358	8,693	1 » և 2 »	2 ֆր. և 4	100 %	100 %
Դերձակներ	4,798	3,002	0,50 և 1,50	1,50 և 3,50	200 %	135 %
Կօշկակարներ	7,343	4,840	0,50 և 2 »	1,50 և 3,50	200 %	75 %
2. Խոշոր արդիւնաբերութիւններ.						
Քարածխի հանքեր	3.1502	92,924	1 ֆր. և 2 ֆ. 50 ս.	2 ֆ. 50 և 4 ֆ. 50 ս.	150 %	80 %
Մետալուրգիա	2,221	5,238	1,50 և 3 »	2 ֆր. և 4,50	100 %	65 %
Ապակէ, հայելիների և յաղճապակիի գործարաններ	2,707	9,149	1 » և 3 »	2 և 7	100 %	135 %
Թուղթ պատրաստող ֆաբրիկաներ	771	1,559	1 » և 2 »	2 և 4	100 %	100 %
Շաքարէ գործարաններ	1820	15,053	0,50 և 1,50	1,50 և 3,50	200 %	135 %
3. Արդիւնաբերութիւն.						
Բամբակէ	3,828	5,029	0,50 և 2,50	1,50 և 3,50	200 %	40 %
Կտաւէ	1,167	1,778	0,50 և 2 »	2 և 3,50	300 %	75 %
Բրդէ	1,677	7,635	0,50 և 2 »	1,50 և 4	200 %	100 %

մութիւն են տալիս հետեւելու իսկական բանւորավարձի զարգացմանը, այն ժամանակ գալիս ենք այն մեծ և մխիթարական եզրակացութեան, որ չընայելով խոշոր տատանումներին, նրա միջին չափը աւելի բարձր է այժմ քան 1850—1854 թւերին. Standart of life (կեանքի մակերեւոյթը) անընդհատ բարձրանում էր. բանւորը չէ գամւած բարիքների որոշ մինիմումին, նա ստացել է հնարաւորութիւն օգտւելու նոր բարիքներից և պահելու նրանց» *)։

Բայց թէև անկասկած է պրօգրեսը, այնուամենայնիւ նա ոչ մի տեղ չի կատարւում բացարձակապէս առանց ընդմիջումների. այդ պրօգրեսը կրիզիսների (ճգնաժամ) շրջանում ենթակայ է սոսկալի տատանումների և անհաւասար չափով է բախշւում բանւորութեան զանազան խմբերին. և եթէ համեմատենք այն ողորմելի բանւորավարձը, որ գոյութիւն ունի այն երկրներում, ուր դեռ չի մտել սօցիալիզմը, այն համեմատաբար բարձր բանւորավարձի հետ, որ գոյութիւն ունի այն շրջաններում, ուր սօցիալիզմը ունի իր կարեւորագոյն ամրութիւնները, այն ժամանակ կը պարզւի, որ շնորհիւ գլխաւորապէս սօցիալիստների աշխատանքին պրօլետարիատը կարող էր ընդդիմադրել կապիտալիստական շահագործման յատուկ այն տենդենցներին, որոնք սպառնում էին պատրաստել նրա համար ֆիզիքական և բարոյական այլասերումն։

Գլ. III.

ԲԱՆԻՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԿՌԻՒԸ ՑԱՆՈՒՆ ԳՈՅՈՒԹԵԱՆ ԼԱՒԱԳՈՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ

Բրիւսսելի սօցիալիստական պատգամաւոր և բանւորական կուսակցութեան գլխաւոր հիմնադիրներից մէկը Լիւի Բերտրանը, մտադիր է շուտով հրատարակել «Բելգիական դեմօկրատիայի և սօցիալիզմի պատմութիւնը»։ Նա իր այս աշխատութեան մէջ, որի կօնսպէկտը սիրալիր կերպով ինքն հաղորդեց մեզ, առաջին բան-

*) Denis. La depression économique et sociale et l'historie des prix. Bruxelles, 1895, թ. 122 et suiv. տ. նոյնպէս Planches XVIII et XIX այն ատլասի, որ կցած է յիշեալ աշխատութեան։

ւորական միտինգները և սոցիալիստական պրոպագանդը հաշւում է 1830 թւից։ 1831 թ. Սեն-սիմոնիստական միսիաները անցան ամբողջ երկիրը և գլխաւոր քաղաքներում կազմակերպեցին «քարոզներ»։ Աւելի ուշ՝ 1838-39 և 1844-48 թ. Կոնսիդերանն ու Ֆուրիէի աշակերտները կազմում էին Բրիւսսելում, Գենտում, Լիէժում և այլն բազմաթիւ զրուցատրութիւններ։ Վերջապէս, ինչպէս յայտնի է, 1847-1848 թ. Բրիւսսելումն էր ապրում Կարլ Մարքսը, որտեղ նա մասնակցում էր գերմանական բանւորների դաշնակցութեան կազմակերպման գործին։

Փարիզի, փետրվարի 24-ի յեղափոխութիւնից անմիջապէս յետոյ, Բելգիայում գումարւեց դեմոկրատիական և սոցիալիստական ընկերութիւնների համագումարը։ Ֆլանդրիայի և Վալոնիայի *) մի քանի արդիւնաբերական քաղաքներում առաջ եկան սոցիալիստական ամսագրեր։ Գենտում, Բրիւսսէլում և Բորինաժի լեռնարդիւնաբերական շրջանում տեղի ունեցան հասարակապետական տենդենցներ ունեցող անկարգութիւններ։ Բայց այս յուզմունքը, որ ֆրանսիական դէպքերի արձագանգ էր, յունիսեան ապստամբութեան պարտութիւնից վաղ հանգստացաւ և բելգիական բուրժուազիան 1850-1857 թւերի շրջանում կարող էր հանգիստ քնել. պրոլետարիատը լռելեան տանում էր նրան ճնշող քաղաքական և տնտեսական ստրկութիւնը։

1848 թւի դէպքերի ազդեցութեան տակ, պահպանողականները ստիպւած էին համաձայնել ընտրողական րէֆորմին, որ ցէնզը իջեցրել էր մինչև սահմանադրութեան որոշւած մինիմումը. բայց այս րէֆորմը, որ կեանքի էր կոչել մանր բուրժուազիային, իր ազդեցութեան շրջանակից դուրս թողեց պրոլետարիատին։ Ընտրող լինելու համար անհրաժեշտ էր ամենաքիչը 20 ֆլօրին (42 ֆր. 32 ս.) հարկ վճարել. այսպիսի ցենզ չունէր և ոչ մի բանւոր և 1848 թւից յետոյ էլ, ինչպէս նրանից առաջ, բուրժուազիան ներկայանում էր իբրև պետական իշխանութեան միակ տէրը։

Այսպիսով, չը նայելով այն սոսկալի մերկացումներին, որ արեց «բանւոր դասակարգի դրութեան ուսումնասիրութիւնը» ոչ

*) Սովորաբար այսպէս էին կոչւում երկրի Ֆլամանդական և ֆրանսիական մասերը։

մի միջոց չէր ձեռնարկւել որպէսզի ստեղծէին աշխատանքի շահերը պաշտպանող օրէնսդրութիւն, կամ որպէսզի փոխէին արդիւնաբերական օրէնսդրութիւնը, որ սկիզբն էր առնում կայսրութեան շրջանից և ամբողջապէս ուղղւած էր բանւորների դէմ։

Ամբողջ տասն և հինգ տարւայ աշխատանք էր հարկաւոր, որպէսզի վէրացնէին կօալիցիայի դէմ ուղղւած օրէնքը. ամբողջ քառասուն տարի անցաւ մինչև որ իրագործւեց պետական միջամտութեան պրինցիպը կանանց աշխատանքը օրինասահմանելու նպատակով. աւելի քան յիսուն տարի, մինչև որ կընդունւէր աշխատանքի ժամանակ պատահող դժբախտ դէպքերում վարձատրելու օրէնքը։ Այս օրէնքների անբաւարար դրութիւնը կարելի է համեմատել միայն նրանց իրագործման դանդաղութեան հետ, և այնուամենայնիւ այսքան անբաւարար նւաճումներն անգամ բուրժուազիայից խլելու համար, պրոլետարիատը ստիպւած էր կրել անհամար և դաժան փորձութիւններ և անողոք կուի միջոցով միայն նւաճել իրաւունք մասնակցելու հասարակական գործերի։

§ 1. Գենտի բանւորական դաշնակցութիւնը

Կարելի է ասել, որ բանւոր դասակարգի բոլոր ջանքերը 1857—1866 թ. ուղղւած էին նւաճելու կօալիցիայի իրաւունքը։

Ֆրանսիական քրէական օրէնսգրքի § § 415 և 416, որ գործադրւում է և Բելգիայում, որոշում էին խիստ պատիժներ բանւորների համար, եթէ նրանք «կազմակերպեն որ և է կօալիցիա, որպէս զի դրանով միաժամանակ դադարեցնեն աշխատանքը, խանգարեն որ և է արհեստանոցում տեղի ունեցող աշխատանքը, խանգարեն մուտքը արհեստանոցը և մնան այնտեղ որոշ ժամերից առաջ կամ յետոյ»։

XIX-րդ դարի առաջին կիսին այդ օրէնսդրութիւնը բոլորովին չէր գործադրւում, որովհետև բելգիական արդիւնաբերութիւնը, մինչև մեքենայական արտադրութեան մուտք գործելը—մանաւանդ կօնտինենտալ բլօկադայի շրջանում—գտնւում էր ծաղկեալ դրութեան մէջ. իսկ երբ կատարւեց արդիւնաբերական յեղաշրջումը, որի հետևանքն էր 1835 թւից սկսած, հազարաւոր ջուլհակների և մանողների սովը, այն ժամանակ պրոլետարիա-

տը իր մէջ չէր տեսնում բաւականաչափ ոյժ ոտքի կանգնելու իր աղքատութեան դէմ։

Բայց 1857 թւին արդիւնաբերութեան զանազան ճիւղերում կազմւեցին դաշնակցութիւններ և իսկոյն ծայրայեղ խստութեամբ գործին միջամտեցին դատաստանական իշխանութիւնները։

Բրիւսսելի «Տպարանական բանւորների դաշնակցութիւնը», որ հիմնւել էր 1842 թ., 1857 թւի փետրվարի 23-ին դիմեց տպարանատէրերին մի գրաւոր յայտարարութեամբ, որ լի էր շատ մեծ յարգանքներով։ Ներողութիւն խնդրելով իրանց համարձակութեան համար, բանւորները ցոյց էին տալիս կենսական պիտոյքների ծայրայեղ թանկութիւնը և բանւորավարձի աւելացնելու անհրաժեշտութիւնը։ Մի քանի ամիս տևող բանակցութիւններից յետոյ տպարանատէրերը համաձայնւեցին նրանց պահանջներին. միայն մէկն էր պնդում, որ անհրաժեշտ է թողնել բանւորավարձի նախկին չափը։ Նոր փորձեր եղան ստիպելու, որ նա ետ զիջի, բայց որովհետև նա շարունակում էր պնդել իր ասածը, այդ պատճառով էլ երեք թէ չորս օրով քան գրաշարները թողին նրա արհեստանոցը։ Սա արդէն բաւական էր, որ դատ յարուցէր հեռացած բանւորների և տպարանական դաշնակցութեան կոմիտէի դէմ։ Մի անգամ սկսւած դատարանական գործը այնուհետև շարունակւում էր իր կարգին, թէև այդ ժամանակամիջոցում տարաձայնութիւնները արդէն վերջացած էին, բանւորները նորից վերադարձել էին արհեստանոցը, իսկ տպարանատէրը հրաժարւել էր իր գանգատից։ Սակայն 1859 թ. մայիսի 26-ին համաձայն Քրէական Օրէնսգրքի §§ 415 և 416-ի, 22 բանւոր ենթարկւեցին տուգանքի, չը նայելով որ դատարանը իր վճռի մէջ խոստովանում էր, որ մեղադրւողները խաղաղ և համեստ բանւորներ էին, որ նրանց կօալիցիան ոչ մի անկարգութիւն չէր ըստեղծել և աշխատում է ամբողջ արդիւնաբերութեան վրայ տարածել մի միջոց, որի արդարութիւնը ընդունել էր հէնց տպարանատէրերի մեծ մասը *)։

*) E. Vandervelde. Enquête sur les associotion professionelles d'ouvriers et d'artisans en Belgique. Vol. *1*, *2*-e partie chap. VI La fe'de'ration typographique. Նոյնպէս L'Histoire de l'association libre des compositeurs et imprimeurs typographe des Bruxelles.

Այն ժամանակ երբ այս դէպքերը տեղի էին ունենում Բրեսլաւում, տպարանական արհեստանոցների խաղաղ միջավայրում, ձեռնարկողների և բանւորների մի ուրիշ ծանր կռիւ ծագեց Գենտում, Բելգիայի ջուլհակային արդիւնաբերութեան գլխաւոր կենտրոնում *)։

1855 թւից սկսած, բանւորների շրջանում սկսել էր նկատւել մի խուլ շարժում. ժամանակակից լրագիրների մէջ, ճիշտ է, չի կարելի գտնել այդ շարժման մասին տեղեկութիւններ, բայց յետոյ նա ստիպեց դոկտոր Եակօբիին ասելու. «Բելգիայի սօցիալական կռւի այս նախակարապետները ապագայում պատմաբանների համար կունենան աւելի մեծ նշանակութիւն քան Սադօվայի ճակատամարտը»։

1857 թ. Գենտի արդիւնաբերական շրջանում համարեա ընդհանուր գործադուլ էր յայտարարւած ջուլհակային և մանելու արհեստանոցներում։ Բանւորները պահանջում էին աւելացնել բանւորավարձը և ոչնչացնել այն ներքին կանօնադրութիւնը, որ ստիպում էր նրանց աշխատել կիրակի օրերը։ Վճարել լուսաւորութեան վարձը և վարձատրել մեքենաների հետ պատահող վընասները։ Վեց շաբաթւայ կռւից յետոյ նրանց յաջողւեց բաւարարութիւն ստանալ իրանց պահանջների, բայց կօալիցիաների օրէնքի հիման վրայ կալանաւորեցին 40 բանւոր։ Նրանցից 25-ին վճռել էին 8 օրից մինչև 3 ամսւայ բանտարկութեանը. «Ջուլհակների եղբայրական ընկերութեան»—Broederlijke Wevers maatschapij—նախագահը և փոխ նախագահը ենթարկւեցին երկամեայ բանտարկութեան այն պատճառով, որ նրանք նամակով դիմեցին Րուբէի բանւորներին, խնդրելով նրանց իրանց նիւթական օժանդակութեամբ նպաստել գործադուլի յաղթանակին։

Դրանից 2 տարի յետոյ, 1859 թւի մարտին առաջ եկաւ ընդհարում (կօնֆլիկտ) քաղաքի գլխաւոր արհեստանոցներից մէկում։ Ջուլհակներն ու մանողները, որոնք մի տարի առաջ նոյնպէս կազմակերպւել էին իբրև դաշնակցութիւն, սկսեցին կռիւ, բողոքելու ֆաբրիկանտների դէմ, որոնք մտադիր էին կրճատել բանւորավարձի մէկ տասներորդ մասը, թէև այն ժամանակ ջուլ-

**) Տես լրացուցիչ մանրամասնութիւնները մեր Enquête sur les assaciation proffessionalle vol l. p. *1904* et suiv

հակի շաբաթական միջին բանւորավարձը կազմում էր 14 ֆր 58 ս. Աշխատանքը դադարեցնելու պատճառով Գենտի քաղաքագլուխ կոմս Kerchove-ի միջնորդութեամբ ձեռնարկողների հետ սկսեցին բանակցութիւնները՝ բայց դատարանական մարմինները, առանց բարձր վարչական իշխանութեան գիտութեան, առանց քաղաքային վարչութեան հետ կայացած որ և է համաձայնութեան, ոստիկանութեանը հրամայեցին գրաւել ջուլհակների դաշնակցական գանձարանը։ Այդ փողերը պահւում էին մի խանութում—„Le het zwart hondeka“ *(սև շնիկի մօտ)*—որ պահում էր դաշնակցական գանձապահը, նախկին ջուլհակ, որ չը կարողանալով որ և է զբաղմունք գտնել ֆաբրիկայում, այժմ ստիպւած էր խմիչքների առևտուրով ապրել։

Նա հրաժարւեց յանձնելու փողերը և այն ժամանակ պօլիցիական կօմիսարը կանչեց ժանդարմներին, կոտրեցին դաշնակցութեան գանձարանը և այսպիսով գրաււած գումարը—մօտ 700 ֆր.—վերադարձրին միայն երեք ամսից յետոյ, երբ գործադուլը վաղուց վերջացել էր եւ 39 բանւոր ենթարկւել էին պատժի կօալիցիա կազմելու պատճառով *).

Բայց գանձապահի խանութում կատարւած տեսարանի հէնց երրորդ օրը գործադուլ անող բանւորները իրանց տրամադրութեան տակ ունէին երկու անգամ աւելի դրամ, քան խլել էին նրանցից, որովհետեւ նրանց օգտին ժողովարարութիւն էին արել աշխատող ֆաբրիկաների դռների մօտ։ Գործատէրերը, շնորհիւ բանւորների այս համերաշխութեան եւ քաղաքագլխի խաղաղարար միջամտութեան, չը յաջողեցին զիջումներ անելու։

Ջուլհակների եւ մանողների օրինակով մի փոքր ժամանակից յետոյ Գենտում նոյնպէս կազմակերպւեցին եւ մետալլուրգիական բանւորները եւ 1860 թ. այս երեք սինդիկատները կազմեցին «Գենտի բանւորների ֆեդերացիան»։

---

*) Բելգիայի սօցիալիզմին նւիրած մեր գրքի մէջ, որ կազմել ենք J. Destrée-ի աշխատակցութեամբ մենք ղեկավարւելով ջուլհակների միութեան հրատարակած բրօշիւրով պատմել ենք այս դէպքի ուրիշ վերսիա։ Ըստ այն բրօշիւրի գանձարանի գրաւումը քաղաքագլխի գործն էր։ Այս քաղաքագլխի որդին վերջերս սակայն փաստաթղթերը ձեռքին ապացուցեց, որ նրա հայրը խաղացել է ընդհակառակն հաշտարարի դեր։ M. De Kerchove. La greve des tisserands gantois: *1859*. Bruxelles. Bruglant. *1904*.

«Գենտի բանւորների ֆեդերացիան»,—Բելգիայի առաջին դաշնակցութիւնն էր, որ ընդգրկում էր մի քանի արդիւնաբերութիւններ, և ստեղծել էր բանւորների միջոցով պաշտպանելու իրանց դասակարգային շահերը։ Սակայն նրա գոյութիւնը երկարատև չէր։

Հազիւ մի տարի էր անցել, և արդէն աննպաստ հանգամանքների մի շարք, առաջ բերեց նրա քայքայումը։

Աննպաստ հանգամանքներից առաջինը Gras Fabriel-ի, Գենտի ամենամեծ ֆաբրիկայի անյաջող գործադուլն էր։

Նախկին տարիների փորձից խրատւած Gras Fabriel-ի վարչութիւնը գիւղից բերեց գործադուլ անողների փոխարինող բանւորներ, որոնց համար հէնց ֆաբրիկայի շինութեան մէջ շինեց բնակարաններ։ Երբ սպառւեց գործադուլային ֆօնդ, ջուլհակները փորձեցին ջարդել ֆաբրիկայի դռները և դուրս վռնդել «սարացիներին»։

Գործին միջամտեց զինւորական ույժը և բանւորները մի քանի օրից յետոյ ստիպւած էին անպայման անձնատուր լինել։

Շուտով բորբոքւեց Հիւսիսային Ամերիկայի Նահանգների քաղաքացիական կռիւը, որի հետևանքն էր բամբակի սովը. 43 արդիւնաբերական ձեռնարկութիւնները նրանց սնանկ հրատարակեցին, ազգաբնակութեան $2/3$ մասը փողոց էր շպրտւած։

Մանողների և մետալլուրգիական բանւորների դաշնակցութիւնը ստիպւած էր՝ դադարեցնել իր գոյութիւնը։ Միայն ջուլհակների կազմակերպութիւնը կարողացաւ մի կերպ քարշ տալ իր գոյութիւնը մինչև 1863 թւականը, այն էլ իր անդամների թիւը 2000-ից իջեցնելով մինչև 300-ը։

Բայց 1857—1860 թւերի բանւորական շարժումը դատարանների անողոք վճիռները, պակաս դաժան, բայց թերևս, և՛ս առաւել անարդար պատիժները, որոնց ենթարկւեցին Բրուսելի տպարանական գրաշարները—այս բոլորը գոնէ այն հետևանքն ունեցան, որ ստիպեց հասարակութեանը ուշադրութիւն դարձնել Բելգիական Օրէնսգրքի §§ 415—416-ի աղաղակող արդարութեան վրայ։ Ձեռնարկողներից շատերը միացան բանւորներին և պահանջեցին պարլամենտից վերացնել այն բոլոր օրէնքները, որոնք կօալիցիաներին դատում էին իբր յանցանք։ Ազատամիտ մամուլը սկսեց եռանդոտ պայքար և այս լեգալ ագիտացիայից յետոյ—որ շնորհիւ պարլամենտական ձգձգումների և խարդաւանք-

ների տեւեց մի քանի տարի—արդարադատութեան մինիստր Ժիւլ Բօրան Բրէական Օրէնսգիրքը վերաքննելիս, հանեց նրանից այն գլուխը, որ վերաբերում էր կոալիցեաններին։ Այսպիսով 1866 թ. մայիսի 31-ի օրէնքը սկզբունքով նուիրագործեց բանւորների իրաւունքը առանց դատարանական հալածանքին ենթարկելու վըտանգի կազմակերպելու գործադուլները։

Սակայն սխալ կը լինէր ենթադրել, թէ այնքան ջանքերով ձեռք բերուած այս տարրական իրաւունքը, չի ենթարկւում այնպիսի սահմանափակումների, որոնք երբեմն անհնար են դարձընում նրանից օգտուելը։

Եւ իրաւ 1866 թ. մայիսի 31-ի օրէնքը, որ ձեւակերպուած է Նոր կանոնադրութեան 310 պարագրաֆի մէջ և որ յետոյ լրացուած է աւելի խիստ օրէնքով (1892 թ. մայիսի 30) սպառնում է դրակոնօրէն պատիժներով «ամէն մէկին, ով բանւորավարձը աւելացնելու կամ պակասացնելու, կամ արդիւնաբերական աշխատանքի և կամ բանւորական աշխատանքի ազատ ընթացքը խանգարելու նպատակով կը գործադրի բռնութիւն, կը հասցնի վիրաւորանք կամ կը դիմի սպառնալիքի, կը նշանակի տուգանք կամ պէնի, կորոշի արգելք կամ բօյկօտ, լինի դա բանւորների թէ գործատէրերի վերաբերմամբ։

Այս որոշումը, գոնէ իր բառացի մտքով, միատեսակ վերաբերում է թէ գործատէրէրին և թէ բանւորներին, բայց շնորհիւ դասակարգային չինօվնիկութեան, որ սիստեմատիքաբար աչքաթող է անում գործատէրերի կողմից գործադրուող բօյկօտը և խիստ պատժում է բանւորների ձեռնարկած ամէն մի միջոց, որպէսզի կարողանան խանգարել իրանց փոխարինողներին վնասելու նրանց շահերը, շնորհիւ դասակարգային չինօվնիկութեան Բրէական Օրէնսգրքի 310 պարագրաֆը դարձաւ բանւորների դաշնակցութիւնները հալածելու մի սոսկալի միջոց.

Այսպիսով պրօլետարիատը—առանձնապէս վերջին տարիները—եռանդուն պայքար է մղում փոխելու համար այդ պարագրաֆը, այն պայմանով ի հարկէ, որպէսզի գործադրեն ընդհանուր պատիժները վիրաւորանքի, բռնութեան և այլ ուրիշ յանցաւոր գործողութիւնների համար, որոնք տեղի կունենան կապիտալիստների ու բանւորների միջև տեւող կօնֆլիկտի ընթացքում։

§ 2 Ինտերնացիօնալ

Ինտերնացիօնալի ծագումով Բելգիայում սկսւում է բանւորական շարժման երկրորդ շրջանը. բայց այդ շարժումը այս անգամ այլ ևս չի սահմանափակւում միայն Գենտի ֆաբրիկաներով։ Նա իւրացնում է զուտ սօցիալիստական գծեր, թէև միևնոյն ժամանակ չէ կորցնում և իր պրօֆեսսիօնալ բնաւորութիւնը։

1867 թւին Վերվիէի բրդի արդիւնաբերութեան ազատ բանւորները (Francs ouvriers) և Solidarite' ընկերութիւնը Fayt ածխահանների փոքրիկ գիւղում, որ գտնւում էր Մօնսի և Շարլրուայի կենտրօնական շրջանում (Hainaut)—միացան Բրիւսսելում կազմակերպուած բանւորական դաշնակցութիւններին և Գենտի ջուլհակների միութեան և այդպիսով կազմեցին «Բանւորների Միջազգային Ընկերութեան» առաջին Բելգիական սեկցիաները *)։

1869 թւից շարժումը ընդունեց ահագին ծաւալ. դաշնակցութիւնները սնկի նման բսնում էին։ Բարածխի շրջանում բռնկեցին գործադուլներ, որոնք կրում էին խիստ յեղափոխական բնաւորութիւն և Բելգիական սեկցիաները, նոյն իսկ կօմմունայի պարտութիւնից յետոյ, չը նայելով իրանց թուլութեան, այնուամենայնիւ օգտւում էին այնքան ազդեցութեամբ, որ կարողանում էին յամառութեամբ յաջողեցնել իրանց գործադուլները, որոնք ծագել էին 1871—73 թւերին արդիւնաբերական գործունէութեան հրատապ շրջանում։

Այս գործադուլները, որոնք մասնաւորապէս բազմաթիւ էին երկաթագործային և արդիւնաբերութեան մէջ, նպատակն էր ընդունել տալ տասը ժամեայ բանւորական օրը։

Մետաղագործական բանւորները յաղթանակ տարան։

Բանւորները նոյնպէս յաջողեցրին բանւորական ժամերի որոշ կրճատումը։ Բայց սրանք Ինտերնացիօնալի՝ Բելգիայում ունեցած վերջին յաղթանակներն էին։ Արդիւնաբերական տագնապի շրջանում, որ սկսւեց այն «Ձաղ» տարիներից յետոյ, որոնք անմիջապէս յաջորդեցին ֆրանս-պրուսական պատերազմին, բանւորական կազմակերպութիւնները սկսեցին քայքայւել. նրանց մի բու-

*) Destre'e et Vandervelde. Le socialisme en Belgiqne 2 e'dition 1902.

ուրն ղեկավարներից այժմ պահանջւում էր եռանդի ահագին պաշար, որպէս զի կարողանային որ և է կապ պահպանել այն փոքրաթիւ ասսօցիացիաների միջև, որոնք դեռ շարունակում էին իրանց գոյութիւնը։

Այսպիսի պայմաններում զարմանալի չէ, որ աշխատանքի պաշտպանութեան օրէնքները, որոնք առաջարկւած էին բելգիական պարլամենտին Ինտերնացիօնալի ագիտացիայի շրջանում, կատարեալ անյաջողութիւն կրեցին։

1872 թ. փետրվարի 18-ին Բրիւսելի ազատամիտ պատգամաւոր դ-ր Ցլեմֆիկսը առաջարկեց մի օրինագիծ, որ փոփոխութեան էր ենթարկում հանքերում աշխատող երեխաների հասակին վերաբերող՝ 1810 յունվ. 3-ի օրէնքի § 29։ Խնդիրը կայանում էր նրանում, որ արգելէին գետնի տակ աշխատելու 13 տարեկանից փոքր տղաներին և 14 տարեկանից փոքր աղջիկներին։

Պարլամենտը այս առաջարկութեան քննութեանը դիմեց միայն 6 տարի յետոյ, այն է 1878 թ. փետրվարին։ Վիճաբանութիւնների ընթացքում Բրիւսելի մի ուրիշ պատգամաւոր Մ. Ժօտտրանը առաջարկեց միացնել Ցլեմֆիկսի օրինագծին մի սըրբագրութիւն, որ պիտի բացարձակապէս արգելէր կանանց և երեխաների աշխատանքը քարածխի հանքերում։

Հետաքրքիր է այն ընդունելութիւնը, որ այս երկու առաջարկութիւններն էլ գտան ցէնզաւոր ընտրութիւնների հիման վրայ կազմւած պալատում։

Ժօտտրանի սրբագրութիւնը, որ «սպիտակ չէպչիկներին» *) արգելում էր իջնել հանքերը, ստացաւ 5 ձայն ընդէմ 150-ի։

Իսկ ինչ վերաբերում է Ցլեմֆիկսի առաջարկութեան, նա ենթարկւեց կատաղի յարձակումներին պարլամենտի շատ անդամների, թէ ազատամիտ և թէ կղերական կուսակցութիւնների կողմից։ Նրա դէմ առանձնապէս բողոքում էր աջակողմեան կուսակցութեան այժմեան պարագլուխ Վեստէն։

Որպէսզի կարելի լինի գաղափար կազմել բելգիական բուրժուազիայի տրամադրութեան մասին, նրա կատարեալ տիրապե-

*) Այսպէս էին կոչում հանքերում աշխատող կանանց, որոնք մազերը ածխի փոշուց ազատ պահելու համար սպիտակ փաթաթան էին կապում գլխին։

տութեան շրջանում, մենք կը բերենք այն ճառի մի կտորը, որ այդ առիթով արտասանեց պ. Վեստէն։

«Ինչ են ուզում ռէգլամենտացիայի (օրէնքով սահմանելու) կողմնակիցները»—բացականչում էր նա 1878 թ. փետրւարի 20-ի նիստին—նրանք ասում են բանւորներին. դուք չը պէտք է թոյլ տաք ձեր կանանց և երեխաներին, որ նրանք իջնեն հանքերը։

Բայց ինչ կը կարողանան նրանք պատասխանել բանւորներին երբ սրանք էլ իրանց հերթին կասեն։

Դուք իբրև պետութեան ներկայացուցիչներ մեր կանանց և երեխաներին արգելում էք հանքերում աշխատել։ Շատ բարի։ Ուրեմն տւէք մեզ ուրիշ աշխատանք։ Եթէ դուք այդ բանը չէք կարող, այդ դէպքում տւէք նրանց գոնէ ապրուստի միջոցներ։

Ընդունելով առաջարկած օրէնքը, դուք դրանով սրբագործում էք աշխատանքի իրաւունքը և ապրուստի իրաւունքը, և եթէ դուք այնուհետև կը հրաժարւեք տալու բանւորին, նրա կնոջը և երեխաներին հաց և աշխատանք, այդ դէպքում դուք անխուսափելիօրէն կը ստիպէք նրանց, որ դառնան սօցիալական յեղափոխութեան կողմնակիցներ»։ Մենք—աջակողմեանները, դուք էլ ձախակողմեանները, որ մեզ նման չէք ենթադրում թէ կայ մի ինչ որ սօցիալական խնդիր, որ պիտի լուծել, մենք—չենք կարօղ թոյլ տալ աշխատանքի ռէգլամենտացիան, որովհետև այն ժամանակ մենք ոչինչ չենք կարողանալու ասել բանւորին, որ յենւելով իր մերձաւորների կարիքների վրայ, կը պահանջի իր համար աշխատանք և հաց» *)։

Չը նայելով այս փաստաբանութեան, չը նայելով նրան, որ պատգամաւորների ահագին մեծամասնութիւնը համաձայն էր հռետորի հետ, այնուամենայնիւ Ցլեմենկսի առաջարկութիւնը ընդունեց ներկայացուցիչների պալատը, որովհետև ինչպէս յայտնեց հասարակական աշխատանքների մինիստր Բերնաէրտը, այստեղ խօսքը վերաբերում էր աւելի շուտ «ոստիկանական միջոցին», քան աշխատանքի իսկական ռէգլամենտացիային։

Բայց երբ օրինագիծը անցաւ սէնատ, այնտեղ նա վերջնականապէս մերժեց և օրէնսդրական միջամտութիւնը կանանց և ե-

*) Annales parlamentaires. Chambrc des Repre'sentantes. Session de 1877—78. Se'ance du 20 Fe'vrier 1872.

բեխաների աշխատանքը կանոնաւորելու համար—իրականացաւ, այն էլ իբրև մի մասնակի միջոց—միայն 11 տարուց յետոյ, այն գործադուլներից և արիւնոտ ապստամբութիւններից յետոյ, որ բռնկեցին Շարլըրուայի քարածխային շրջանում։

§ 3. Բանւորական կուսակցութիւնը

Ինտերնացիոնալի քայքայումից յետոյ յաճախ փորձեր էին անում համախմբելու այն բոլորը, ինչ դեռ մնացել էր պրոլետարական կազմակերպութիւններից։

Մի քանի ղեկավարներ 1875 թ. հիմնեցին աշխատանքի պալատը, Բրիւսէլի ընկերութիւնների ֆեդերացիան։ Յաջորդ տարին, «Բելգիական բանւորական դաշնակցութիւնը» հիմնելու անյաջող փորձից յետո, Գենտի սօցիալիստները հիմնեցին «Ֆլամանդական բանւորական սօցիալիստական կուսակցութիւնը»։ Վերջապէս 1879 թւի յունվարի 12-ի շնորհիւ Բրիւսէլի աշխատանքի պալատի օրգան «Բանւորի ձայն» թերթի, Բրիւսէլում հաւաքուեց համագումար, որ միաձայն վճռեց հիմնել Բելգիայի սօցիալիստական կուսակցութիւնը *)։

Այս մոմենտից սկսած ընդհանուր ընտրողական իրաւունքի օգտին մղւող պայքարը, որ սկսել էր դեռ 1866 թւականից **), սկսում է աչքի ընկնող չափեր ընդունել, իսկ միւս կողմից Գենտում հիմնուած նշանաւոր կօօպերատիւ «Vorruit» («Յառաջ») ընկերութիւնը սօցիալիստական ուղղութիւն է տալիս և նորածին կօօպերատիւ շարժման։

Բառիս խսկական մտքով սօցիալիստական կուսակցութեան կողքին մնում էին դեռ մի քանի, աւելի մեղմ տենդենցներ ունեցող, բանւորական ընկերութիւններ, որոնք չէին համարձակւում բացարձակապէս անւանել իրանց սօցիալիստական։ Գոյութիւն ունէր նոյնպէս և մի շարժում, որ ձգտում էր կազմակերպել փոխադարձ օգնութեան գործը. սակայն մինչև մեր նկարագրած

*) Մանրամասնութիւնները տես L. Bertrand. Le parti ouvrier belge et son pragramme. Bruxelles, 1886.

*) Ցօգուտ ընտրողական իրաւունքի բարեփոխութեան արած շարժման առաջին քայլի մասին տես Edmond Picard. Histoire du re'gime censitaira en Belgique. Bruxelles, Zarcier, 1883

ժամանակը նա յամառութեամբ սահմանափակւում էր հիւանդութեան դէպքում ապահովագրելու գործի շրջանակներում։

Բրիւսէլի բանւորական լիգան յուսալով, որ կարող է համախմբել այս ցիր ու ցան ույժերը, որոշեց ժողովել նոր համագումար, ուր պիտի հրաւիրուէին առանց բացառութեան բոլոր բանւորական ընկերութիւնների պատգամաւորները։

1885 թ, ապրիլի 5-ին, 59 ընկերութիւնների ներկայացուցիչ 100-ի չափ պատգամաւորները հաւաքուեցին «Hôtel de Ville» հրապարակի վրայ գտնւող «Կարապ» սրճարանը։ Այստեղ էին մի կողմից զուտ սօցիալիստական խմբերը. գենտի «Vorouit»-ը, Անտվերպենի «Werker» (բանւոր) կօօպերատիւ ընկերութիւնը. համագումարից մի փոքր առաջ Բրիւսէլում կազմակերպւած «բանւորական լիգաների և դէմօկրատ ֆէդէրացիաների դաշնակցութիւնը»։ Այնտեղ միւս կողմից ներկայ էին տնտեսական խմբերի ներկայացուցիչները, որոնք զբաղուած էին գլխաւորապէս պրօֆեսսիօնալ շահերի պաշտպանութեամբ և փոխադարձ օգնութեան զարգացման գործով, ինչպէս օր. Շարլըրուայի «ապակագործների դաշնակցութիւնը», Բրիւսէլի «ընդհանուր բանւորական կազմակերպութիւնը» և այլն։

Այդ երկու տենդենցները արտայայտուեցին համագումարի հէնց սկզբին, երբ վճռւում էր այն հարցը, թէ ինչ անուն տալ նոր կուսակցութեան։ Գենտի պատգամաւորները առաջարկեցին «Սօցիալիստական կուսակցութիւն» անունը, իսկ բրիւսէլցիները իրանց ղեկավար Ժան Վոլդերի օրգանի միջոցով խնդրում էին ֆլամանդական ընկերներին մի փոքր ջուր խառնել իրանց կարմիր գինուն և միութիւնը կայացնելու համար ընդունել «բանւորական կուսակցութիւն» անունը։ Վերջին առաջարկութիւնը յաղթանակեց, սօցիալիստները սիրով միացան այս առաջարկութեան մանաւանդ որ այս անունը ամենից լաւ էր ցոյց տալիս, որ կայ մտադրութիւն ստեղծելու մի դասակարգային կուսակցութիւն ընդդէմ այն երկու բուրժուական կուսակցութիւններին, որոնք ամբողջ յիսուն տարի յաջորդաբար իրանց ձեռքն էին առնում իշխանութեան ղեկը։

«Բանւորական կուսակցութիւն»,—վերջերը գրում էր Ցեզար դը Պապը,—կայ արդեօք մի ուրիշ անուն, որ լինէր աւելի լայն, աւելի պարզ և միաժամանակ աւելի ճիշտ։ Ով կարող է պնդել,

որ այստեղ անհրաժեշտ է աւելացնել—սօցիալիստական, կոլլեկտիւիստիկան, կօմմունիստական, ռացիօնալիստական, դէմօկրատիական, հասարակապետական և կամ մի այլ սահմանափակող մակդիր:

Բանւորական կուսակցութիւնը նշանակում է դասակարգային կուսակցութիւն: Իսկ երբ բանւորական դասակարգը կազմել և որոշել է իբրև առանձին կուսակցութիւն, ուրիշ ի՞նչ կարող է լինել նա իր տենդենցներով և սկզբունքներով, եթէ ոչ հասարակապետական»:

Այս բանը ամենահամոզեցուցիչ կերպով ապացուցանելու համար աշխատեցին հէնց այն դէպքերը, որոնք տեղի ունեցան բանւորական կուսակցութիւնը հիմնելուն յաջորդող տենդային պայքարի շրջանում:

1886 թ. մարտի 18-ին Պարիզի Կօմմունայի տարեդարձին աննշան և բաւական անմիտ մի ժողովրդական շարժում Լիէժէում առեղծեց անկարգութիւններ և խանգարեց բուրժուազիայի հանգստութիւնը: Այդ շարժումը պօլիցիան հէնց իր միջոցներով արագութեամբ ճնշեց, այնպէս որ նա գուցէ և բոլորովին մոռացւէր, եթէ որ այնուհետև նրան չը յաջորդէին ուրիշ աւելի նշանակալից դէպքեր:

8 օր յետոյ մարտի 25 և 26-ին անսպասելի կերպով բռնկեց Շարլըրուայի շրջանի ապակէ արտադրութեան և քարածխի է բանւորների հսկայական գործադուլը: Մի քանի ժամից յետոյ աշխատանքը ամենուրէք դադարեց: Փայտերով զինւած ամբոխը մտնում էր հանքերի դռները և սպառնում էր կոտրատել շինութիւնները և փակել օդանցքները, եթէ որ անմիջապէս չեն ազատի աշխատանքից գետնի տակ բանող բանւորներին: Յուզումը քանի գնում աւելանում էր և շուտով սկսեցին ֆաբրիկաների հրձիգութիւնները. ամբողջ մի շարք արդիւնաբերական գործարանները ենթարկւեցին աւերածութիւնների և միայն 2 օրից յետոյ զինուորական ոյժը կոտորածի միջոցով կարողացաւ դադարեցնել այս շարժումը, որ ոչ ոք չէր կարող նախատեսել, որովհետև նա առաջ չէր բերել միայն շարժման մասնակիցների աղքատութիւնը:

Բանւորական կուսակցութիւնը չէր մասնակցում այն ապստամբութեան, բայց ողբալով ապստամբների կատարած էկսցես-

ները, նա միևնոյն ժամանակ խարազանում էր ապստամբութիւնը ճնշելու նպատակով թոյլ տրւած խայտառակ չարագործութիւնները և կատարւած դէպքերի ամբողջ պատասխանատուն նա համարում էր ղեկավար և ունևոր դասակարգերը:

Մարտի ապստամբութեան ղեկավարներից շատերը ենթարկւեցին շուտով դատարանական հալածանքի: Էդվարդ Անսեէլին, օր., երդւեալ դատաւորների դատարանը վճռեց 6 ամսւայ բանտարկութիւն, որովհետև նա իր „Vooruit“ („Յառաջ“) թերթում հրատարակել էր քաղաքացուհի-մայրերին ուղղւած մի դիմում, որով նա խնդրում էր նրանց գրել զինուորական ծառայութեան մէջ գտնւած իրանց որդիներին, որ սրանք գնդակ չարձակեն իրանց բանւոր-եղբայրների դէմ: Նոյնպէս դատարանական հալածանքի ենթարկւեց և մի ուրիշ գրող Ալֆրեդ Դէֆիսսօն, այժմ հանգուցեալ, որի յիշատակը Բօրինաժի լեռնային բանւորները համարեա սրբացրել են. նրան ևս Բրիւսէլի երդւեալ դատաւորների դատարանը պատժեց նրա հրատարակած «Ժողովրդի Հաւատամքը» պամֆլետի համար, մի պամֆլետ, որ գրւած էր ի պաշտպանութիւն ընդհանուր ընտրողական իրաւունքի, տարածւել էր հազարներով և ունէր զարմանալի յաջողութիւն:

Այնուհետև, թէև 1886-ի մարտի ապստամբութիւնը ճնշւեց բացառիկ խստութիւններով, բայց և այնպէս այս յուզմունքները գոնէ այն հետևանքն ունեցան, որ զուգադիպելով նոր բանւորական կուսակցութեան անընդհատ ծաւալւող պրօպօգանդին, ստիպեցին բուրժուազիային հակառակ Վէստէի 1878 թւին արած յայտարարութեան, ընդունել, որ գոյութիւն ունի սօցիալական խնդիրը: Յուզումներից մի քանի ամիս առաջ հասարակական աշխատանքների մինիստրը պատասխանելով Լիէժի մի դէպուտատ պ. Հանսենսին, որ մատնանիշ էր անում իր շրջանի քարածխային արդիւնաբերութեան սոսկալի կրիզիսը, մինիստրը յայտարարում էր, որ բանւորների դրութիւնը այնքան էլ վատ չէ, ինչպէս պնդում են ուրիշները և որ միւս կողմից մասնաւոր բարեգործութեան առեղծած հիմնարկութիւնները այնքան լայնարձակ են, որ կարող են թեթևացնել պրօլետարիատի կարիքները:

Բայց Շարլըրուայի գործադուլից յետոյ սկսեցին լսել և բոլորովին ուրիշ ձայներ և 1886 թւի հոկտեմբերին արքայական դիմումը պարլամենտին սկսում էր հանդիսաւոր mea culpa-ով,

սեփական մեղքի խոստովանութեամբ, որ հազիւ կարելի էր մեղմել այդպիսի դէպքերում սովորութիւն դարձած նախատինքներով, որ ողղում են դէպի «պարագլուխներն ու խռովարարները»։

«Վերջին ժամանակները Լիէժի Շարլըռուայի շրջանում տեղի ունեցան չափազանց տխուր դէպքեր. բայց դրանց պատասխանատւութիւնը գլխաւորապէս ընկնում է նրա վրայ, ով առաջ բերեց այդ դէպքերը ամբոխին գրգռելով։ Այժմ, երբ արդարադատութիւնը սսել է իր խօսքը, ես կարող եմ ներողամիտ լինել դէպի այդ թշուառ մոլորեալների աճագին մեծամասնութիւնը։»

«Աշխատաւոր դասակարգի դրութիւնը արժանի է չափազանց մեծ ուշադրութեան և օրէնսդրութեան պարտականութիւնն է—գտնել նրա բարւոքման միջոցները»։

«Ընդհանրապէս խօսելով, թերևս կարելի է պնդել, որ ազատութեան սկզբունքների այնքան բարերար ազդեցութեանը այս խնդրում տրւած է աւելի քան մեծ նշանակութիւն։ Արդարութիւնը պահանջում է, որ օրէնքը թոյլերի և թշւառների համար մասնաւորապէս ստեղծի պաշտպանութիւն»։

Այս ճառի հետևանքն այն էր, որ կառավարութիւնը նշանակեց «կոմիսսիա աշխատանքի դրութիւնը ուսումնասիրելու համար» *)։ Երկրի բոլոր արդիւնաբերական կենտրոններում բանւորները իրանց ընտրեալ բանւորների միջոցով յայտնեցին իրանց ամենաճնշող կարիքների մասին և երկու թէ երեք տարւայ ընթացքում օրէնսդրական մեքենան գործում էր յօգուտ բանւորական դասակարգի։

Սօցիալական կեանքի ուսումնասիրութեան տեսակէտից ոչ մի բան չի կարող այնքան խրատական լինել, որքան այն կօնտրաստը, որ գոյութիւն ունի այդ երկու, միմեանցից միայն 1896 թ. մարտի գործադուլներով բաժանւած, շրջանների մէջ։

Մինչև 1886 թ. համարեա գոյութիւն չունէր աշխատանքի պաշտպանութեան օրէնսդրութիւնը։ Այս տեսակէտից ամբողջ օրէնսդրութիւնը սահմանափակւում էր նախ՝ այն օրէնքներով, ո-

*) Commission du travail, institute' par Arre'te' royal du 15 Avril 1886 4 volumes. Bruxelles, 1887.—Այս խառնշփոթ և թերի անկէտի մասին Դենին միանգամայն իրաւունք ունէր սսելու. «Գիտութիւնը—ես անձնական փորձով համոզւեցի—միայն հազւագիւտ դէպքում կարող է քաղել այդ անկէտից օգտակար ցուցմունքներ»։

րոնք վերաբերում էին խնայողութիւններին, փոխադարձ օգնութեան, կօօպերացիային և երկրորդ՝ նրանով, որ վերացրել էր արդիւնաբերական պօլիցիային վերաբերող Նապօլէօնական կանոնների մի քանի մնացորդները, ինչպէս օր. կօալիցիաներին վերաբերող օրէնքը, պարտադիր բանւորական գրքոյկների օրէնքը կամ Քաղաքացիական Օրէնսգրքի § 1781, որ գործատիրոջ ցուցմունքին բանւորի ստացած վարձի մասին, տալիս էր պաշտօնական նշանակութիւն։

1886 թւից սկսած մէկը միւսի յետևից ընդունւեցին. 1887 թւի ապրելի 16-ի օրէնքը վարձատրելու սիստեմին վերաբերեալ (truck—system-ի արգելումը). 1887 թ. օգոստոսի 16-ի օրէնքը արդիւնաբերական և բանւորական խորհուրդների վերաբերեալ. 1887 թւից օգոստոսի 16-ի օրէնքը, որ արգելում է բանւորավարձը որ և է երրորդ անձնաւորութեան տալը և բանւորավարձի արգելք դնելը բանւորի որ և է պարտքը ապահովելու համար. 1885 թ. մայիսի 5-ի օրէնքը աշխատանքի տեսչութեան վերաբերեալ. 1889 թ. օգ. 9-ի օրէնքը բանւորական բնակարաններին վերաբերեալ և վերջապէս կանանց և երեխաներին վերաբերող 1889 թ. դեկտեմբերի 13-ի օրէնքը, որ պարունակում էր իր մէջ անմիջապէս մարտի դէպքերի յիշողութեամբ պայմանաւորւած մի շարք օրէնսդրական միջոցներ։

Այս ժամանակից սկսած պարլամենտական շրջաններում գերիշխող նշանակութիւն են ստանում քաղաքական հարցերը և ընտրողական րէֆօրմը աւելի մեծ կարևորութիւն է ստանում մանաւանդ այն ժամանակ, երբ պահպանողականները վերջերը փորձեցին խուսափել նրանից։

Եւ իրաւ բանւորական կուսակցութիւնը 1886 թ. անընկճելի պայքար էր մղում յանուն ընդհանուր ընտրողական իրաւունքի։ Բանւորական կուսակցութիւնը, որ երկար ժամանակ բաժանւած էր երկու խմբի, որոնցից մէկը, որ ուժեղ էր առանձնապէս Վալօնիայի արդիւնաբերական կենտրոններում, մեղադրում էր միւսին՝ այն է Գենտի և Բրիւսէլի բանւորներին, սրանց յեղափոխական աւիւնի պակասութեան համար—այդ կուսակցութիւնը վերջին տարիները վերջնականապէս համախմբւեց։ 1880 թ. Բրիւսէլի առաջադէմ պատգամաւոր Պօլ Եանսօնը առաջարկեց վերաքննել սահմանադրութիւնը ընդհանուր ձայնատւութիւնը մտցնելու

իմաստով։ Նման առաջարկութիւնները 1870, 1883 և 1887 թւերին ամբողջապէս մերժել էին «քննութեան ենթարկել»։ Այս անգամ քննութիւնը միաձայն թոյլ էր տրւած՝ բայց մի քանի ամսից յետոյ պալատի բոլոր սեկցիաները բացի մէկից մերժեցին այդ օրինագիծը։

Ի նկատի ունենալով այս տեսակ վերաբերմունքը, բանւորական կուսակցութիւնը 1891 թ. ապրիլի 5-ին որոշեց դիմել ընդհանուր գործադուլի, որպէսզի դրանով ստիպի կառավարութիւնը սահմանադրութիւնը վերաքննելու։ Մօտակայ մայիսի 1-ին չընդունելով կուսակցութեան ընդհանուր խորհրդի հակառակ կարծիքին, որով նա այժմ էլ կամենում էր դեռ սպասել, 100,000-ից աւելի քարածխային բանւորները դադարեցրին աշխատանքը։ Գործադուլը շուտով անցաւ և միւս արտադրութիւններին։ Շարժումը տարածւեց բոլոր խոշոր քաղաքներում և պալատի կենտրոնական սեկցիան վերջ ի վերջոյ քաղաքական կռւի այս՝ այն ժամանակ դեռ անծանօթ նոր ձևի ազդեցութեան տակ, սկզբունքով միաձայն ընդունեց սահմանադրութեան վերաքննութիւնը, որ այնուհետև շուտով ընդունեց և ընդհանուր ժողովը։

Բայց սա դեռ միայն առաջին քայլն էր։ Վերաքննութիւնն ընդունելուց յետոյ (1892 թւի մայիսի 10-ին) դեռ հարկաւոր էր իմանալ, թէ ինչպիսի ընտրողական ռէժիմ է ստեղծելու սահմանադիր ժողովը։ Պահպանողական կուսակցութիւնը սկսել էր կամաց կամաց ուշքի գալ և տրամադրութիւն էր ցոյց տալիս ցենզը փոխարինելու այնպիսի մի սիստեմով, որ անգլիականի նման, ընտրողական իրաւունքը տար նրանց, ովքեր ունեն առանձին բնակարաններ և որոշ պրոֆեսիաներ։ Բայց պարլամենտի առաջին, անբարեյաջող որոշումներին (1893 թ. ապրիլ․) բանւորութիւնը պատասխանեց նոր, քաղաքական աւելի հսկայական գործադուլով, քան 1891 թւի գործադուլը։ Նա շարունակւում էր ամբողջ մի շաբաթ և մասնակցում էին նրան երկու հարիւր հազարից աւելի մարդ։ Շատ տեղեր անկարգութիւններ տեղի ունեցան։ Գենտում և Բրիւսելում գործը հասաւ մինչև կատաղի ընդհարումների։ Անտւերպենում զօրքի գնդակներից սպանւեց 6 մարդ։ Ապրիլի 18-ին յայտնի եղաւ որ նախընթաց օրը Բօրինաժի ածխահանները ուզեցել էին թափորով մտնել Մօնս, որտեղ տեղական վարչութիւնն արգելել էր ցոյցերը, և որ ազգային գվար-

դիան գործադրել էր զէնք և 6 հոգու սպանել և 12-ին վիրաւորել էր։ Յուզումը քանի գնում այնքան աւելի էր ծաւալւում և թւում էր, որ երկիրը գտնւում է յեղափոխութեան նախօրեակին, երբ յանկարծ պալատը իր խառնիխուռն և շփոթւած նիստին, չընդունելով մի խումբ յեղափոխականների հակաճառութիւններին, որոնք մեղադրում էին երկչոտութեան համար, 119-ի ձայնով ընդդէմ 14-ի ընդունեց մի օրինագիծ, որ տալիս էր ընտրողական իրաւունք 25 տարին լրացած բոլոր քաղաքացիներին, բայց միևնոյն ժամանակ տալիս էր 2 կամ նոյն իսկ երեք ձայն մտաւոր աշխատանքի ներկայացուցիչներին, սեփականատէրերին և ընտանիքի այն գլխաւորներին, որոնք տարեկան վճարում էին 5 ֆր. ուղղակի հարկ։

Այս պահպանողական գարանտիաների միջոցով նրանք յոյս ունէին խանգարել, որ սօցիալիստները մտնէին պալատը։

Սակայն հէնց առաջին ընդհանուր ընտրութիւնները, որ կայացաւ համաձայն նոր օրէնքի, ցոյց տւեցին, թէ որքան զուր էին այդ յոյսերը և 1894 թ. հոկտեմբերին ընդամենը 152 անդամից 28 հոգի սօցիալիստ պատգամաւորներ ընտրւեցին երկրի գլխաւոր արդիւնաբերական շրջանների կողմից։

Կղերական պատգամաւորական կուսակցութիւնը, որ այն ժամանակ իր ձեռքին էր պահում քաղաքական իշխանութիւնը (որ և այժմ էլ դեռ պահում է), ցանկանալով սօցիալիստ պատգամաւորների աւելանալու առաջն առնել և յուսալով, որ ազգային գաթայից մի քանի կտոր շպրտելով կարելի է հաշտւել բանւորական կուսակցութեան հետ, վճռեց հետևեալ տարիների ընթացքում հրատարակել մի շարք նոր սօցիալական օրէնքներ *)։

1894 թւի նոյեմբերի 22-ի սեսսիան բանալիս արքայական դեկրետի հիման վրայ բացւած էր Աշխատանքի դեպարտամենտը, որ առաջարկում էր հիմնել դեռ 1890 թ. Պօլ-Եանսոնը։ Սակայն այդ առաջարկութիւնը այն ժամանակ ոչ մի ձայն չըստացաւ կենտ-

---

*) 1893 թւի վերաքննութիւնը և բելգիական բանւորական կուսակցութեան քաղաքական գործունէութիւնը մինչև նրա անյաջող փորձը (1902 թ.) ընդհանուր ընտրողական իրաւունքը ձեռք բերելու կարելի է գտնել Destrée et Vandervelde-ի „Le socialisme en Belgigue“ 2 partie chap. III n. x.

րօնական սեկցիայում, որի պարտականութիւնն է կազմում օրինագծերի նախնական քննութիւնը... Բայց շուտով ինքը Աշխատանքի դեպարտամենտն էլ անբաւարար համարւեց. այս պատճառով հիմնւեց Աշխատանքի և Արդիւնաբերութեան Մինիստրութիւն, որի գլխաւոր կոչումն է մշակել նոր սօցիալական օրէնքներ։

Գլ. IV.

ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՕՐԷՆՍԴՐՈՒԹԻՒՆԸ

1904 թւի մարտի 21-ին Բելգիայում տօնում էին ֆրանսիական քաղաքացիական օրէնսգրքի հարիւրամեակը. Այն ժամանակ մեր բարեկամներից երկուսը բելգիական պարլամենտին ներկայացրին մի գիրք, որ ծաւալով հաւասար էր ամբողջ քաղաքացիական օրէնսգրքին և պարունակում էր իր մէջ այն որոշումները, որոնցով վերջին տարիները անհրաժեշտ էր դատւած լրացնել Նապօլէօնի օրէնսդրութեան այն մասը, որ վերաբերում էր «վարձելու պայմանագրին և արդիւնաբերութեան»։

«Աշխատանքի օրէնսգիրքը»—որ մենք առանձնապէս յանձնարարում ենք մասնաւորապէս մեր երկրի բանւորական օրէնսդրութեամբ զբաղւելու բոլոր ցանկացողներին, իր կազմողների կարծիքով, նպատակ ունի ծանօթացնելու հասարակութիւնը և գլխաւորապէս բանւորներին այն օրէնքների բնագրի հետ, որոնք սրբագործում են նրանց իրաւունքները։

Այդ օրէնքներից կարևորագոյնները վերաբերում են վարձելու պայմանագրին, բանւորական գրքոյկներին, վարձատրելու սիստեմի կանոնաւորման, ներքին գործարանական կեանքի կանոններին, հաշտարար կամերաների կազմակերպութեան, արդիւնաբերութեան և աշխատանքի խորհուրդներին, աշխատանքի պաշտպանութեան, դժբաղդ դէպքերում վարձատրութեան, պրօֆէսիօնալ միութիւններին, կօօպերատիւ ընկերակցութիւններին, Բանւորական բնակարաններին և ծերութեան հասակում թոշակին։

Մեր տեսութիւնը հեշտացնելու համար, համապատասխան որոշումները մենք կը դասաւորենք ըստ հետևեալ ռուբրիկաների. 1) Ֆիլանտրօպիական (մարդասիրական) օրէնքները, որոնք վերաբերում են խնայողութեանը և բանւորական բնակարաններին և որոնք նպատակ ունեին նպաստելու բանւորներին, որ սրանք ձեռք բերեն փոքրիկ սեփականութիւն, 2) օրէնքներ, որոնք օրինականացնում են ասսօցիացիայի մի քանի ձևերը. 3) օրէնքներ, որոնք վերաբերում են բանւորների ապահովագրութեան նրանց աշխատանքի կարօտութիւնից զրկւելու դէպքում. 4) օրէնքներ, որոնք որոշում են վարձելու պայմանագիրը, 5) օրէնքներ որոնք որոշում են գործարանային տեսչութեան իրաւունքներն ու պարտականութիւնները և քննում են գործարանների և բանւորների միջև տեղի ունեցող կօնֆլիկտները։

§ 1. Խնայողութիւնները և բանւորական բնակարանները

Կարող է տարօրինակ երևալ, որ մենք մեր տեսութեան մէջ—որի նպատակն է նկարագրել բանւորական դասակարգի կռիւը իր «կեանքի մակերևոյթը» բարձրացնելու և կապիտալիստական շահագործումից ազատագրւելու համար—որ այդ տեսութեան մէջ մենք տեղ ենք տալիս այն օրէնսդրական որոշումների, ինչպէս են խնայողական գանձարանների օրգանական օրէնքը, կամ բանւորական բնակարանների օրէնքը, որոնք հէնց իրանց՝ օրէնսդիրների ասելով, հրատարակւել էին միայն այն նպատակով, որպէսզի դրանով կարողանային պրօլետարիատին յետ կասեցնել նրա դասակարգային կռւից, տալով նրան մի փոքր շարժական կամ անշարժ սեփականութիւն։

Բայց փորձը ցոյց տւեց, որ այդպիսի միջոցները հասցնում են այնպիսի հետևանքների, որոնք միանգամայն հակառակ են այն բանի, ինչ որ սկզբում—սպասում էին. խնայողութիւնների ստատիստիկան օր. ցոյց է տալիս, որ, իբրև ընդհանուր կանօն, սօցիալիզմը հաշւում է իր հետևողների ամենամեծ մասը այն շրջաններում, որտեղ առանձնապէս զարգացած են խնայողութիւնները։

Պետութեան կողմից ապահովւած խնայողական գանձարանները հիմնել է 1865 թ. նշանաւոր լիբերալ մինիստր Օրբանը։

Մինչև այդ գոյութիւն ունէին միայն այնպիսի գանձարանները, որոնք հիմնում էին համայնական վարչութիւնները և կամ որոնք կապւած էին որևէ մասնաւոր արդիւնաբերական կամ ֆինանսական հիմնարկութեան հետ։

Բացի դրանից բանւորներից շատերը իրանց խնայողութիւնները յանձնում էին մանր տրակտիրչիկներին, որոնք այնուհետև մտցնում էին շրջանառութեան մէջ։

Այժմ մասնաւոր խնայողական գանձարաններում կենտրոնացած է բանւորական դասակարգի և մանր բուրժուազիայի խնայողութիւնների միայն աննշան մասը—35-ից 40 միլիոն—մինչդեռ միացած, օրէցօր աճող գումարները հոսում են պետական գանձարանները *)։

1893 թ. դեկտ 31-ին ըստ խնայողական գրքոյկների, հաշւելով և աւելացած տոկոսները, կար 734,981,000 ֆր. որոնցից 16,971,000 ֆր. պատկանում էր հասարակական հիմնարկութիւններին, իսկ 718,010,000 դրւած էր մասնաւոր մարդկանց կողմից։

Եօթը հարիւր միլիոնից աւելի՛. Թիւը խոշոր է և պահպանողական քաղաքագէտները մի բերան գոռում են այդ թւի մասին, իբրև անհրաժեշտ է բանւորական դասակարգի աճող բարօրութեան պատճառով ձօն-կարդալ կապիտալիստական կազմին։

Սակայն չը պէտք է մոռանալ, որ այս ընդհանուր թիւը գալիս է երկու միլիօն մարդու (2,093,171 մարդ 1903 թ. դեկտ. 31), որոնցից շատերն էլ, բացի դրանից, բոլորովին էլ բանւոր չեն (խայողական գանձարանների վերջին հաշւետւութեան համաձայն խնայողութեան տէրերի 35%-ը ազատ պրոֆեսեաների ներկայացուցիչներ են)։

Ամեն մի խնայողական գրքոյկին գալիս է միջին թւով 351 ֆր. 93 ս., բացի դրանից գրքոյկների ահագին մեծամասնութիւնը չի հասնում այդ միջին թւի (պէտք է ենթադրել, որ այդ գրքոյկները պատկանում են ֆիզիքական աշխատանքով պարապող բանւորներին)· 1903 թւին ամեն մի 100 գրքոյկից 42-ը ունէին 1 ից մինչև 20 ֆր· խնայողութիւն, 18,5—20 մինչև 100 ֆր., 18,8—100 մինչև 500 ֆր. 7,8—500 մինչև 1000 ֆր., 11,6—1000 մինչև 2000 ֆր. 0,9—2000 մինչև 3000, 0,4—3000 ֆր-ից աւելի.

Այսպէս ուրեմն, պետական գանձարաններում խնայողութիւն ունեցող ամեն մի 100 մարդուց 80 հոգին (79,3) ունէին 500 ֆր. պակաս խնայողութիւն, հաշւելով տարեկան 3%, կը ստանանք տարեկան ամենաշատը 15 ֆր. եկամուտ։

*) Compte rendu du opêrations de la Casse dépargne et de retraite. Anne'e 1903.

Համաձայնեցէք, որ այսպիսի եկամուտը պրօլետարիատին շահագործող չի դարձնիլ։

Թէև ամեն մի խնայողութիւն առանձին վերցրած մի փոքրիկ գումար է,—une simple poire pour la soif—ծարաւ մարդու համար մի կաթիլ ջուր, բայց միասին վերցրած նրանք կառավարութեան տրամադրութեան են յանձնում մի կապիտալ, որ մի քանի տարուց յետոյ, եթէ նոյն թափով աւելանայ, միլլիարդից կանցնի։ Այս պատճառով վերջին տարիները սօցիալիստները աշխատում են համոզել բանւորներին, որ սրանք իրանց խնայողութիւնները յանձնեն ոչ թէ այն գանձարաններին, որոնց պահում է պետութիւնը, համայնքը, ֆինանսական հիմնարկութիւնները կամ արդիւնաբերական գործարանատէրերը, այլ այն գանձարանները, որ ստեղծում է ինքը բանւորական դասակարգը—այն է կօօպերատիվ միութիւնների գանձարանը, կամ մտցնել այնպիսի արդիւնաբերական ձեռնարկութիւնները, ինչպէս օր. կօօպերատիվ ջուլհակային ֆաբրիկան, որ մօտ ժամանակներս բացւել է Գենտում։

Էդւարդ Անսելէի դիմումը Գենտի բանւորների վստահութեանը բաւական էր, որ այդ բանւորների խոշոր մեծամասնութիւնը իր փողերը հանէր խնայողական գանձարաններից և անմիջապէս յանձնէր նրան որպէս զի սա կազմէր այս ֆաբրիկան հիմնելու համար անհրաժեշտ կապիտալը։

Սակայն նկատենք, որ այսպիսի գործադրութիւն կարող են տալ միայն նրանք, որոնք, կարող են հրաժարւել իրանց խնայողութիւնը ամեն մի րոպէ յետ պահանջելու իրաւունքից։

Այս էլ պէտք է ասել, որ այդպիսի մի հնարաւութիւն իր խնայողութիւնը անմիջապէս յետ ստանալու գոյութիւն ունի այն խնայողական կասսաներում որոնք կապւած են մի քանի սօցիալիստական կօօպերատիվ հիմնարկութիւնների հետ, ինչպէս են «Le Progrés» ժիլօմենում կամ Բրիւսէլի «Ժողովրդական Տունը»։

Բայց այս վերջին գանձարանները առ այժմ մեծ նշանակութիւն չունեն, և ժիլօմենում, որտեղ ընդունւած է աճման 5% նորման, առանձին անհատների խնայողութիւնները, սովորաբար, չեն ընդունում, աշխատում են ընդունել միայն բանւորական ասսօցիացիաների խնայողութիւնները, բայց հնարաւոր է—և նոյն իսկ շատ հաւանական—որ բանւորական կուսակցութիւնը մի քանի տարուց յետոյ կունենայ իր կենտրօնական խնայողա-

կան գանձարանը, որ պրօլետարիատի կուտակած միջոցները կը տայ հէնց իր ստեղծած հիմնարկութիւններին։

Այժմ, ընդհակառակն, պետական խնայողական գանձարաններում գտնուած գումարների մեծ մասը գործադրւում է նրա վրայ, որ գնում են պետական թղթեր, ակցիօներական ընկերութիւնների՝ պետութեան կողմից ապահովւած օբլիգացիաները, քաղաքային վարկի ընկերութիւնների օբլիգացիաները, գաւառական, քաղաքային կամ համայնական փոխառութիւնների թղթերը, կամ բելգիական ակցիօներական ընկերութեան օբլիգացիաները. բանուորական դասակարգի փողերը այսպիսով ծառայում են կապիտալիզմի քաղաքական և տնտեսական տիրապետութիւնը ամրացնելու։

Բայց վերջերս բանուորների անուղղակի ճնշման ազդեցութեան տակ, որոնք պահանջում էին իրանց վիճակի բարելաւումը, անհրաժեշտ էր դատել խնայողական գանձարանների միջոցների մի մասը յատկացնել իբրև փոխառութիւն և ոչ-կապիտալիստական հիմնարկութիւններին։

1894 թւի յունիսի 21-ի օրէնքը, որ լրացնում է 1884 թ. ապրիլի 15-ի օրէնքը թոյլ է տալիս խնայողական գանձարանների վարչութեան երկրագործական բիւրօյի կամ երկրագործական փոխադարձ վարկի ընկերութիւնների միջոցով աւանսով դրամ տալ գիւղատնտեսական արտադրողներին, բայց մինչև հիմայ գիւղատնտեսների յատկացւած այս փոխառութիւնը մի բոլորովին աննշան մասն է կազմում (0,97%) այն ընդհանուր ծախքերի, որ խնայողական գանձարանները անում են իրանց միջոցներից *)։

Միւս կողմից 1889 թ. օգոստոսի 9-ի օրէնքը բանուորական բնակարանների վերաբերեալ թոյլ է տալիս, որ խնայողական գանձարանները իրանց ազատ գումարների մի մասը գործադրին «բանուորական տներ գնելու և կառուցանելու համար»։ Վարկի այս գործառնութիւնը խոշոր չափեր ընդունեցին։ 1903 թւի դեկտեմբերի 21-ին բանուորական բակարանների կառուցման յատկացրած գումարը հասնում էր 56 միլիօնի 463,205 ֆր. իբրև երկարատև, և 743,636 ֆր. իբրև կարճատև փոխառնութիւն։

*) Այս երկրագործական կրեդիտի մեխանիզմի մասին տես Vandervelde „Essais sur la question agraire“. Նոյնպէս Comptes ienolu des ope'ration de la Caisse d'epargne et de retreite.

Մի և նոյն ժամանակ երկարատև փոխատւութեան ընդհանուր գումարը ըստ առանձին ռուբրիկաների բաժանւում էր հետևեալ կերպով։

Պետական ֆօնդերը . .	169,088,000	ֆր.	22,07	%
Ակցիօներական ընկ. պետ. կողմից ապահովւած օբլիգացիաները	57,779,000	»	7,54	»
Գաւառների և համայնք. փոխալիտները	126,270,000	»	16,48	»
Կապիտալիս. ընկ. օբլիգացիաները	117,026,000	»	15,28	»
Հիպօտեկային փոխատւութիւնը	1,973,000	»	0,26	»
Գիւղատնտեսական փոխատւութիւնը	7,471,000	»	0,97	»
Բանուորական բնակ. համար փոխատ.	56,463,000	»	7,37	»

Ընդհանրապէս խնայողական գանձարանների կողմից իբրև երկարատև փոխատւութիւն տրւած 538 միլլիօն ֆրանկից միայն այն գումարներն են ծախսւել համաձայն գանձարանների գլխաւորապէս փող մատակարարող դասակարգի շահերին, որոնք տրւած են բանուորական բնակարաններ կառուցանելու և գնելու համար, և մէկ էլ մի քանի հիպօտեկային փոխատւութիւնները։

1889 թւին հրատարակած բանուորական բնակարաններին վերաբերող օրէնքը լրացւած և փոփոխւած էր 1892 թ. յուլիսի 31-ի, 1893 թ. յուլիսի 18-ի և 1897 թ. օգոստոսի 16-ի օրէնքներով։

Այս բոլոր օրէնսդրական որոշումների նպատակն էր կեանքի մէջ իրականացնել մի շարք միջոցներ, որոնք պիտի բարելաւէին աղքատ ազգաբնակութեան բնակարանային պայմանները։ Այդ միջոցներից կարևորագոյները հետևեալներն էին։

1) Հիմնւում են առանձին կօմիտէներ, որոնք իրանց նպատակ են դնում ազգային առողջապահական պայմաններին համապատասխան բանուորական բնակարաններ կառուցանել, վարձով տալ և այդ բնակարանները բանուորներին կանխիկ դրամով կամ ապառիկ վաճառել. ուսումնասիրել այն ամենը, ինչ վերաբերում է բանուորների բնակարանների և գլխաւորապէս նրանց բնակավայրերի առողջապահութեան. աջակցել խնայողական և ապահովագրական գանձարանների ինչպէս և վարձի, փոխադարձ օգնութեան և թոշակների զարգացման *)։

*) Այս «Աջակցութեան կօմիտէների» օրգանական կանոնադրութիւնը կազմում է 1891 թ. յունիսի 7-ի արքայական ուկազի բովանդակութիւնը։

2) Տալ արտօնութիւններ հիմնելու այնպիսի ընկերութիւններ, որոնք իրանց բացառիկ նպատակ են դնում կառուցանել, գնել, վաճառել կամ վարձով տալ աշխատաւորների համար նշանակուած բնակարանները, կամ թէ փոխատուութիւն անել այդպիսի բնակարանների համար անշարժ կալուածներ գնելու։

3) Զանազան ֆիսկալ արտօնութիւններ այն բանուորների համար, որոնք իբրև սեփականութիւն ձեռք են բերում բնակարաններ և զանազան հարկային թեթևութիւններ, որոնց թիւը չէ կարող հետաքրքիր լինել։

4) Վերջապէս—և սա ամենակարևորն է—թոյլ տալ խնայողական գանձարանների վարչութեան գործադրելու իր ազատ գումարների մի մասը փոխատուութիւն անելու, որպէսզի դրանով կառուցեն և գնեն բանուորական բնակարաններ, և կազմեն կեանքի խառն ապահովագրութիւն, որ պրեմիային որոշ յաւելումն անելով, ապահովէր բանուորի ընտանիքը, որ սա բանուորի մահից յետոյ տունը պահելու է իրան իբրև սեփականութիւն։

Այս վերջին որոշման շնորհիւ է, որ 1889 թւի և նրան յաջորդ օրէնքները ունեցան որոշ չափով յաջողութիւն։

Ստեղծելով վարկի մի սրամիտ մեխանիզմ, կապելով միմեանց հետ հիպօտէկի և անհատական կրէդիտը—(մենք այստեղ չենք կարող դժբաղդաբար տալ դրա մանրամասն նկարագրութիւնը *)—խնայողական գանձարանները օրէնքի հիման վրայ ստեղծուած ընկերութիւններին փոխատուութիւն արեցին, ինչպէս ասացինք—յիսուն և վեց միլլիոնի մի գումար. խնայողական գանձարանների այս գործունէութիւնը լուրջ խթան էր բարելաւելու բանուորական ազգաբնակութեան բնակարանային պայմանները։

1904 թ. յունվարի 1-ին խնայողական գանձարանների շուրջը համախմբուել էր բանուորական բնակարանները հիմնելու 165 կօմիտէ։ Փոխատուութիւնների ընդհանուր թիւը հասնում էր 24.622-ի, (սրանցից 19. 529 կամ 79% կապուած էին կեանքի ապահովագրութեան հետ)։ Մահայմը և Վէլժը 1903 թ. «Bulletin des soce'te' d'habitations ouvrières»-ում իրանց հրատարակած յօդուածում «Հասարակական իշխանութեան միջամտութեան մասին»

*) Այս հարցի մասին տես A. Vermeersch S. J. Manuel social. La le'gislation et les ocovres en Belguigue.

վերնագրով հաշւում են, որ 1889 թւի օրէնքից յետոյ և խոշոր չափով շնորհիւ այդ օրէնքի ստեղծած արտօնութիւնների, բանուորները ձեռք են բերել 30,000-ի չափ տներ։

Այսպիսի հետևանքները սովորաբար դժւար է լինում կանխատեսել։ Բայց անհրաժեշտ է նոյնպէս աւելացնել, որ բանուորների ամենախոշոր մասի համար 1889 թ. օրէնքի որոշումները, ակամայ, գործնական նշանակութիւն չունին։ Սա, ասենք, իրանք Մանհայմը և Վէլժն էլ խօստովանում են նոր միայն յիշատակած յօդւածի մէջ։

«Առանձին ուշադրութիւն էին դարձնում—գրում են նրանք—այն բանի վրայ, որ բանուորին դարձնէին սեփականատէր։ Սխալ է, որ սրա վրայ կենտրօնացրել էին համարեա իրանց բոլոր ջանքերը։ Բայց չէ որ և անհնար է և ոչ ցանկալի, որ բոլոր բանուորները իրանց տների սեփականատէրը դառնան։ Մի կողմից բանուորավարձի տատանումները և չապահովուած զբաղմունքը չեն թոյլ տալիս, որ ամեն ընտանիքի մեծը իր վրայ պարտականութիւն վերցնի երկար տարիների ընթացքում ամսական վճարելիքները ճշտութեամբ կատարել, որպէսզի կարօղանայ մի ընտանեկան օջախ ձեռք բերել։ Միւս կողմից թէ բանուորի և թէ արդիւնաբերութեան շահերը ընդհանրապէս պահանջում են, որ պրօլետարիատը որոշ չափով պահպանի իր շարժունութիւնը։ Սեփականութիւնը բանուորին կապում է այն վայրի հետ, որտեղ գտնւում է նրա բնակարանը։ Միթէ ցանկալի է, որ ամբողջ արդիւնաբերական բանուորական դասակարգը սառչի բաշխման այն ձևի մէջ, ինչպիսին գոյութիւն ունի այս րօպէյիս։

Պարզ է, որ սեփականատէր կարող է դառնալ բանուորական դասակարգի միայն ընտրեալ մասը, փոքրամասնութիւնը»։

Այս վերջին եզրակացութիւնը զարմանալի կերպով կապացուցւի իրականութեան փաստերով, եթէ համեմատելու լինենք կառուցուած տների քանակութիւնը այն թւի հետ, որ դեռ հարկաւոր է դարձեալ կառուցանել, որպէս զի բաւարարութիւն տրւի գոյութիւն ունեցող բնակարանային կարիքներին։

Ամեն մի տան վրայ եկող բնակարան վարձողների թիւը 1890—1900 թ. ճիշտ է մի փոքր կրճատուեց. 506-ից իջաւ մինչև 503. բայց նկատելի է, որ շատ համայնքներում, որոնք 10,000 բնակչից աւելի ունեն, տների թւի համեմատութեամբ տնտեսութիւննե-

րի թիւը ընդհանրապէս աւելացել է, իսկ մի քանի տեղերը—նոյն իսկ շատ զգալի կերպով է մեծացել *):

Այս է պատճառը, որ եթէ «Աջակցութեան Կոմիտէները» որ և է դէպքում չեն մատնանշում իրերի դրութեան վատթարացումը (ինչպէս օրինակ Բրիւսէլի Molenbeek կոչւած խոշոր արդիւնաբերական արւարձանը), բայց և այնպէս ստիպւած են լինում խոստովանել որ յառաջադիմութիւնը կատարւում է մինչև յուսահատութիւնը հասցնող դանդաղութեամբ **):

Ահա օր. ինչ ենք կարդում Բրիւսէլի «Աջակցութեան Կոմիտէի» 1901 թւի հաշւետւութեան մէջ:

«Բանւորական բնակարանների ընդհանուր դրութիւնը Բրիւսէլի տերիտօրիայի վերաբերմամբ 1890 թ. մեր անկետից սկսած մի փոքր բարւոքւել է: Հին տներից շատերը քանդւած են, իսկ նրանց փոխարէն կառուցւածները ամեն կողմից աւելի լաւ են: Միայն դժբախտութիւնն այն է, որ շինութիւնները, իրանց բարձր գներով անմատչելի են նախկին բնակարաններ վարձողներին: Սրա հետևանքն այն է, որ աղքատ բանւորները համախմբւում են դեռ գոյութիւն ունեցող նեղ փողոցներում, և պէտք է վախենալ, որ գուցէ անհնար լինի որևէ հիմնաւոր բարեփոխութիւն մտցնել, մինչև որ քաղաքը չը քանդի բոլոր նեղ փողոցները ***):

*) Manheim et Velge. L'intervention des pouvoirs publics Bulletin des socie'te'c d'habitations ouvrièrcs. De'cembre 1903.

**) Մինչև այսօր լոյս տեսած միակ Բրիւսէլի սեկցիայում Էմիլ Հեյլեմանը հետևեալն է ասում. «1903-904 թւերին ինչպէս և 1890 թւի անկետը, որ գրւած, տպւած և կարդացւած է, չի կարող տալ այն գաղափարը, ինչ որ տալիս է այն անկետը, որ մենք տեսանք, որ եթէ կարելի է այսպէս ասել, մենք մենք ամբողջ էութեամբ զգացինք: Վերջինս աւելի ծանր և տխուր բնաւորութիւն է կրում, քան կարող է ստանալ մեր անկետի ուշադիր ընթերցողը: Ընթերցողը անշուշտ տալու է մի հարց, որ կազմում է և մեր հոգսը. Նկատելի է արդեօք յառաջադիմութիւն 1890 թւից սկսած: Պարզն ասած մենք չենք կարողանալու պատասխանել այդ հարցին: Անկասկած դրութիւնը չէ վաղթարացել: Սա էլ մեծ բան է (!): Մենք անկեղծ չէինք լինիլ, եթէ պնդէինք, թէ յառաջադիմութիւթիւնը ամեն տեղ նկատելի է»... Enquête sur les hatitations ouvie'res Tomme l. 1905

***) Ville de Bruxelles. Comite' de patronage des habitations nvri ers Rapport pour l'exercice 1906 p. 7

Թէ դեռ ևս որքան վատ են բանւորների բնակարանային պայմանները Բրիւսէլում և նրա արւարձաններում, ամեն մի նկարագրութիւնից աւելի լաւ ցոյց կը տան թւերը.

1890—1900 թ. «Կոմիտէների» ձեռնարկած ժողովրդագրութիւնները ցուցակագրել էին 48,690 բանւորական բնակարաններ, որոնք գրաւել էին առանձին տնտեսութիւնները. սրանցից

3	սենեակից	բաղկացած	բնակարան.	թիւն	էր	10,041	կամ	20,6%
2	»	»	»	»	»	20,998	»	45,4 »
1	»	»	»	»	»	17,597	»	34,0 *)

Թէ ինչ բարոյական հետևանքների է հասցնում այս տեսակ համախմբումը, դրա մասին կարելի է գաղափար կազմել Queker-ի և Lagasse-ի զեկուցումներից, որ նրանք տւել են «Աջակցութեան Կոմիտէին» և որ լոյս են տեսել 1890 թ. (այս տարւանից սկսած, ինչպէս տեսանք, դրութիւնը համարեա բոլորովին չի բարւոքւել):

«Նկատւած է օր. որ առաջին քաղաքամասում 578 բանւորական ընտանիքում, որ ունեն մի մի սենեակ, տղաներն ու աղջիկները, հասակաւորներն ու մանկտին ստիպւած են քնել մի և նոյն շինութեան մէջ, իսկ 17 ընտանիքում նրանք քնում են մի և նոյն անկողնում, եթէ կարելի է միայն անկողին անւանել միջատներով լի յարդիայ մի տիւֆեակ, ոը գիշերը գցում են սենեակի մէջտեղը **):

Չը պէտքէ կարծել, թէ այսպիսի մի թշւառ դրութիւն դեըում է միայն խոշոր քաղաքներում կամ արդիւնաբերական կենտրոններում: «Աջակցութեան կոմիտէները», որոնց գործունէութիւնը տարածւում է և գիւղերի վրայ, ցոյց են տալիս, որ բնակարանային հարցը գիւղերում ևս նոյն սուր բնաւորութիւնն ունի ինչ որ շատ մեծ ազգաբնակութիւն ունեցող վայրերում:

Սրա մասին գաղափար կարելի է կազմել Հասսելի համայնքի (Լիմբուրգի գաւառ) հաշւետւութիւնից:

«Բնակիչների աղքատութիւնը—ասում է հաշւէտւութիւնը

*) Տես Denis. Expose' des motifs de la paroposition de loi ayant pour but de cre'er une sociale nationale des habitations ouvrieres. Documents parlem. Ch. des repre'sentants 1900, 1901, p 218

**) Այս ուսումնասիրութեան հետևանքները ստացւեցին մի ուրիշ հետազօտութեամբ, որ կատարեց նոյն կոմիտէն 1903, 1904 և 1905 թւերին:

կազմող Corswarem-ը երեւում է ի միջի այլոց և այն անընական փաստից, որ ես տեսնում էի իմ ուսումնասիրած համարեա բոլոր համայնքներում։ Համարեա ամեն տեղ կան ամուսնացած մարդիկ, որոնք շարունակում են ապրել առանձին իրանց ծնողների մօտ. նրանց մէջ կան մարդիկ, որոնց ամուսնութեան տարիները մի պատկառելի թիւ են ներկայացնում և որոնք մի քանի երեխաներ ունեն։

«Շատ գիւղական համայնքներում ինձ ցոյց էին տալիս նոյնպէս երիտասարդ մարդոց, որոնք ցանկանում են ամուսնանալ, բայց ստիպուած են յետաձգել ամուսնութիւնը, գուցէ նոյն իսկ երկար ժամանակով, մինչև որ մէկը կը փոխի իր բնակարանը, կամ կը մեռնի առանց ընտանիքի և այսպիսով կազատի մի տուն» *)։

Այսպէս ուրեմն իրանք պաշտօնական փաստաթղթերը խոստովանում են, որ բանւորական բնակարանների մասին հրատարակած օրէնքից տասն և հինգ տարի յետոյ մի քանի գիւղերում (իսկ Լիմբուրգ գաւառի համարեա բոլոր գիւղերը այս վիճակի մէջ են) կան մարդիկ, որոնք ամուսնացել են և միասին չեն ապրում, կամ չեն ամուսնանում, որովհետև չեն կարողանում իրանց համար մի ընտանեկան օջախ ստեղծել. այլ ես չենք հաշւում այնպիսիներին, որոնք թողել են գիւղը, որովհետև գլուխ դնելու անկիւն չեն ունեցել։

Այսպիսի չարիքի դէմ պէտք է կռւել ի հարկէ ոչ այն միջոցներով, որ առաջարկում է 1889 թւի օրէնքը։ Ինչ վերաբերում է քաղաքներին, համայնական վարչութիւններից մի քանիսը—այն է Բրիւսէլի Schearbeek Saint—Gilles արւարձանները—սօցիալիստ ձայնաւորների ճնշման ազդեցութեան տակ փորձեցին բաւարարութիւն տալ բնակարանների աճող կարիքին և դրա համար բարեգործական կօմիտէների և մի քանի մասնաւոր մարդկանց մասնակցութեամբ հիմնեցին ակցիօներական ընկերութիւններ, որոնց ակցիաների մեծ մասը պահեցին իրանց ձեռքին. այդ ընկերութիւնների նպատակն է, ոչ թէ մանր սեփականատէրեր ստեղծել,

*) Tibbaut. Rapports sur le projet de loi portant re'duction des droits d'enregistrement etc. Chambre des repre'sentants. 25. Fevriér 1904. Documents parlamentaires, Session de 1903—1904,

այլ հիմնել բանւորական տներ, որտեղ էժան վարձով տուէին առանձին բնակարաններ։

Բայց որքան էլ հետաքրքիր լինեն այս առանձին փորձերը, բայց և այնպէս նրանց ազդեցութիւնը տարածւում է որոշ սահմանափակ շրջանում և նրանք անկարող են բարւոքել ընդհանուր դրութիւնը։ Այս պատճառով էլ Լիէժի սօցիալիստ պատգամաւոր Հեկտոր Դընին 1901 թ. յունվ. 30-ին մտցրեց մի օրինագիծ, որի զարգացումը ներկայացնում է չափազանց մեծ հետաքրքրութիւն և որ իր մէջ պարունակում է էժանագին բնակարանների հարցի լուծման մի ամբողջ նախագիծ *)։

1) «Աջակցութեան ընկերութիւնները» իրաւունք ունեն ընդունելու նւիրաբերութիւնները և կտակով ժառանգութիւնները։

2) Թոյլատրւում է հիմնել բարեգործական հիմնարկութիւններ, «աջակցութեան կօմիտէներ», փոխադարձ օգնութեան ընկերութիւններ համայնական և միջ համայնական կազմակերպութիւններ հանրօգուտ նպատակներով. այս հիմնարկութիւնները նպաստներ են ստանում պետութիւնից և գաւառներից և իրանց գլխաւոր նպատակն են համարում կառուցանել, ձեռք բերել, յարմարեցնել, էժան գնով վարձու տալ և առնել բանւորական բնակարաններ։

3) Պետութիւնը հիմնում է «էժան բնակարանների ազգային ընկերութիւնը», որ, իբրև գլխաւոր նպատակ, կառուցանում և վարձու է տալիս բանւորական տներ (առանձին ընտանիքների կամ ընդհանուր բնակութեան համար) այնպէս, որ բնակարանների առաջարկը ստիպուած համապատասխանի գոյութիւն ունեցող պահանջին և սեփականատէրերը ստիպուած լինեն իջեցնել իրանց պահանջները։

Չէ որ ամենքը գիտեն այն խայտառակ շահագործումը, որ խիտ ազգաբնակութիւն ունեցող վայրերում առաջ է բերում բանւորական տների վարձու տալը։

Անցեալ տարի Բելգիայի առողջապահութեան ամենաականաւոր բժիշկներից մէկը Putzeys հետևեալ կերպով էր եզրափակում այն ուսումնասիրութեան հետևանքները, որ նա արել էր Անգլիայում, Լիէժի շրջակայքում գտնւող խոշոր արդիւնաբերա-

*) Docum. parlm, Chambr. Session 1900—1901p. 218.

կան համայնքում։ Նա տեսել և գնահատել էր (հաշւելով և գետնի արժէքը) 275 տուն. 119 տուն տալիս էին 3-10% արդիւնք. 64 տ՝. 7—10%, 59 տ՝. 10—20% տ, 16 տ՝. 20—30%, 6 տ՝. 30—40%, 2 տ՝.—51% 1 տ՝.—57%, 1 տ՝.—72%, և վերջապէս 1—75%

Այսպիսի շահատակութիւնների երևան հանելը մօտ ժամանակները ստիպեց Vauden Peereboom-ին կաթօլիկական կաբինետների նախկին պարագլխին սկզբունքով ընդունել Հ. Դընիի առաջարկութիւնը։ Սակայն այս հանգամանքը բոլորովին բաւարար հիմք չէ տալիս ենթադրելու, որ Դընիի առաջարկութիւնը գտնւում է իր իրագործման նախօրէին. չէ որ բազէի գործունէութիւնը այնքան արդիւնաւէտ է, որ բուրժուական պարլամենտում միշտ կը գտնի ջերմ պաշտպաններ։

§ 2 Ասսօցիացիաների օրինականացումը

1831 թ. փետրվարի 7-ի սահմանադրութեան § 7 ասում է, որ «Բելգիայի հպատակները իրաւունք ունեն ասսօցիացիաներ կազմելու։ Այս իրաւունքի վերաբերմամբ ոչ մի սահմանափակումն չի կարող տեղի ունենալ»։ Այս օրէնքի հիման վրայ կարող են կազմել ասսօցիացիաներ—առանց որևէ հասարակական իշխանութեան կօնտրօլի—պրօֆեսսիօնալ շահերը պաշտպանելու համար, հիւանդութեան կամ աշխատանքի ընդունակութիւնը կորցնելու դէպքում ապահովագրութեան նպատակով, կամ նոյն իսկ առևտրական գործ վարելու համար։ Սակայն ասսօցիացեաները քաղաքացիական շրջանառութեան ասպարէզում չեն օգտւում իրաւաբանական անհատի իրաւունքներով։ Նրանք չեն կարող սկսել դատարանական իսկեր (иски)։ Նրանց ստացւածի իրաւաբանական դրութիւնը բաւական անորոշ է, այնպէս որ դատարանական իշխանութիւնները հնարաւորութիւն ունեն արտայայտելու իրանց կամայականութիւնը, մանաւանդ որ նրանք ընդհանուր առմամբ աւելի ներողամիտ են դէպի կօնգրեգացիօնիստ քան թէ բանւորական ասսօցիացիաները։

Ճիշտ է 1830 թւից սկսած ի լրումն սահմանադրութեան § 20-ի հրատարակւած են մի շարք օրէնսդրական որոշումներ։

Այս րոպէիս մեզ հետաքրքրող տեսակէտից կարևորագոյն որոշումները հետևեալներն են. 1894 թ. յունիսի 23-ի օրէնքը, որ

փոփոխութեան է ենթարկում փոխադրարձ օգնութեան ընկերութիւնների մասին հրատարակւած 1851 թ. ապրելի 30-ի օրէնքը։ 1873 թ. մայիսի 18-ի օրէնքը, որ փոխարինեց կօպպերատիվ ընկերութիւններին վերաբերող 1886 թ. մայիսի 27-ի օրէնքը. պրօֆեսսիօնալ միութիւնների 1898 թ. մարտի 31 օրէնքը։

1894 թ. յունիսի 23-ի օրէնքը կառավարութեան կողմից ճանաչւած փոխադարձ օգնութեան ընկերութիւններին իրաւունք է տալիս դատարանում գործ վարելու, ստանալ նւիրաբերութիւններ և կտակներ առանց նախօրօք խնդրելու վարչական իշխանութեան թոյլտւութիւնը, ձեռք բերել անշարժ կայքերը։ Բացի դրանից օրէնքը նրանց տալիս է մի քանի հարկային արտօնութիւններ և թոյլ է տալիս կառավարութեան, որ սա ազատի նրանց գրագրութիւնները փոստի ծախքից. վերջապէս 1898 թւի մարտի 10-ի լրացուցիչ օրէնքը պահում է պետական, գաւառական կամ համայնական նպաստները այն ընկերութիւնների համար, որոնք ճանաչւած են պետութեան կողմից։

Բայց այս բոլորի հետ միասին 1894 թւի օրէնքը կառավարութեան կողմից ճանաչւած ընկերութիւնների վերաբերմամբ սահմանում է և խիստ կօնտրօլ։ Նա պարտաւորեցնում է այդ ընկերութիւններին, որ սրանք իրանց միջոցները, հէնց որ վերջիններս այնքան կը մեծանան, որ ամեն մի անդամին կը գայ 5 ֆր. կամ ընդհանուր գումարը կը հասնի 1000 ֆրանկի, դնել խնայողական գանձարանները և կամ վերածել պետական թղթերի։ Այդ օրէնքը թոյլ է տալիս որ նա ընկերութեան որևէ անդամի կամ մինիստրի պահանջմամբ լուծի այն ընկերութիւնները, որոնք «իրանց համար դնում են կառավարութիւնից չը հաստատւած նպատակներ»։

Հասկանալի է որ փոխադարձ օգնութեան սօցիալիստական ընկերութիւնները առակի գայլի նման, վախենում են մանեակն իրանց վիզն առնելու, նրանք գերադասում են օգտւել ասսօցիացիաների այն ազատութեամբ, որ նրանց ապահովում է սահմանադրութիւնը։

Այսպիսով 1898 թւի օրէնքի հրատարակութիւնից յետոյ որ զրկում էր կառավարութեան կողմից չը ճանաչւած ընկերութիւններին գաւառական և համայնական նպաստներից, փոխադարձ օգնութեան այն կազմակերպութիւնների համար որոնք յարում էին բանւորական կուսակցութեան (Hainaut գաւառում)

ստեղծւեց այնպիսի մի դրութիւն, որ նրանք կամ պիտի զրկւէին իրանց ստացած խոշոր նպաստից, կամ որպէս զի պահէին իրանց ձեռքին այդ նպաստը, պէտք է ստանային կառավարութեան հաստատումը՝ այս ծանր դրութիւնից դուրս գալու համար նրանք դիմեցին հետևեալ սրամիտ միջոցին. նրանք հիմնեցին ապահովագրական գանձարան, որի համար և ստացան կառավարութեան հաստատութիւնը. այս գանձարանը ստանում է նպաստ, մինչդեռ նրա մասնաճիւղեր կազմող ընկերութիւնները պահում են իրանց ազատութիւնը և պարտաւոր չեն ենթարկւելու այն սահմանափակումներին, որ որոշում է 1894 թւի օրէնքը։

Արդիւնաբերական ընկերութիւններին վերաբերող 1873 թւի մայիսի 18-ի օրէնքի 6-րդ բաժնի համաձայն կօօպերացիա կոչւում է այն ամեն մի «ընկերութիւնը, ուր կամաւոր կերպով մտնում են անդամներ, որոնց թիւը և անհատական կայքը տարբեր է տարբեր ընկերութիւններում և որոնց (անդամների) բաժինը (ընդհանուր աշխատանքի և կապիտալի մէջ) չեն կարող տրւել երրորդ անձնաւորութիւններին»։ Այս ընկերութիւնները, ինչպէս և մասնաւոր անհատները, պարտաւոր են, նայելով իրանց գործունէութեան, վերցնել արհեստաւորական, առևտրական կամ արդիւնաբերական պատենտներ, անկախ այն բանից, թէ նրանք իրանց գործունէութիւնը վարում են մասնաւորապէս իրանց անդամների համար, թէ և այն մարդկանց համար, որոնք չեն մտնում նրանց ասսօցիացիայի կազմի մէջ։ Նրանք միւս արդիւնաբերական ընկերութիւնների նման պարտաւոր են ենթարկւել օրէնքի ցոյց տւած ձևական պահանջներին, օրինակ նրանց ղեկավարները պարտաւոր են վեց ամիսը մի անգամ առևտրական դատարանի գրասենեակին ներկայացնել ցուցակներ, որտեղ նշանակւած պիտի լինեն ամեն անդամի անունը, պրօֆեսիան և բնակավայրը այս ցուցակները վաւերացնում են նրանց ստորագրողները։

Վերջիններն էլ պատասխանատու են ցոյց տւած անդամների սխալ թւի համար. ցանկացողները միշտ կարող են ձրիաբար ծանօթանալ այս ցուցակների հետ։ Այս ձևականութիւնը առանձին հայեացքից ոչ մի բացառիկ բան չի ներկայացնում և նոյն իսկ երրորդ անձնաւորութիւնների համար ներկայացնում է որոշ գրաւական։ Եւ իրաւ ինչ տարօրինակ բան է, որ առևտրական յարաբերութիւն ստեղծող մարդիկ իմանան, թէ ում հետ

գործ ունեն։ Բայց անդամների մանրամասն ցուցակ ներկայացնելու պարտականութիւնը գործնականապէս ստեղծում է խոշոր կօօպերատիվ ընկերութիւնների, մանաւանդ մեծ սօցիալիստական կօօպերատիւ ընկերութիւնների համար դժւարութիւնների մի աղբիւր։

Նախ և առաջ, երբ կօօպերատիվ ընկերութիւնը այնքան մեծ է, որի անդամները հաշւում ն տասը կամ քսան հազար, և յաճախ մտնում են նոր անդամներ, իսկ հները՝ դուրս գալիս, հեշտ բան չէ կազմել այնպիսի ցուցակներ, որոնք զերծ լինէին սխալներից կամ որևէ թերութիւնից։

Այնուհետև, որ ամենակարևորն է, արիւդնաբերական կենտրօններում, որտեղ դասակարգային ներհակութիւնները չափազանց սուր բնաւորութիւն են կրում, սօցիալիստական կօօպերատիվ ընկերութիւնները չեն կարող հրատարակել իրանց անդամների լրիւ ցուցակները առանց վախենալու, որ դրանցից շատերին ենթարկւում են այն մարդկանց հալածանքների վտանգին, որոնցից նրանք կախումն ունեն։

Այսպիսով վերջին ժամանակի այն բազմաթիւ դատաստանական պրօցէսները, որ վարւում էին սօցիալիստական կօպերացիաների դէմ այն մարդկանց կողմից, որոնք մտել էին արդէն միայն փչացնելու նպատակով—ցոյց տւին, որ գործող օրէնսդրութիւնը սօցիալիսաական կօօպերացիաների թշնամինների ձեռքը տալիս է մի սոսկալի զէնք, որ աւելի ևս վտանգաւոր կը լինէր, եթէ որ պահպանողական կօօպերացիաներն ևս, որոնք ստեղծւել են սօցիալիստների դէմ կռւելու համար, երբեմն իրանք էլ չը զգային իրանց անյարմար իրաւաբանական դրութիւնը։

Վերջին հանգամանքը դատարաններին ստիպում է խուսափել չափազանց խիստ որոշումներից. այսպիսի որոշումները բացի դրանից կարող էին յուզել և հասարակական կարծիքը, եթէ միայն նրանք որևէ անշտկելի վնաս հասցնէին այդ հիմնարկութիւններին, որոնց օգտակարութիւնը ոչ ոք չէ համարձակւում հրապարակօրէն ուրանալ։

1898 թւի մարտի 31-ի պրօֆեսսիօնալ միութիւնների օրէնքը, ըստ երևոյթին,—բայց միայն ըստ երևոյթին—կազմում է Բելգիայի սօցիալական օրէնսդրութեան խոշոր նւաճումներից մէկը։ Նրա բնագրի անուշադիր ընթերցողը կարող է կարծել, թէ նա բաւականաչափ ազատամիտ է, որ նա պրօֆիսսիօնալ միութիւններին

տալիս է բաւարաչափ յարմարութիւններ և շատ էլ չի թոյլ տալիս, որ հասարակական իշխանութիւնը միջամտի նրա կանոնադրութեան մշակման կամ նոյն իսկ նրա կեանքին։ Բայց մարտական բնաւորութիւն ունեցող ասսոցիացիաները, ինչպիսիք են ըստ էութեան բանւորական միութիւնները, միւս ասսոցիաներից աւելի են ձգտում պահպանել իրանց դաշնակիցների կատարեալ ազատութիւնը. միւս կողմից 1898 թ. օրէնքի հեղինակները սրամտութեամբ մտցրել են այնպիսի մի կէտ, որ ինքն ըստինքեան բաւական է, որպէս զի բանւորական կուսակցութեան յարող պրոֆեսսիոնալ միութիւնները զրկւեն այն արտօնութիւններից օգտւելու հնարաւորութիւնից, որ տալիս է առհասարակ իրաւաբանական անհատը. և իրաւ օրէնքի § 2 որոշում է, որ պրոֆեսսիոնալ միութիւնը—ասսոցիացիան առաջ է գալիս բացառապէս ուսումնասիրելու, աջակցելու և պաշտպանելու պրոֆեսսիոնալ շահերը։

Իսկ ներկայացուցչական պալատում դեպուտատների ժամանակ աշխատանքի մինիստրը յայտնեց, որ օր. «բացառապէս» խօսքը կարող ծառայել իբրև բաւարար հիմք պրոֆեսսիոնալ միութիւններին արգելելու, որ նրանք ոչ մի դրամական օգնութիւն չը հասցընեն որևէ քաղաքական կուսակցութեան։ Սա նշանակում էր—միանգամից զրկել բոլոր սինդիկատներին, որոնք յարում են բանւորական կուսակցութեան, այն արտօնութիւններից (ճիշտ է մեծ մասամբ տեսական արտօնութիւններից), որոնք կապւած են իրաւաբանական անհատի օրինականացման հետ։ Եւ իրաւ այս սինդիկատներից ոչ մէկը չուզեց ստանալ կառավարութեան հաստատութիւն։

Բայց թէ որքան անբաւարար է 1898 թւի օրէնքը, դրան աւելի լաւ ապացոյց է այն հանգամանքը, որ չէզօք (կամ նոյն իսկ «դեղին») միութիւնների մեծամասնութիւնը գերադասում է ընդհանուր իրաւունքի ռէժիմը—ասսոցիացիաների հասարակ ազատութիւնը, քան թէ իրաւաբանական հաստատութիւնը և կառավարչական կօնտրօլը։

Այս բանին համոզւելու համար, բաւական է տեսնել, թէ որքան մեծ էր 1903 թ. դեկտ. 31 արդիւնաբերական բանւորների այն միութիւնների թիւը, որոնք աշխատել էին ստանալ կառավարութեան այսպիսի հաստատութիւնը։

Կառավարութ. հաստատութ. ստացած միութիւն. թիւը	524
Նրանցից արդիւնաբերական բանւ. միութիւնը . .	22
» երկրագործ. արտադրողն. » . .	466
» գործարոննատ. արհեստ. առևտր. . .	30
Երկրագործական ֆէդէրացիաներ . . .	5
Ազատ պրոֆեսսիայով զբաղւող մարդկանց միութիւն	1

Ինչպէս տեսնում էք, հաստատած ասսոցիաների մեծամասնութիւնը կազմում են երկրագործական միութիւնները, որոնք օգտւում են օրէնքի թոյլատրւած հնարաւորութեամբ մի քանի առևտրական օպերացիաներ անելու ի հաշիւ իրանց անդամների առանց որ և է սեփական օգտի։

Այս պատճառով 1898 թւի օրէնքը կարող է օգտակար լինել պարարտեցնող նիւթեր գնելու և սպիրտ վաճառելու դէպքում, թէև շահագրգռւած մարդիկ այդ օրէնքը համարում են ճնշիչ. բայց իր ներկայ ձևով այդ օրէնքը բոլորովին անպէտք է պրոֆեսսիոնալ շահերի պաշտպանութեան համար։

Այսպիսով բանւորական ասսոցիացիաներին վերաբերող երեք օրէնքներից միակը, որ չը նայելով իր թերութիւններին, այնուամենայնիւ բանւորների համար ներկայացնում է այնպիսի յարմարութիւններ, առանց որի սրանք չէին կարող բաւականանալ, դա կօօպերացիաների վերաբերող 1873 թւի օրէնքն է։ Մնացած երկու օրէնքները այնպէս են նախամտածւած, որ նրանց տւած արտօնութիւնները (որոնք մի և նոյն ժամանակ բաւական սահմանափակ են) ընդունելի են միայն այն կազմակերպութիւններ համար, որոնք բոլորովին զուրկ են մարտական ոգուց։

Բացի դրանից փորձը ցոյց է տալիս, որ այս մասնակի օրէնսդրութիւնների և սահմանադրութեան 20-րդ §-ի ապահոված ընդհանուր իրաւունքի մէջ եղած տարբերութիւնը, այնքան էլ մեծ չէ, որ կարելի լինէր պնդել, թէ կառավարութեան հաստատութիւնը ստացած ընկերութիւնները աւելի բարեյաջող պայմանների մէջ են գտնւում, քան այդ հաստատութիւնը չը ստացած ընկերութիւնները։

§ 3. Բանւորների ապահովագրութիւնը

Եթէ համեմատելու լինենք ապահովագրութեան այն լայն սիստեմը, որ ստեղծել է Գերմանիան, այն հատ ու կտոր և մի-

մեանց հետ կապ չունեցող որոշումների հետ, որ այս խնդրի վերաբերմամբ գոյութիւն ունեն Բելգիայում, այս դէպքում Բելգիան ոչ մի հիմք չի ունենալ պարծենալու իր օրէնսդրութեամբ։

Հիւանդութեան դէպքում ապահովագրելու գործը թողնուած է անմիջապէս շահագրգռուած մարդկանց նախաձեռնութեան։ Կառավարութիւնը բաւականանում է նրանով, որ փոխադարձ օգնութեան ընկերութիւնների զառամեալ անդամներին խօստանում է առանձին շքանշաններ. իրաւաբանօրէն ճանաչուած փոխադարձ օգնութեան ընկերութիւններին տալիս է սկզբնական ծախքերի համար 125—200 ֆր. նպաստ և երեսուն ֆրանկ պրեմիա հաշուեմատեաններ պահելու համար. նոյնպէս 500 ֆ.-ի չափ ժամանակին նպաստ տալիս է ապահովագրութեան ֆեդերացիաների և գանձարաններին *)։

Իսկ ինչ վերաբերում է դժբաղդ դէպքերից, ծերութեան և աշխատանքի ընդունակութիւնը կորցնելու դէպքերում ապահովագրութեան, այս խնդիրը որոշում են 1900 թ. մայսի 10-ին հրատարակած՝ ծերութեան դէպքում թոշակին վերաբերող օրէնքը և 1903 թ. դեկտ. 24-ի օրէնքը դժբաղտ դէպքերում բանուորներին վարձատրելու մասին։

1903 թ. դեկտ. 24-ի օրէնքը գործադրութեան մտաւ միայն 1905 թւի ընթացքում։

Իսկ մինչև այդ աշխատելու ժամանակ պատահած դժբաղդ դէպքերի զոհերը ենթարկւում էին ընդհանուր իրաւունքին և միակ պաշտպանութիւնը, որ նրանք ստանում էին, այդ այն էր, ինչ տալիս էին քաղաքացիական օրէնսգրքի 1382 և հետևեալ պարագրաֆները։

Վնասուածը, որպէսզի ստանայ վարձատրութիւն, պէտք է ապացուցի գործատիրոջ կամ սրան ենթարկւողներից մէկն ու մէկի մեղաւորութիւնը։ Իսկ ապացուցանել դա մեծ մասամբ անհնար է, որովհետև դժբաղդութիւնը տեղի է ունենում պատահմամբ կամ հէնց իր բանուորի պատճառով—և այս դէպքում, վնասուած բանուորը, եթէ սա ապահովագրուած չէր, ստիպուած էր իբրև ողորմութիւն հայցել ամենաշատը 30 ֆր. նպաստ այն գանձարանից, որ հիմնել էր մասնաւորապէս այս նպատակով 1890 թ.

*) M. Vermeersch. Manuel social. p. 642. et suiv.

յուլիսի 21-ին Լէօպոլդ II-ի գահ բարձրանալու քսանհինգամեակի առիթով։

Ոչ մի եւրոպական երկրում չէր կարելի այդպիսի մի դրութիւն տեսնել։ Սրան վերջ տալու համար, բելգիական կառավարութիւնը, տեղի տալով բանուորների աստիճանաբար աճող և յամառ պահանջներին, 7 տարւայ տատանումներից յետոյ վերջապէս վճռեց անցկացնել պալատում մինիստր Nyssen-ի օրինագիծը (վերջերը փոփոխութեան ենթարկուած), որ 1903 թ. դարձաւ օրէնք։

Այս օրէնքը, որի գլխաւոր հիմունքները վերցրած են ֆրանսիական օրէնսդրութիւնից, գործադրւում է այն արդիւնաբերական գործարանների վերաբերմամբ, որոնք օգտւում են մեքենաներով և այդ մեքենաները շարժւում են այնպիսի մի ուժով, որ տարբերւում է մարդու և անասնի ոյժից, այն գործարաններին, որոնք թէև չեն մտնում առաջին կատեգորիային պատկանող գործարանների շարքը, սակայն գրաւում են ամենաքիչը հինգ բանուոր, երկրագործական տնտեսութիւններին, որտեղ սովորաբար զբաղուած են լինում ամենաքիչը երեք բանուոր. առևտրական ձեռնարկութիւններին, որտեղ զբաղուած են անընդհատ ամենաքիչը երեք բանուոր. ձեռնարկութիւններին, որոնք թէև նման չեն վերև յիշուածներին, բայց որոնց վտանգաւոր բնաւորութիւնը կը ճանաչի արքայական ուկազը։

Այսպիսով մանր բուրժուազիային չը գրգռելու համար, այս օրէնքի ազդեցութիւնից դուրս են մնում երկրագործական բանուորների մեծամասնութիւնը և մանր արդիւնաբերութեան բանուորները, որոնք մնում են ընդհանուր իրաւունքի իշխանութեան տակ։

Իսկ ինչ վերաբերում է այն բանուորներին, որոնց ի նկատի ունի նոր օրէնքը, նրանք իրաւունք ունեն վարձատրութիւն ստանալու աշխատելու ժամանակ պատահած դժբաղդութեան դէպքում, եթէ նոյն իսկ իրանք լինեն մեղաւորը այդ դժբաղդութեան, բացառութեամբ այն դէպքերի, եթէ բանուորը ինքը գիտակցաբար կը առեղծի այդ դժբաղդութիւնը։

Բայց վնասուածի մեղաւորութիւնն անտես առնելով (նոյն իսկ ծանր մեղաւորութիւնը) դրա փոխարէն նշանակւում է չափազանց սահմանափակ վարձատրութիւն։

Աշխատանքի ընդունակութիւնը կորցնելու դէպքում վարձատրութեան չափը փոփոխւում է նայելով այն բանին, թէ բան-

ւորը մասամբ թէ բոլորովին է կորցրել այդ ընդունակութիւնը, իսկ մահուան դէպքում նոյնպէս փոփոխւում է, նայելով թէ քանի՞ և ի՞նչ դիրքի մարդիկ են ձեռք բերում բանւորի մահից յետոյ վարձատրութեան իրաւունքը․ բայց և աշխատանքի ընդունակութիւնը բոլորովին կորցնելու դէպքում բանւորը ստանում է ամենաշատը իր բանւորավարձի կէսը, պլիւս առաջին վեց ամսւայ ընթացքում բժշկւելու ծախքը։ Բացի դանից վարձատրութիւնը տրւում է միայն այն դէպքում, երբ դժբախտութիւնը զրկել է բանւորին ամենաքիչը մի շաբաթ աշխատելու ընդունակութիւնից․ մնացած մանր, բայց բազմաթիւ դէպքերի ամբողջ ծանրութիւնը ընկնում է բանւորների վրայ։

Ինչ վերաբերում է այն բանին, որ գործատէրերը իսկապէս ապահովեն վարձատրութիւնը, պալատը մի ձայնի առաւելութեամբ մերժեց պարտադիր ապահովագրութիւնը․ բայց որպէս զի աշխատելու ժամանակ տեղի ունեցող դժբախտութիւնների զոհերը միաժամանակ չը դառնան և գործատիրոջ սնանկութեան զոհ, պալատը «Ապահովութեան ֆոնդ» անունով հիմնեց, մասնաւորապէս, նախատեսելով գործատիրոջ սնանկութիւնը, ապահովագրական գանձարան, ուր պէտք է մտցնեն որոշ գումարներ այն բոլոր ձեռնարկող գործատէրերը, որոնք հրաժարւում են ապահովել իրանց բանւորներին օրէնքի պահանջած պայմաններով։

Այսպիսով մերժւած էր պարտադիր ապահովագրութեան մի ձևը, թէև ուրիշ անունով ընդունւած էր նոյն պարտադիր ապահովագրութիւնը։

Ահա սրանք են մօտաւորապէս 1903 թւի դեկտեմբերի 24-ի օրէնքի հիմնական որոշումները։

Բանւորական շրջաններում հարց են տալիս, ճի՞շտ որ այս նոր կարգերը ներկայացնում են իրական բարեփոխութիւն։ Եւ իրաւ, վնասւածը կորցնում է լրիւ վարձատրութեան իրաւունքը այն դէպքում, երբ նա կարող էր ապացուցել գործատիրոջ մեղաւորութիւնը․ միևնոյն ժամանակ, այն ինչ որ նա ստանում է այժմ, կազմում է ոչ թէ իր վնասի կէսը, այլ իր բանւորավարձի կէսը։

Այնուամենայնիւ այնքան հազւադէպ են այն դէպքերը, երբ կարելի է ապացուցել գործատիրոջ մեղաւորութիւնը, միւս կողմից թէկուզ ոչ լիակատար, բայց առանց ձգձգումների, առանց որևէ րիսկի, առանց դատարանական ծախքերի, վարձատրութիւն

ստանալու, օգուտը այնքան խոշոր է, որ մենք՝ 1903 թ. օրէնքը, չը նայելով սրա բոլոր թերութիւններին, գերադասում ենք նրանից առաջ գոյութիւն ունեցող կարգերին։

1900 թ. մայիսի 10 օրէնքը, որ վերաբերում է ծերութեան դէպքում բանւորներին ապահովելու խնդրին, ժխտում է պարտադիր ապահովագրութեան սկզբունքը, և ծերութեան ապահովագրութեան հարցը լուծելու համար դիմում է նրան, ինչ որ պահպանողականներն անւանում են «la liberté subsidiee» (մասնաւոր մարդկանց ազատ նախաձեռնութիւն, որին պետութիւնը դրամական օգնութիւն է հասցնում)։

Այս օրէնքի նպատակն է պրեմիաների և տարեկան նպաստների օգնութեամբ խթան տալ, որ ստեղծւեն ծերութեան դէպքերի թոշակներ, որի համար գումարներ մտցնեն թոշակատու գանձարանները, որոնք հիմնւում են խնայողական գանձարանների հետ միաժամանակ և գտնւում են նրանց հետ միասին մի և նոյն վարչութեան տակ։

Տարեկան պրեմիան ամեն մի խնայւած ֆրանկի և խնայողական գրքոյկի համար հաւասար է 60 սանտիմի, մինչև որ այդ գրքոյկով խնայւած գումարը կը հասնի 15 ֆր. Օրէնքը այս պրեմիաները նշանակում է խնայողական գանձարանի առանձին անդամներին, մինչև որ գրքոյկի մէջ մտցրած գումարները նրանց տիրոջը իրաւունք կտան 65 տարեկան հասակում ստանալու տարեկան 300 ֆրանկ թոշակ։ Անփոփոխ և մաքսիմալ (ամենաբարձր) սահմանը որոշւում է միշտ այս հաշւի հիման վրայ, թէև ամեն մէկը հնարաւորութիւն ունի դրամ մտցնելու և պահեստի գումարի համար և նշանակել աւելի կարճ ժամանակ թոշակի իրաւունք ձեռք բերելու համար։

Ամեն մի գրքոյկին, որի հաշւին տարւայ ընթացքում մասնաւոր միջոցներից մտցրւած է ամենաքիչը 3 ֆր., տարեկան նպաստը հասնում է 2 ֆր։ Այս նպաստները նշանակւում են ամեն մի փոխադարձ օգնութեան ընկերութեան, որ իբրև ճիւղ յարում է թոշակատու գանձարանին և իրաւաբանօրէն ճանաչւած է։ Այս նպաստները ընկերութիւնները կարող են գործադրել ըստ իրանց հայեցողութեան։

Այսպիսով, կառավարչական պրեմիաները, որոնց և աւելանում են և համայնական ու գաւառական վարչութիւնների տւած

դրամական օժանդակութիւնները, տրւում են թոշակատու գանձարանների անդամներին կամ անմիջապէս կամ իրաւաբանօրէն ճանաչւած փոխադարձ օգնութեան ընկերութիւնների միջոցով։

Բայց որպէսզի մէկը անմիջական խնայողութիւնների միջոցով պրեմիայի իրաւունք ստանայ, պէտք է լինի համեստ հասարակական դիրքի տէր, պէտք է հարկ վճարելիս լինի ոչ աւելի քան այն չափը, որ զանազան տեղերի համար տարբեր քանակութեամբ է որոշւած։

Ընդհակառակն նրանք, որոնք մտնում են գանձարանի անդամների շարքը փոխադարձ ընկերութեան միջոցով, անկախ իրանց տնտեսական կամ հասարակական դիրքից, իրաւունք ունեն ստանալու պրեմիա, մինչև որ իրանց սեփական միջոցներից եղած խնայողութիւնը տարւայ ընթացքում կը հասնի 60 ֆր.։ Բացի դրանից միայն փոխադարձ օգնութեան ընկերութիւններն են ստանում ամեն մի գրքոյկին 2 ֆր. նպաստ։

Սրանք են 1903 թւի օրէնքի մշտական հիմնական որոշումները։

Բայց բացի այդ մշտական որոշումներից կան և ժամանակաւոր որոշումներ յօգուտ չափազանց հասակաւորների, որպէսզի սրանք կարողանան կատարելապէս օգտւել այս օրէնքի ստեղծած բոլոր յարմարութիւններով.

1) Այն անհատները, որոնք 1901 թւի յունվարի 1-ին 40 տարեկանից անց էին, ստանում են պրեմիաներ ուժեղացած չափով։

2) Այն անհատները, որոնք 1901 թւի յունվարի 1-ին 65 տարեկանից աւելի էին, ստանում են տարեկան 65 ֆր. թոշակ, եթէ միայն նրանք Բելգիայի հպատակներ են, ապրում են Բելգիայում, զբաղւած են ֆիզիքական աշխատանքով կամ առաջ բանւոր են եղել և այժմ կարօտութեան մէջ են։

3) Այն անհատները, որոնք 1901 թ. յունվարի 1-ին ամենաքիչը 55 տարեկան էին, իսկ միւս խնդիրներում համապատասխանում են երկրորդ կէտի պահանջներին, 65 տարեկան դառնալուց յետոյ նոյնպէս օգտւում են տարեկան 65 ֆր. թոշակով. Բայց նրանք որոնք 1901 թ. յունվարի 1-ին դեռ չէին լրացրել յիսուն և ութ տարեկան հասակը, բայց ուզում են օգտւել այս նպաստից, պարտաւոր են երեք տարւայ ընթացքում մտցնել ընդհանուր թոշակատու գանձարանը տարեկան ամենաքիչը 3· ֆր. այնպէս, որ ընդհանուր առմամբ գոյանար ոչ պակաս, քան 18 ֆր.։

Հէնց այս ժամանակաւոր կանոնները, որ կառավարութիւնը կարող էր վերջը դարձնել մշտական, առանձնապէս գրաւեցին բանւորական դասակարգի կենդանի ուշադրութիւնը։

Սօցիալիստներն ու առհասարակ ընդիմադիր կուսակցութիւնները բնականաբար օգտւում էին ամեն առիթից ցոյց տալու այն ծիծաղելի չափը—65 ֆր. տարեկան, կամ օրական 18 սանտիմ, որ ներկայացնում է օրէնքի տւած օժանդակութիւնը։ Ճիշտ է, նպաստը կարելի է տալ և կնոջը։ Բայց չէ՞ որ արտադրութեան մինիստրի կազմած կանոնների համաձայն թափառաշրջիկներին և աղքատներին բանտարգելութեան տեղերում պահելու օրական ծախքը հաշւում են 1 ֆր. 20 ս.

Հարկաւոր է այս էլ նկատել, որ բանւորական թոշակների գործը վարող կօմիտէները, որոնք մեծ մասամբ բաղկացած են կառավարութեան կողմնակիցներից և ենթարկւում են զանազան քաղաքական ազդեցութիւններին, յաճախ մերժում են թոշակ տալ կարօտ, բայց սօցիալիզմի մէջ նկատւած բանւորներին և ընդհակառակն թոշակներ են նշանակում այնպիսի մարդկանց, որոնք թէև ունեն համեմատաբար լաւ կարողութիւն, բայց ձեռք են բերել տեղական հոգևորականութեան յանձնարարական նամակները։

Ինչ վերաբերում է օրէնքի մշտական որոշումներին, իրանք պահպանողականներն անգամ ստիպւած են խոստովանելու, որ ամենից աղքատ և ծերութեան հասակում ամենից շատ թոշակի կարիք ունեցող բանւորներն, իրանց անհեռատեսութեան կամ անբաւարար բանւորավարձի շնորհիւ չեն գրւում թոշակատու գանձարանի անդամ, չը նայելով նրա տւած արտօնութիւններին. միւս կողմից շատերը, որոնք արդէն որոշ կարողութիւն ունեն, բոլորովին պախարակելի բան չեն համարում գրւել թոշակատու փոխադարձ օգնութեան ընկերութիւններին, որպէսզի կարողանան օգտւել կառավարչական նպաստից։

Ահա օր. ինչ էր ասում այս առիթով Բրիւսէլի կաթօլիկ պատգամաւոր Carton de Wiart-ը իր հաշւետւութեան մէջ, որ նա կազմել էր 1903-1904 թւերի արդիւնաբերութեան և աշխատանքի բիւջէի մասին։

«Կենտրօնական սեկցիան իր պարտքն է համարում ցոյց տալ այն զեղծումները, որոնց կարող են առիթ տալ նպաստները, որ տրւում են ունեւոր դասակարգի հիմնւած թոշակատու փոխա-

դարձ օգնութեան ընկերութիւններին։ Ինչ միտք ունի նպաստներ տալ հարուստ դասակարգերին—հէնց թէկուզ նրանց մէջ հեռատեսութիւն զարգացնելու նպատակով—նպաստներ, որոնք մասամբ գանձւում են հարկերից, հետեւաբար վերցւում են բոլոր քաղաքացիներից, սրանց թւում և աղքատներից։ Չը պէտք է արդեօք վախենալ, որ կեանքի ապահովագրութեան ընկերութիւնները, լինելով վաճառականական ձեռնարկութիւններ, կը փորձեն աւելացնել իրանց սեփական կամ նրանց մօտ ապահովագրած անհատների օգուտը, տալով նրանց բացի պօլիսից նաև թոշակատու փոխադարձ օգնութեան ընկերութիւնների գրքոյկները» *)։

«Հարուստ դասակարգերը», ինքն ըստ ինքեան հասկանալի է պրեմիաներից և նպաստներից լայն չափերով օգտւելու համար չէին սպասում, որ կենտրօնական սեկցիան պաշտօնական փաստաթղթի մէջ յայտարարէր հնարաւոր զեղծումների մասին։

Այսպիսով 1900 թ. օրէնքի նշանակած ծախքերը քանի գնում, այնքան աւելանում են։ Տարեկան 12 միլլիօն ծախքը, որ սկզբում մտցրւած էր բիւջէի մէջ մասնաւորապէս ծերութեան դէպքում բանւորներին ապահովագրելու ֆօնդ կազմելու համար, ստիպւած էին աւելացնել և հասցնել մինչև 15 միլլիօնի. և բոլոր նշանները կան ենթադրելու, որ այս ծախքը աւելի և աճելու է յօգուտ պարազիտ «փոխադարձ օգնութեան» ընկերութիւնների, թէև միևնոյն ժամանակ ամենաաղքատ ազգաբնակութեան ծերութեան դէպքերի համար չի ստեղծելու և ոչ մի ապահովութիւն։

§ 4. Բանւորական պայմանագիրը

Աշխատանքի կանօնաւորման և պաշտպանութեան վերաբերող բոլոր օրէնսդրական որոշումները կարելի է հետևեալ ժամանակագրական կարգով դասաւորել։

1) 1883 թ. յուլիսի 10-ի օրէնքը բանւորական գրքոյկների մասին որ փոխում է քաղաքացիական օրէնսգրքի § 1781. (այս պարագրաֆը պաշտօնական նշանակութիւն էր տալիս բանւորավարձի չափի մասին գործատիրոջ տւած ցուցմունքին)։

*) Documents parlem. Chambre des représentants. Session de 1903—1904.

2) 1887 թ. օգ. 16-ի օրէնքը, որ լրացնում են 1896 թ. յունիսի 15 և 17-ի օրէնքները և որ վերաբերում է բանւորներին վարձը վճարելու եղանակին։

3) 1887 թ. օգոստոսի 18-ի օրէնքը, որ արգելում է զիջել բանւորի վարձը որ և է երրորդ անձնաւորութեան և կամ դնել նրա վրայ արգելք։

4) 1889 թ. դեկտ. 13-ի օրէնքը, որ կանոնաւորում է կանանց և երեխաների աշխատանքը։

5) 1896 թ. յունիսի 15-ի օրէնքը ներքին կանոնադրութեան մասին։

6) 1900 թ. մարտի 10-ի օրէնքը վարձելու պայմանագրի մասին։

7) 1901 թ. յուլիսի 30-ի օրէնքը բանւորական ժամանակի տեւողականութեան մասին։

Սրանց պէտք է աւելացնել նոյնպէս արքայական դեկրետներն և ուկազները, որոնք վերաբերում են հանքերը շահագործելուն և վտանգաւոր ու առողջութեան համար վնասակար արտադրութիւնների վրայ ունենալիք հսկողութեան։

Այս օրէնքի հիման վրայ բանւորական գրքոյկներ պահելը, որ առաջ պարտադիր էր և միշտ էլ գործատէրերի ձեռքին ծառայում էր որոշ բանւորներին բօյկօտի ենթարկելու լաւ միջոց, այժմ դառնում է միայն կամաւոր։ Բանւորի օրավարձի չափի մասին գործատիրոջ տւած հասարակ ցուցմունքը այլ և ոչ մի պաշտօնական նշանակութիւն չունի. truck—system-ը արգելւում է, ինչպէս նաև արգելւում է բանւորին վարձը վճարել գինետներում (թէև այս արգելքը այնուամենայնիւ զեղծումների առաջը չի առնում), օրավարձի միայն $2/5$ մասը կարելի է տալ երրորդ անձնաւորութեան, ինչպէս և կարելի է արգելք դնել օրավարձի միայն $1/5$ մասի վրայ. գործարանի ներքին կարգ ու կանոնները, թէև առաջւայ նման վերապահւում են բացառապէս գործատիրոջ, բայց նրանք պէտք է կախւած լինեն արդիւնաբերական գործարանում. եթէ մէկ կամ միւս կողմը առաջուց յայտնում է, որ ցանկանում է քանդել բանւորական պայմանագրերը, ապա այդ յայտարարութիւնը պարտադիր է թէ գործատիրոջ և թէ բանւորի համար, բացի այն դէպքերից, երբ օրէնքը թոյլ է տալիս անմիջապէս քանդել պայմանագիրը. օրւայ ընթացքում բանւորի

վրայ դրւող տուգանքը չը պէտք է նրա օրավարձի մէկ հինգերորդից աւելի լինի. այդ տուգանքները պէտք է գործադրւեն բանւորների օգտակար նպատակների համար. աշխատաժամերի տեւողութիւնը այն անհատների համար, որոնք աշխատում են կտորով, որոշում է օրէնքը, իսկ աւելի մանրամասնաբար՝ որոշում են արքայական ուկազները. վերջապէս երեխաների և 21 տարեկանից փոքր կանանց աշխատանքը սկսում է օգտւել որոշ հովանաւորութեամբ։

Սրանք են յամենայն դէպս այն գլխաւոր որոշումները, որ բղխում են բոլոր օրէնքներից։ Սրանց մասնագիտօրէն ուսումնասիրել ցանկացողներին, մենք ստիպւած ենք առաջարկել օրէնքների բնագիրն ու գործարանային տեսչութեան տարեկան հաշիւները։

Սակայն դժբախտաբար անկասկած է, որ այս կանոնների մեծ մասը միայն չափազանց սահմանափակ ազդեցութիւն կարող է ունենալ բանւորների կեանքի պայմանները բարւոքելու տեսակէտից և որ ընհանրապէս, բացի truck system-ի նման առանձնայատուկ զեղծումը վերացնելուց, միայն 1889 թ. դեկտ. 13-ի օրէնքը ունեցաւ իրական նշանակութիւն։

1889 թ. օրէնքը գործադրւում է հանքերում, քարհատութեան մէջ, փայտի պահեստներում, ֆաբրիկաներում, մանուֆակտուրաներում, գործարաններում, վտանգաւոր, անառողջ կամ անյարմար դատւող արտադրութիւններում, նաւահանգիստներում, կայարաններում, բեռնաւորելու ձեռնարկութիւններում, ցամաքային և ջրի ճանապարհներով փոխադրութեան գործում։

Նրա գլխաւոր որոշումները հետեւեալներն են։

1) Արգելւում է օգտւել 12 տարեկանից փոքր երեխաների աշխատանքից։

2) Այս արգելքը կարող է արքայական ուկազը տարածել և 16 տարեկանից փոքր պատանիների, ինչպէս և 21 տարեկանից փոքր կանանց վերայ, եթէ կը գտնեն, որ այս ինչ աշխատանքը բարձր է նրանց ուժերից, կամ վտանգաւոր է նրանց յանձնել այդպիսի մի աշխատանք կատարելը. նոյն կանոնը կարելի է տարածել և այն արդիւնաբերութիւնների վրայ, որոնք առողջութեան համար կը ճանաչւեն վնասակար։

3) 16 տարեկանից փոքր երեխաներին ու պատանիներին, նոյնպէս և 16 տարեկանից մեծ, բայց 21 տարեկանից փոքր աղ-

ջիկներին ու կանանց չեն կարող զբաղեցնել օրական 12 ժամից աւելի. այս ժամանակն էլ բաժանւում է երկու մասի ամենաքիչը $1^1/_2$ ժամ հանգստութեան ընդմիջումով։ Աշխատանքի այս ժամանակամիջոցը կարելի է կրճատել արքայական ուկազով։

4) Արգելւում է աշխատեցնել կանանց ծննդաբերութիւնից յետոյ 4 շաբաթւայ ընթացքում։

5) Արգելւում է գիշերային աշխատանքը այն անհատների համար, որոնք վայելում են օրէնքի պաշտպանութիւնը. արքայական ուկազը կարող է տալ առանձնակի թոյլտւութիւն։

6) Օրէնքի պաշտպանութիւնը վայելող անհատները պէտք է շաբաթը մի օր օգտւեն հանգստութեան համար, բացի ծայրայեղ անհրաժեշտութեան դէպքերից, երբ սրանք առաջ են գալիս մարդու կամքից դուրս գտնւող պատճառներից։

7) 1892 թ. յունվարի 1-ից 21 տարեկանից փոքր աղջիկներին ու կանանց չը պէտք է զբաղեցնել գետնի տակ հանքերում և քարհատութեան գործարաններում. սակայն այս կանոնը չէ վերաբերում այն աղջկերանց և կանանց, որոնք մինչև այդ ժամանակ զբաղւած էին այդպիսի աշխատանքով։ Բացի սրանից այս վերջին օրէնքը այժմ գտնւում է իր կատարեալ ոչնչացման նախօրէին, որովհետև 1903 թ. յունվարի 1-ին հաշւում էին ընդամէնը միայն 84 «սպիտակ չեպչիկները», որոնք զբաղւած էին գետնի տակ Couchant de Mons-ի (Բօրինաժի) շրջանի մի քանի հանքերում *)։

Առհասարակ բաւական է համեմատել Բելգիայի 1889 թւի օրէնքը հարեւան երկրների համապատասխան օրէնսդրութիւնների հետ համոզւելու, որ նա թէ ժամանակով վերջինն է, և թէ ամենաանկատարը։

Ճիշտ է արքայական ուկազները, որոնք հրատարակւել են իբրև լրացումն այս օրէնքի, մի փոքր աւելացրել են աշխատանքի այն պաշտպանութիւնը, որ տրւում է անչափահասներին (21 տարեկանից փոքրերին). բայց մինչև այժմ գործ դրւած ջանքերը տարածելու նոյն պաշտպանութիւնը նաև հասակաւորների վրայ (21 տարեկանից մեծ), լինեն դրանք տղամարդիկ թէ կա-

---

*) Annuaire statistique de la Belgique pour 1903. p. 327. Bruxelle 1904.

նայք, և բարձրացնելու նրանց մինչև ուրիշ արդիւնաբերական երկըրների օրէնսդրութեան մակերևոյթը, հանդիպում էին իներցիայի անյաղթելի ույժին։

Այս պատճառով Կարլ Բիւխերը միանգամայն իրաւունք ունէր տալու Բելգիայի սոցիալական քաղաքականութեան այսպիսի անողոք գնահատութիւնը՝

«Բերլինի միջազգային կօնֆերենցիային Բելգիայի պատգամաւորները աչքի էին ընկնում իրանց ընդդիմադիր դիրքով. հէնց որ բարձրանում էր որ և է առաջարկութեան մի խնդիր, որ աշխատում էր ընդգրկել որքան կարելի է մեծ տերրիտորիա, բելգիական պատգամաւորները աշխատում էին սեղմել կամ մտցնել վերապահումներ։ Այս պատճառով կօնֆերենցիայի միւս անդամների վրայ նրանց թողած ծանր տպաւորութիւնը իր արտայայտութիւնը գտաւ այն հաշւի մէջ, որ Շվէյցարիայի պատգամաւորները ներկայացրին արդիւնաբերութեան դեպարտամենտին։ Եւ թւում է, որ այդ ծանր տպաւորութիւնը չէին զգում միայն նրանք, որոնք և յարուցին այդ տպաւորութիւնը»։

Ճիշտ է 1891 թւից սկսած, երբ բանւորները մասնակից եղան ընտրողական իրաւունքին, պահպանողական կուսակցութիւնը սկսեց խօսել ուրիշ լեզւով։ Սկզբունքային ընդդիմադրութիւնը թուլացաւ։ Նրանք, որոնք առաջ դէմ էին հասակաւորների աշխատանքի ամեն մի կանօնաւորման, այժմ խոստովանում են, որ այդ կանօնաւորումը անհրաժեշտ է. սակայն նրանք ոչ մի միջոց չեն խնայում, որ 1889 թ. օրէնքը ոչ մի բարեփոխութեան չենթարկւի։ 1894 թ. սոցիալիստների պարլամենտը մտնելուց անմիջապէս յետոյ, Լիւի Բերդրանը առաջարկեց հասակաւորների աշխատանքը կանօնաւորող մի օրէնք. մի քանի օրից յետոյ Հելլպուտը, թէև պահպանողական, բայց շատ թէ քիչ դէմօկրատիական տենդենցներ ունեցող պատգամաւորը, առաջարկեց մի ուրիշ օրինագիծ, որ, թէև առաջնի նման ճշգրիտ չէր, բայց հիմնւած էր նոյն սկզբունքի վրայ *)։ Կենտրօնական սեկցիային յանձնւած այս առաջարկութիւնների մասին ներկայացւած էր մի նպաստաւոր զեկուցում բայց 1900 թւին պալատի արձակումը (պրօպրօցիօնալ ներկայ-

*) Տես այս առաջարկութիւնների առիթով զեկուցումը Van Camvnnbergh-ի (c. n° 77 de la sacsvon de 1895—1896)

այուցչութիւն ընդունելու պատճառով) հնարաւորութիւն չը տւեց որ օրինագիծը ընդունւի իբրև օրէնք։ Հէնց որ նորից գումարւեց պարլամենտը, այդ օրէնքի նախաձեռնողները նորից արեցին իրանց առաջարկութիւնը։ Այս օրինագիծը յանձնեցին կենտրօնական սեկցիային, որ և զբաղւեց կիրակնօրեայ հանգստութեան վերաբերող օրէնքի քննութեամբ. կենտրօնական սեկցիան ներկայացրեց միայն այս հարցի մասին զեկուցումն, և իզուր էին սոցիալիստական փոքրամասնութեան ամենայամառ ջանքերը ստիպելու, որ նա զեկուցէր և հասակաւոր բանւորների աշխատանքը կանօնաւորելու առաջարկութեան մասին։

Այս պատճառով էլ ընդունելով, որ անհրաժեշտ է բարոյական ճնշումն գործ դնել պարլամէնտի վրայ, 1904 թւի ծննդեան տօնին բանւորական միութիւնները իրանց կօնգրեսում վճռեցին կազմակերպել բանւորական ժամանակը կրճատելու համար 1905 թ. ազգային ցոյց։ Ճիշտ որ անհրաժեշտ էր ցոյց տալ կառավարութեան, որ այս կենսական հարցի մասին այնքան երկար ժամանակ չը հոգացող բանւորները սկսում են հասկանալ, թէ որքան ուղիղ էր Կարլ Մարքսը, երբ սա Ինտերնացիօնալի հիմնարկութեան ժամանակ գրւած ուղերձում տասժամեայ բանւորական օրը ողջունում էր թէ իբրև սկզբունքի յաղթանակ և թէ իբրև խոշոր գործնական նւաճումն։

§ 5 Գործարանային տեսչութիւն

Այն ընդհարումները, որ բանւորական պայմանագրի վերաբերմամբ տեղի են ունենում գործարանների և առանձին բանւորների միջև քննում են «հաշտարար ատեանները», կամ որտեղ նրանք գոյութիւն չունեն,—հաշտարար դատաւորները։ Խմբական ընդհարումները գործատէրերի և բանւորների միջև քննւում են արդիւնաբերական և աշխատանքի խորհուրդները։ Վերջապէս գործարանային տեսչութիւնը իր միջամտութեամբ նպատակ է դնում հետևելու, որ իրագործւեն սոցիալական օրէնքները և ապահովեն, որ գործատէրերի պարտազանցութիւնները կը դատւեն։

Մենք կը բաւականանք մատնացոյց անելով միայն հաշտարար ատեաններին և արդիւնաբերութեան ու աշխատանքին վերա-

բերող օրէնքները, որովհետև նրանց մանրամասն անալիզը, համարեա անօգուտ կերպով, մեզ շատ հեռուն կը տանի։

Հաշտարար ատեանների օրգանական օրէնքը, որ հրատարակած էր 1889 թ. յուլիսի 31-ին, փոփոխուել էր շնորհիւ 1896 թ. նոյեմբերի 20-ի օրէնքի, որ իր հերթին լրացուած էր 1897 թ. յունվարի 8-ի արքայական ուկազով։ Այս օրէնքը, որ ծրագրուած է ֆրանսիական օրէնսդրութեան օրինակով, ունի բաւական դեմոկրատիական հիմունքեր և շահագրգռուած կողմերի համար գործում է ընդհանրապէս բաւարար կերպով։

Ընդհակառակն 1887 թ. ապրիլի 16-ի օրէնքը, որ հիմնեց արդիւնաբերութեան և աշխատանքի խորհուրդներ, «որոնց նպատակըն է—քննել գործատէրերի և բանւորների ընդհանուր շահերը, նրանց մէջ ծագող տարաձայնութիւնների առաջն առնել և եթէ կարելի է խաղաղութեամբ լուծել», այդ օրէնքը մինչև հիմայ միայն չնչին հետևանքներ է տուել։

Շատ տեղերում բանւորները բոլորովին միջոցներ չեն ձեռք առնում այնտեղ իրանց ներկայացուցիչներն ունենալու համար որովհետև փորձով համոզուել են, թէ որքան անհնար է համոզել գործատէրերին և որքան անոյժ են խորհուրդները։ Գործատէրերը համարեա ամեն տեղ դիմում են բոլոր միջոցներին որպէսզի այդ խորհուրդները զրկեն ամեն մի նշանակութիւնից։ Այսպիսով 1887 թ. օրէնքը պարզ ցոյց է տալիս, թէ օրէնսդրութիւնը որքան անկարող է ստեղծել պաշտօնական հիմնարկութիւններ, դրանցով փոխարինել բանւորների և գործատէրերի ազատ կազմակերպութիւններ։

Ընդհակառակն, ուրիշ երկրների օրինակը—մասնաւորապէս Անգլիայի և Շվէյցարիայի օրինակը—ցոյց է տալիս, որ լուրջ հիմունքների վրայ դրուած գործարանական տեսչութիւնը, որ ունի բաւարար քանակութեամբ գործադիր պաշտօնեաներ և իրաւասութիւն, կարող է անգնահատելի ծառայութիւն մատուցանել բանւորական դասակարգի յանուն աշխատանքի պայմանները բարւոքելու համար նրա մղած կռւի։ Դժբաղդաբար Բելգիայում գործարանային տեսչութիւնը այնպէս է կազմակերպուած, որ եթէ նոյն իսկ բոլոր տեսուչները ոգևորուած լինէին լաւագոյն դիտաւորութիւններով, նրանք այնուամենայնիւ չէին կարողանալու իրագործել նրանց վերապահուած խնդիրները։

Միայն 1888 թւից սկսած աշխատանքի տեսչութիւնը, որ մինչ այդ Բելգիայում գոյութիւն չունէր, կամ համարեա թէ գոյութիւն չունէր, սկսում է իր կազմակերպութիւնը *)։

Այժմ բացի մի փոքր մասից, որ թողնուած է երկրագործութեան դեպարտամենտի տեսուչներին, աշխատանքի տեսչութիւնը բաժանուած է լեռնային ինժեներների և գործարանային տեսուչների միջև որոնք ենթարկուած են աշխատանքի դեպարտամենտին։

1) Լեռնային ինժեներները, որոնք մինչև այն ժամանակ ևս տեխնիքական հսկողութիւն ունէին լեռնային գործարանների վրայ, այժմ վերցնում են իրանց վրայ հանքերում, գետնի տակ կատարւող քարահատութեան աշխատանքներում, մետալլուրգիական և նրանց յարող արդիւնաբերական գործարաններում աշխատանքի տեսչութիւնը։ Թագաւորութեան մի քանի մասերի՝ այն է լեռնային շրջանների համար, նրանց իշխանութիւնը տարածւում է բաց երկնքի տակ կատարւող քարհատութեան աշխատանքի, կոկսի (քարածխի) գործարանների, ածխի միջոցով արտադրւող ապրանքների և հողը այրելու փոսերի վրայ։

Բանւորներն ընդհանրապէս խոստովանում են լեռնային ինժեներների բարի ցանկութիւններն ու ձգտումները։ Նրանք ընդհակառակն պախարակում են կառավարութիւնը, որ սա պատգամաւորներ հաստատում է միայն այն բանւորներին, որոնց թեկնածութիւնը առաջարկում են արդիւնաբերութեան խորհրդների անդամ-գործատէրերը և սօցիալիզմի երկիւղից չի հաստատում բանւորների թեկնածուներին։

Աշխատանքի, վտանգաւոր, անառողջ և վատ շինած արդիւնաբերական գործարանների տեսուչները, որոնց պաշտօնը նշանակուած է 1888 թ. մայիսի 5-ի օրէնքով, բաժանւում են երկուսի՝ կենտրոնական վարչութեան և գաւառական կամ շրջանային տեսուչներ։ Վերջինները, նայելով իրանց պաշտօնավարութեան

*) 1885 թւի մայիսի 5-ի օրէնքը վտանգաւոր, անառողջ կամ վատաշէն արդիւնաբերական գործարաններին վերաբերեալ, որ միևնոյն ժամանակ որոշում է և մեքենաների ու պղինձների վրայ ունենալիք հսկողութիւնը։ 1895 թ. հոկտ. 22-ի արքայական ուկազը, որ որոշում է երկրագործութեան և արդիւնաբերական աշխատանքի դեպարտամենտների գործունէութեան շրջանը այն արդիւնաբերական գործարանների վերաբերմամբ, որոնք ճանաչուած են առողջութեան համար վտանգաւոր կամ վնասակար։

դիրքին կամ ստացած ռոճկին—որովհետև նրանց բոլորի ֆունկցիաները միևնոյնն են—կոչւում են տեսուչ կամ պատգամաւոր։

Կենտրոնական տեսչութեան ագենտները ամբողջ թագաւորութեան մէջ հսկում են շրջանային տեսուչների և պատգամաւորների գործունէութիւնը և բացի դրանից հսկում են մասնաւորապէս այն արդիւնաբերական գործարաններն ու արտադրութիւնները, որ նրանց յանձնում է մինիստրը։

Գաւառական տեսուչների և պատգամաւորների շրջաններն ու բնակավայրերը որոշում է մինիստրը։ Ամբողջ երկիրը բաժանւում է 9 շրջանի, որոնք յանձնւում են 15 տեսուչների և պատգամաւորների հսկողութեան։ Կենտրոնական տեսչութիւնը բաղկացած է չորս շտատի մէջ մտցրւած տեսուչներից և տեսչուհուց։ Բացի դրանից կան և 5 բժիշկ-տեսուչներ, որոնցից չորսը ծառայում են շրջաններում, իսկ մէկը գտնւում է կենտրոնական վարչութեան մէջ։

Բայց եթէ ի նկատի ունենանք, թէ որքան բարդ է նրանց վրայ դրւած գործը, նրանց հսկողութեան յանձնւած 9—10 հազար գործարանները, այն ժամանակ պարզ կը լինի, որ նրանք չեն կարող լուրջ և իրապէս հետևել սօցիալական օրէնքների գործադրութեան։

Այդ պատճառով ստիպւած պէտք է խոստովանել, որ բացի այն շրջաններից, որտեղ բանւորները ստեղծելով ուժեղ կազմակերպութիւն, իրանք էլ հետևում են օրէնքի գործադրութեան և նրա խախտման դէպքերը հաղորդում են տեսուչներին—միւս տեղերում աշխատանքի օրէնսդրական պաշտպանութիւնը ոչ մի դէպքում չի կարելի բաւարար համարել։

Վերջին տարիները կաթոլիքական պատգամաւորները յաճախ միանում էին սօցիալիստներին, երբ սրանք քննադատում էին գործարանային տեսչութեան այժմեան դրութիւնը և Բեօլնի համագումարում, որ հրաւիրւած էր աշխատանքի պաշտպանութեան խնդիրների համար, (1902 սեպտեմբերի 22—25), Լիւի Վարլէն իր զեկուցման մէջ, որ տպագրւած էր բանւորների պաշտպանութեան միջազգային ասսօցիացիայի անունից, չափազանց խիստ լեզւով էր խօսում Բելգիայի գործարանական տեսչութեան մասին։

«Հրատարակւած չէին—գրում է Նա—ամբողջ երկրին վերա-

բերող ընդհանուր տեղեկութիւնները, թէ որքան դատ է սկսւած և որքան վճիռներ են կայացւած պաշտպանութիւնը վայելող կանանց գիշերային աշխատանքի, ինչպէս և ընդհանրապէս միւս բանւորական օրէնքների գործադրութեան մասին»։

Այս հարցին վերաբերող աղիւսակների առանձին կտորները տպագրւած էին Revue «de travaile»-ի յաւելւածում և առանձին շրջանային տեսուչների հաշւետւութիւնների մէջ։ Սակայն ընդհանուր տեսութիւն այս հարցի մասին—գոյութիւն չունի։

«Մենք մեզ վրայ չենք վերցնում այդպիսի ընդհանուր տեսութիւն կազմելու գործը, որովհետև գործարանային տեսչութիւնների հաշւետւութիւնները ոչ մի միջոց չեն ձեռք առել, որ այդ բանը անելու ցանկացողների գործը հեշտացնեն։ Ընդհակառակն, կասկած չկայ, որ նրանց հաղորդած փոքրաթիւ թւերն էլ զերծ չեն պակասութիւններից։ Եւ այս խնդրի վերաբերմամբ վերջին ժամանակներս ոչ մի բարւոքումն չի նկատւում.

Այսպիսի պայմաններում ստիպւած ենք դիմելու բանւոր հարցումներին, որպէսզի գաղափար կազմենք, թէ սօցիալական օրէնքները իրապէս ո՞ր աստիճան են գործադրւում կեանքի մէջ։

Եւ ուր որ դիմելու լինենք, արևմտեան Ֆլանդրիայի ջուլհակների, Անտվերպենի բեռնակիրներին, Շարլըռւայի ապակագործական բանւորներին, Լիէժի քարհատ բանւորներին, Գենտի մանողներին, Բրիւսէլի դերձակներին կամ թէ Վերվէի «Աշխատանքի Կօնֆեդերացիային»—ամեն տեղից կըստանանք միևնոյն պատասխանը, այն, որ այժմ բանւորական օրէնքների գործադրութիւնը դեռ չափազանց անբաւարար է» *)։

Կատարւե՞լ է արդեօք որևէ բարեփոխութիւն այն օրից, երբ գրւած են այս տողերը։

Ոչ մի հիմք չկայ այսպիսի մի բան ենթադրելու, որովհետև դարձեալ մնում է տեսուչների անբաւարար քանակութիւնը, միւս կողմից նրանց տարեկան հաշիւները ցոյց են տալիս, որ մի քա-

*) Միւս տեղեկութիւնները տես մեր ճառը, որ ներկայացուցչական պալատում ասել ենք մենք 1904 թ. ապրիլի 20-ից Annales parlamentaires. Chambre, Session de 1903—1904. p. 1339. Rapport sur le mouvement syndical chrétien en Belgique par le P. Rutten au congrèss de la Louvie're. Gand. Imp. «Het Volk» 1904 p. 32.

նի արդիւնաբերութիւններում—մանաւորապէս աղիւսի արդիւնաբերութեան մէջ—նրանք ստիպուած են ընդհարուել ոչ միայն գործատէրերի, այլ նաև հէնց բանւորների հետ, որոնք ամենախայտառակ կերպով շահագործում են երեխաների բանւորական ոյժը։ Այս տեսակ չարիքին վերջ տալու համար, քանի որ բարոյական միջոցները չեն ազդում, անհրաժեշտ է, որ օրէնքը եռանդուն կերպով ինքը միջամտի։ Դժբաղդաբար չի կարելի յուսալ, որ այժմեան կառավարութիւնը կատարէ այդ դերը։

§ 6 Վերջաբան

Բելգիայի սօցիալական օրէնսդրութեան բնորոշ գիծը կազմում է այն դիտաւորեալ թուլութիւնը, որով բուրժուական կառավարութիւնը միջամտում է կապիտալիստների և բանւորների յարաբերութիւններին։

Այն ժամանակ, երբ ուրիշ երկրներում, ինչպէս Գերմանիան Շվէյցարիան և շատ դէպքերում Անգլիան, գործարանային օրէնքները բազմաթիւ են և համեմատաբար լաւ են գործադրւում, Բելգիական արդիւնաբերողները դեռ կարող են կառավարութեանն ասել, ինչպէս մանուկն ասում է իր մօրը. «լուացիր կաշիս, միայն դեռ չը թրջես ինձ»։

Հասակաւորների աշխատանքի տևողութիւնը բոլորովին չի կանօնաւորուած։ Տասն և երկու տարեկան երեխաները փոխանակ դպրոցի, ստիպուած են գործարանը յաճախելու։ Գոյութիւն ունի այլանդակ և անկատար պարտադիր ապահովագրութիւնը։ Աշխատանքի տեսչութիւնը հասցրած է մինիմումի։

Այժմ պարզ իպարզոյ փառաբանել laissez faire սիստեմը այլ ևս անկարելի է, բայց մեր քաղաքագէտները պարծենում են, որ գտել են միջին ճանապարհը մանչեստերականութեան՝ և պետական սօցիալիզմի մէջ, գործադրելով «liberté subsidiée»—«առանձին անհատների ազատութիւնը և կառավարչական նպաստներ տալը»։

Մենք ձեզ ոչինչի, կամ համարեա ոչինչի չենք պարտաւորեցնում, բայց ամեն կերպ նպաստում ենք ամեն մի օգտակար ձեռնարկութեան։ Մենք ձեզ չենք ստիպում հիւանդութեան դէպքերի համար ապահովագրուել, բայց մենք պրեմիաներ ենք տալիս փոխադարձ օգնութեան ընկերութիւններին։ Մենք չենք պահանջում, որ դուք հեռատես լինէք և յիշէք գալիք ծերութիւնը, բայց մենք նպաստներ ենք նշանակում փոխադարձ օգնութեան թոշակատու գանձարաններին։ Եւ այս սիստեմը գործադրւում է ընդհանրապէս սօցիալական կեանքի բոլոր շրջաններում։ Նպաստներ տրւում են կօնգրեգանիստների դպրոցներին, անասունների ապահովագրութեան ընկերութիւններին, հարբեցողութեան դէմ կռւող դաշնակցութիւններին, ընդհանրապէս ամեն տեղ, ուր կարելի է տրւում են նպաստներ, և այս սիստեմը առանձնապէս եռանդով գործադրւում է մանաւանդ այն պատճառով, որ հիմք կայ ենթադրելու, որ սօցիալիստական կազմակերպութիւնները մեծ մասամբ չեն օգտւելու այդ նպաստներից. չէ՞ որ այդ նպաստները այնպիսի պայմանների մէջ են դրուած, որ նրանք չեն կարող ընդունել։

Այս մտքով հասկացւող liberté subsidiée սիստեմը իշխանութեան ձեռքին մի հզօր զէնք է, եթէ չասենք մի հրաշալի անուղղակի միջոց ընտրութիւնների ժամանակ հասարակական անբարոյականացման համար։

Բայց Բելգիայի սօցիալական օրէնսդրութեան պակասութիւնները ծածկւում են որոշ աստիճան այն հանգամանքով, որ բելգիական բանւորական դասակարգը, ընդհանրապէս շնորհիւ սահմանադրութեան և նամաւանդ գոյութիւն ունեցող աւանդութիւնների և իրաւունքների, հնարաւորութիւն ունի կապիտալիզմի դէմ մղած իր կռիւը վարելու քաղաքական ազատութեան այնպիսի մի րէժիմի պայմաններում, որի նմանը մենք չենք տեսնում հարևան երկրներում։

Մասամբ սրանով պէտք է բացատրել այն հանգամանքը, որ իբրև մեր թերի սօցիալական օրէնքների սրբագրութիւն, զարգացել են, շատ տեսակէտներից այնքան նշանաւոր, բանւորական կազմակերպութիւնները։

Գլ. V.

ԲԱՆՒՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բելգիայում բանւորական դասակարգի՝ կապիտալիզմի դէմ կռւելու համար, ստեղծած մարտական կազմակերպութիւնները,

ընդհանրապէս ասած—թէև կան և հակառակ տենդենցներ—չեն ներկայացնում իբրև քաղաքականապէս չէզոք միութիւններ, որոնք համախմբելիս լինէին բանւորներին առանց կուսակցական խտրութեան։

Ճիշտ է փոխադարձ օգնութեան ընկերութիւնները յաճախ լինում են անկախ քաղաքական դասաւորումներից, բայց կռւի համար հիմնած կօօպերացիաների և սինդիկատների մեծ մասը յարում են բանւորական կուսակցութեան։

Կարելի է նոյն իսկ ասել, որ բանւորական կուսակցութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ այս տնտեսական ասսօցիացիաների դաշնակցութիւն։

Եւ իրաւ, եթէ հանենք փոխադարձ օգնութեան ընկերութիւնները, սինդիկատները, կօօպերատիվ ընկերութիւնները, որոնք և մատակարարում են բանւորական կուսակցութեանը նրա անդամների ահագին մեծամասնութիւնը և համարեա բոլոր եկամուտները, այն ժամանակ կուսակցութեան շրջանային դաշնակցութիւնների մէջ կը մնան մի քանի բանւորական լիգաներ, որոնցից շատերն էլ կեանքի նշաններ ցոյց են տալիս միայն ընտրութիւնների նախօրէին։

Այս պատճառով էլ բելգիական պրօլետարիատի քաղաքական կազմակերպութեան մասին հեշտ գաղափար կազմելու համար բաւական է, կամ համարեա թէ բաւական է ուսումնասիրել նրա տնտեսական կազմակերպութիւնը իր երեք ճիւղաւորութիւններով՝ այն է փոխադարձ օգնութեան ընկերութիւնները, բանւորական միութիւնները և կօօպերատիվ հիմնարկութիւնները։

§ 1. Փոխադարձ օգնութեան ընկերութիւնները

Ամենավերջին շրջանի վերաբերմամբ մենք չունենք ստատիստիքական տեղեկութիւններ փոխադարձ օգնութեան ընկերութիւնների թւի, նրանց անդամների քանակութեան և դրամական միջոցների մասին։ «Bevue du Travail»-ի (1904 թ. մարտ) համաձայն 1903 թ. դեկտեմբերի 30-ին իրաւաբանօրէն ճանաչւած փոխադարձ օգնութեան ընկերութիւնների թիւը կազմում էր 6,447. Նրանցից 2,097-ը հիւանդութեան դէպքերի համար հիմնաւոր ապահովագրա՚կան ընկերութիւններ էին. 4,277—թոշա-

կառու գանձարաններ, իսկ 78-ը ունէին մասնակի նպատակներ. բայց հիւանդութեան դէպքերում ապահովագրող տեղեկութիւններին վերաբերող այս թւերը ոչ մի գաղափար չեն տալիս երկրի իսկական դրութեան մասին, որովհետև այս ընկերութիւնների մեծ մասը չի խնդրում կառավարչական հաստատութիւն և այս պատճառով էլ չի մտնում պաշտօնական ցանկը։

Այս դրութեան մէջ են գտնւում հէնց այն ընկերութիւնները, որոնք և միայն հետաքրքրութիւն են ներկայացնում կապիտալիզմի դէմ ուղղած պրօլետարիատի կռւի տեսակէտից. սրանք այն սօցիալիստական փոխադարձ օգնութեան ընկերութիւններն են, որոնք յարում են բանւորական կուսակցութեան և մասնակցում են նրա գործունէութեան։

Սօցիալիստական փոխադարձ օգնութեան ընկերութիւնները համեմատաբար փոքրաթիւ են, և սրա պատճառն-այն է, որ, համարեա բոլոր գաւառներում, փոխադարձ օգնութեան ուղղած գործունէութիւնը սկսել է կուսակցութիւնը կազմակերպելուց առաջ։ Այն ժամանակ, երբ առաջ եկաւ կուսակցութիւնը, այնտեղ մտնողների մեծ մասը արդէն վաղուց անդամ էին քաղաքականապէս չէզոք բնաւորութիւն ունեցող փոխադարձ օգնութեան ընկերութիւնների։ Նրանք չէին կարող դուրս գալ այս ընկերութիւններից, որովհետև դրանով կը կորցնէին նիւթական օգնութիւն ստանալու այն իրաւունքները, որ նրանք ձեռք էին բերել շնորհիւ անդամավճարների։ Սա է ահա գլխաւոր պատճառը, որ չէզոք ընկերութիւնները այնքան բազմաթիւ սօցիալիստներ են հաշւում իրանց անդամների շարքերում, մինչդեռ փոխադարձ օգնութեան ընկերութիւնների միայն մի աննշան մասն է մտնում սօցիալիստական ֆեդերացիաների կազմը։

Սակայն այս կանօնի վերաբերմամբ գոյութիւն ունեն չափազանց կարևոր բացառութիւններ, որոնք միևնոյն ժամանակ քանի գնում, այնքան աւելանում են։ Բրիւսսէլում, օր. «Ժողովրդական Տուն» կոչւող կօօպերատիվին յարում է փոխադարձ օգնութեան ամբողջ մի կազմակերպութիւն. Գենտում «Գենտի բանւորական կուսակցութեան դաշնակցութիւնը» կլանեց բազմաթիւ հին ընկերութիւններ. Hainot-ում գլխաւորապէս կենտրօնական

աւազանում—սոցիալիստական ընկերութիւնները կազմում են այսպէս ասած բանւորական կազմակերպութեան ողնաշարը։

Ա. Կենտրօնական շրջանում փոխադարձ օգնութեան կազմակերպութիւնների սկիզբը կարելի է հաշւել Ինտերնացիօնալի ժամանակներից՝ նրա բաղկացուցիչ խմբերի շարքում դեռ մինչև այսօր գոյութիւն ունի «La Solidarite'» (համերաշխութիւն) խումբը, որ հիմնւած է 1869 թ. Fayet գիւղաքաղաքում։

1871 թ. La Solidarite կազմակերպեց մի շարք կօրպօրատիվ խմբեր։ Այս խմբերը միմիանց հետ համաձայնութիւն կայացրին գնելու Ժօլեմօն գիւղում, այսինքն կենտրօնական շրջանի հենց սրտում, Մօնսից մինչև Շարլըրուայ տարածւող ամենաարդիւնաբերական շրջանում,—մի կտոր հող, որտեղ շինւած էր կօօպերատիվ խանութ (մագազին)։ Երկար պատահարներից յետոյ այդ խանութը փակւեց. բայց յաջողւեց պահել այդ հողը, և նրա վրայ կանգնած տունը այժմ կազմում է հզօր կօօպերատիվ «Le Progres»-ի («յառաջադիմութիւն») շինութիւնը։

1886 թ. երբ նորից կենդանացաւ սոցիալիստական շարժումը, «Solidarite»-ը համաձայնութեան եկաւ «Hestre la Mutualite» («փոխադարձ օգնութիւն»)-ի հետ (որ հիմնւած էր 1886 թ. նոյեմբերին) բաժանմունքներ հիմնելու մօտակայ շրջանի բոլոր արդիւնաբերական համայնքներում։ Այժմ այս բաժանմունքները—թւով 79—գոյութիւն ունեն շրջակայ բոլոր գիւղերում և 1891 թւից սկսած կազմում են «կենտրօնական շրջանի փոխադարձ օգնութեան ընկերութիւնների դաշնակցութիւն»։

Հետևեալ աղիւսակը ցոյց է տալիս, թէ ինչպիսի յառաջադիմութիւն է արել այս դաշնակցութիւնը իր գոյութեան առաջին 12 տարիների ընթացքում։

Թիւը	ընկ. թիւը	անդամների թիւը	Դաշնակ. կապիտալը
1891	18	3,008	19,047,63
1892	24	4,470	24,016,00
1893	30	5,365	31,444,97
1894	40	7,738	45,523,76
1895	54	9,761	57,836,04
1896	54	9,974	77,546,03
1897	55	10,308	92,934,23
1898	57	10,635	114,528,00

Թիւը	ընկ. թիւը	անդամների թիւը	Դաշնակ. կապիտալը
1899	67	11,881	135,802,45
1900	66	12,197	157,470,30
1901	70	12,759	180,411,00
1902	79	13,562	223,377,00
1903	79	13,517	246,772,94

«Կենտրօնական Շրջանի սոցիալիստական դաշնակցութիւնը», ինչպէս ցոյց է տալիս և անունը, յարում է բանւորական կուսակցութեան։ Նրա պահեստի գումարները, որոնք դրւած են «Le Progres» սոցիալիստական կօօպերատիվի մէջ, ներկայացնում են 5 տոկոսաբեր օբլիգացիաներ։

Ամսավճարը հաւասար է 1 ֆր. 15 ս., որից 90 սանտիմը գնում է փոխադարձ օգնութեան գանձարանը, 15 ս. ապահովագրական գանձարանը, իսկ 10 ս.—թոշակատու գանձարանը։ Աշխատանքի ընդունակութիւնը կորցնելու դէպքում առաջին հինգ և կէս տարւայ ընթացքում պրեմիան հաւասար է օրական 1 ֆր.։ Եթէ հինգ և 1/2 տարուց յետոյ էլ աշխատանքի ընդունակութիւնը չի վերանորոգւում, այն ժամանակ ընկերութեան անդամները անցնում են թոշակատու գանձարանը, որտեղից նրանք ստանում են ամսական 6 ֆ. օգնութիւն։

Շարլըրուայի աւազանի փոխադարձ օգնութեան սոցիալիստական ընկերութիւնների դաշնակցութիւնը, որի խմբերից շատերը սկզբում մըտնում էին կենտրօնական Շրջանի Դաշնակցութեան մէջ, կազմըւած է նոյն ծրագրով, ինչպէս և վերջինը։

Փոխադարձ օգնութեան առաջին սոցիալիստական ընկերութիւնը հիմնւած էր 1895 թ. Շարլըրուից ոչ հեռու գտնւող chatelet արդիւնաբերական փոքրիկ քաղաքում։ Մի փոքր ժամանակից յետոյ հիմնւեցին և միւսները, և շուտով իննը ընկերութիւնները միացան և կազմեցին դաշնակցութիւն։ 1903 թ. դեկտ. 31-ին—1904 թւին վերաբերող հաշիւը մենք դեռ չունենք—Շարլըրուայի դաշնակցութեան յարում էր 47 խումբ՝ 8,600 անդամով (1902 թ. անդամների ընդհանուր թիւը 8,470 էր)։ 1903 թ. տըրւած օգնութեան ընդհանուր գումարը 110,000 ֆր.-ից աւելի էր, իսկ բոլոր ընկերութիւնների դրամագլուխը—75,352 ֆր. սոցիալիստական պրոպօգանդի վրայ ծախսւած էր՝ 2,145 ֆր. 1,047 ֆրանկից աւելի յանձնւած էր բանւորական կուսակցութեան։

Շնորհիւ Roux-ի «La Concord» («Համաձայնութիւն») կօօ-

պերատիվ ընկերութեան նպաստի, դաշնակցութիւնը կարողացաւ հիմնել մշտական սեկրետարիատ, որ միաժամանակ մասնակցում է Շարլըրուայի սօցիալիստական դաշնակցութեան մշտական սեկրետարիատի աշխատանքներին։

Բ. Գենտում շնորհիւ այն հանգամանքի որ հին ընկերութիւնները փոքր առ փոքր վարակւում էին սօցիալիստական գաղափարներով, յաջողւեց ստեղծել մի լայն կազմակերպութիւն, որ յարում է բանւորական կուսակցութեան *)։

Արդէն մինչև 1886 թ. փորձեր էին անում ստեղծելու մասնաւորապէս մի գանձարան, որտեղ մասնակցէին բոլոր սօցիալիստները. այս նպատակով հիմնւած էր փոխադարձ օգնութեան մի գանձարան «Moyson», որ կոչւում էր այսպէս ի պատիւ Moyson»-ի, Ֆլանդրիայում սօցիալիզմի առաջին կարապետներից մէկի։ Բայց այդ գանձարանի գործունէութիւնը շատ քիչ յաջողութիւն ունեցաւ, որովհետև նրա հիմնադիրների ջանքերին խոչընդոտ հանդիսացան հին և ամրացած ընկերութիւնները։

Այս պատճառով էլ Գենտի սօցիալիստները, փոխելով իրանց տակտիկան, բոլոր մանր փոխադարձ օգնութեան ընկերութիւններին սկսեցին քարոզել դաշնակցութեան գաղափարը։

Շուտով արդէն կարելի էր հրաւիրել համագումար, որ և կայացաւ 1886 թ. դեկտ. 25-ին. քսան ընկերութիւնները որոշեցին հիմնել դաշնակցութիւն իրանց անդամներին ձրի բժշկական օգնութիւն հասցնելու նպատակով։ Մինչև այդ ժամանակ ընկերութեան անդամները հիւանդութեան դէպքում ստանում էին միայն դրամական օժանդակութիւն։ «Moyson» Դաշնակցութիւնը 1887 թ. յունւարի 24-ին հաշւում էր 4,600 անդամ։

Մի փոքր ժամանակից յետոյ դաշնակցութիւնը բժշկական օգնութեանը միացրեց և դեղօրայքի օգնութիւնը։ Թէ մէկի և թէ միւսի համար վճռւած էր շաբաթական վճար 5 սանտիմ։

Մնում էր մի քայլ ևս անել, ձուլել գոյութիւն ունեցող զանազան ընկերութիւնները և դաշնակցութեան փոխարէն ստեղծել մի կազմակերպութիւն, որ ընդունէր զուտ սօցիալիստական բնաւորութիւն։

---

*) Մանրամասնութիւնները տես. Varlez-ի մենագրութեան մէջ. «La federation ouvrière gantoise. Musée social. Janvier 1899.

Սկսեց ամենախիստ պրօպօգանդ, որը սակայն խոչընդոտի հանդիպեց բազմաթիւ հակասօցիալիստների կողմից, որոնք հաւատարիմ էին մնում դաշնակցական սկզբունքներին։ Յամառ ընդդիմադրութիւն ցոյց տւին նոյնպէս և գինետների տէրերը, որոնք ընկերութիւնների անդամներին ժողովների համար վարձով տալիս էին իրանց շինութիւնները։ Սօցիալիստներն այնուամենայնիւ յաղթանակեցին։ Բոլոր ասսօցիացիաները բացի մէկից ձայն տւին յօգուտ ձուլման, որ և կարճ միջանկեալ շրջանից յետոյ, երբ նոր կազմը գործադրւել էր իբրև փորձ—1890 թ. մարտի 1-ին ընդունւեց։

Սրա հետ միասին սկսեց և անընդհատ յաջողութիւնների շրջանը, որոնց շնորհիւ ընկերութեան անդամների թիւը 4,600-ից (1897 թ.) բարձրացաւ մինչև 10,323, իսկ եթէ հաշւելու լինենք և նրանց ընտանիքները, նոյն իսկ 30,000-ից աւելի (1904 թ.)։

Այդ միջոցին ընկերութիւնը լայնացրեց իր գործունէութիւնը, բանալով նոր ճիւղաւորութիւններ. 1891 թ. փետրվ. 1-ին հիմնւած էր ինվալիդների գանձարանը, 1894 թ. հոկտ. 1-ին—կեանքի ապահովագրութեան գանձարանը։

Այժմ «Moyson» դաշնակցութիւնը զուտ սօցիալիստական կազմակերպութիւն է և նրա իւրաքանչիւր հերթական ժողովին,—այդ հերթական ժողովները տեղի են ունենում իւրաքանչիւր երկու ամիսը մի անգամ և տասն և հինգ դահլիճներում միաժամանակ—կուսակցական հռետորները զեկուցումներ են կարդում սօցիալիզմի կամ պրօլետարիատին հետաքրքրող որևէ ուրիշ հարցի մասին։ Նրանք օրինակ, շատ յաճախ պարզում են այն օգուտները, որ «Bond Moyson»-ի անդամները կարող էին ստանալ, եթէ նրանք բոլորն էլ մտնէին Գենտի դաշնակցութեան սինդիկատները, կօօպերատիվները կամ ուրիշ հիմնարկութիւնները։

«Bond Moyson»-ին մասնակցողների շարքերում պէտք է տարբերել, բառիս բուն իմաստով հասկացւող, փոխադարձ օգնութեան ընկերութիւնների անդամներին, այն ընկերութիւնների անդամներից, որոնք իրանց նպատակն են դրել բժշկական օգնութիւն և դեղօրայք մատակարարել կօօպերատիվների անդամներին և մասնակի սեկցիայի՝ կեանքի ապահովագրութեան անդամներին։

I. Փոխադարձ օգնութեան ընկերութիւնները հաշւում են 10,223 անդամ, որոնք իրանց հերթին, նայելով նրանց անդամա-

վճառների քանակին, բաժանւում են երեք կատեգորիաների։ Սրանք բոլորն էլ իրաւունք ունեն ամենօրեա նպաստներ ստանալու. այս նպաստների չափը տարուբերւում է 1 ֆրանկից (առաջին վեց ամսւայ ընթացքում) և 50 սանտիմից սկսած (յաջորդ վեց ամսւայ ընթացքում) մինչև 2 ֆր. 60 ս. (առաջին տասը ամսւայ ընթացքում) և 1 ֆ. 50 ս. (յաջորդ կիսամեակի ընթացքում)։

Ընկերութեան բոլոր տղամարդ անդամները բացի դրանից մասնակցում են նաև ինվալիդների ֆօնդին, որ շաբաթական 2 սանտիմ յաւելեալ անդամավճարի փոխարէն օգնում է օգական 0,50 սանտիմով իր այն անդամներին, որոնց հիւանդութիւնը մէկ տարուց աւելի է տևում։

II. *Բժշկական օգնութիւն և դեղօրայք մատակարարող գանձարաններին մասնակցում են գլխաւորապէս փոխադարձ օգնութեան ընկերութիւնների անդամների կանայք և երեխաները։ Շաբաթական վեց սանտիմ անդամավճարի փոխարէն այս գանձարանների անդամները—20,300 մարդ—իրաւունք ունեն ստանալու դեղօրայք և բժշկի խորհուրդներ։*

III. «Bond Moyson»-*ին յարող կօոպերատիվների և նախ և առաջ* «Vorruit» *կօոպերատիվի անդամները, նոյն իսկ եթէ նրանք արդէն անդամ են փոխադարձ ընկերութեան, այնուամենայնիւ տալիս են շաբաթական 5 սանտիմ անդամավճար՝ պլիւս հինգական սանտիմ ամսական, և սրա փոխարէն նրանք բացի դեղօրայքից և բժշկական օնութիւնից ստանում են. ա) 10 ֆր։ նրանց ընտանիքի անդամներից որևէ մէկի մահւան դէպքում. բ) շաբաթական 6 հաց վեց շաբաթւայ ընթացքում հիւանդութեան դէպքում. գ) երեխայի ծնւելու դէպքում նւէր, բաղկացած տասը ցորենի հացից և կարկանդակ։*

IV. *Կեանքի ապահովագրութեան մասնակի բաժանմունքի անդամները անկախ նրանց հասակից, վճարում են բոլորն էլ շաբաթական 5 սանտիմ անդամավճար։ Բայց անդամ կարելի է գրւել միայն եօթից մինչև քառասուն և հինգ տարեկան հասակը։ Մահւան դէպքերի համար օգնութեան չափը որոշւած է 100 ֆր. և սրանից աւելին ոչ ոք չի կարող ստանալ։*

Սրանք են ահա «Moyson» *դաշնակցութեան կազմակերպած փոխադարձ օգնութեան տեսակները. բայց բացի սրանից Գենտի սօցիալիստները 1897 թւից սկսած ստեղծեցին մի նոր հիմնարկութիւն, որի նկարագրութիւնը բնականաբար պէտք է տեղ գտնի այս գլխում։*

Մենք ի նկատի ունենք այն թոշակատու գանձարանը, որ ստեղծել է «Voruit» *կօոպերատիվը, որ թոշակներ է տալիս հետևեալ պայմաններով, ա) կօոպերատիվին մասնակցող ամեն մի անդամ, որ առնւազն քսան տարւայ ընթացքում տարեկան 150 ֆր. առևտուր է արել կօոպերատիւին պատկանող ուտելեղէնների, մանր ապրանքի և պատրաստի շորերի մագազիններում, այդպիսի անհատը 60 տարեկան դառնալուց յետոյ իրաւունք ունի ստանալու 120 ֆր. թոշակ. այս թոշակն էլ տրւում է նրան իբև վկայագիր, որի հիման վրա, նրա խսկական արժէքի չափով նա կարող է ապրանք ստանալ կօոպերատիվի պահեստներից։*

բ) Այս թոշակի չափը աւելանում է մէկ տոկոսով, եթէ minimum *150 ֆրանկից աւելի է եղել տարեկան ծախքը. և աւելանում է մէկ ֆրանկով՝ նշանակած 20 տարուց աւելի ամեն մի յաւելեալ տարւայ համար, եթէ միայն ի հարկէ այս յաւելեալ ժամանակամիջոցին ևս կօոպերատիվի անդամը բաւարարութիւն էր տալիս այն բոլոր սովորական պայմաններին, որ պահանջւում է թոշակի իրաւունք ստանալու համար։*

Գենտի սօցիալիստների տւած այս օրինակին շտապեցին հետևել և կենտրօնական շրջանի բանւորները և բոլոր նշաններից երևում է, որ փոխադարձ օգնութեան և կօոպերատիվի այս սերտ կապը, որ շաղկապում և փոխադարձաբար ուժեղացնում է նրանց, քանի գնայ, այնքան աւելի կազմելու է բելգիական բանւորների կազմակերպութեան բնորոշ առանձնայատկութիւնը։

Փոխադարձ օգնութեան այն հիմնարկութիւնների մէջ, որոնք յարում են Բրիւսէլի «Maison du Peuple»-*ին («Ժողովրդական Տուն») մենք տեսնում ենք այդ տենդենցի մի ուրիշ, ոչ պակաս բնորոշ արտայայտութիւն։*

գ) Փոխադարձ օգնութեան սկզբունքի վրայ հիմնւած ապահովագրութիւնը կազմակերպւած էր Բրիւսէլի ահագին կօոպերատիվ ընկերութեան անդամների մէջ 1896 թ. դեկտ. 27-ին։ Այս նոր կազմակերպութիւնը—թէև Բրիւսէլի սօցիալիստների մեծամասնութիւնը վաղուց արդէն պատկանում էր զանազան չէզոք ընկերութիւններին—1904 թ. մարտի 1-ին հաշւում էր մօտ 2,500 անդամ, որոնք 1—2 ֆր. ամսավճարի փոխարէն հիւանդութեան

դէպքում ստանում էին օրական 2-ից մինչև 3,50 ֆր. նպաստ:

Բայց կօօպերատիվի բոլոր անդամները առանց խտրութեան, եթէ նրանք ընտանիքի տէր են, հիւանդութեան դէպքում իրաւունք ունեն ձրիաբար ստանալու բժշկական օգնութիւն և դեղօրայք նոյն իսկ այն դէպքում, եթէ նրանք անդամ չեն փոխադարձ օգնութեան գանձարանի:

Նրանք կարող են նոյն օգնութիւնը ստանալ և իրանց ընտանիքի անդամների համար, եթէ միայն ամեն մի անհատի համար շաբաթական վճարեն հինգ սանտիմ: Բացի դրանից, կօօպերատիվի բոլոր անդամները, որոնք մասնակցում են մէկ տարուց աւելի, հիւանդութեան դէպքում իրաւունք ունեն ձրի հաց ստանալու:

Առանց երկար բացատրութիւնների էլ պարզ է, որ այս բժշկական դեղօրայքի օգնութիւնը «Maison du Peupl»-ի համար կապւած է խոշոր ծախքերի հետ:

Օրինակ 1903 թ. յուլիսի 1-ից մինչև 1904 թ. յուլիսի 1-ը կօօպերատիվը, որ ունէր ընդամէնը 17,776 անդամ (թէ ընտանիքի տէր և թէ միւս մնացածները) ծախքերը հասնում էին 86,785 ֆր. 29 ս. պլիւս 12,545 ս., որ ծախսւած էր կօօպերատիվի հիւանդ անդամներին հաց մատակարարելու համար: Մուտքը—իբրև կօօպերատիվի անդամների ընտանիքի անդամավճար—հաւասար էր 25,433 ֆր. 80 ս. կօօպերատիվը այդպիսով դրամական զոհաբերութիւն էր արել 73,896 ֆր. 96 ս., որ ներկայացնում է այն տարբերութիւնը որ գոյանում է անդամավճարների ընդհանուր գումարի և ձրի հաց ու բժշկական դեղօրայքի օգնութեան վրայ եղած ծախքերի միջև:

Սա անկասկած մի ծանր բեռ է, բայց դժւար չէ տեսնել, թէ այս կօօպերատիվի մատուցած այս ծառայութիւնը ինչպիսի ազդեցութիւն ունի նրա անդամների աւելանալու և նրանց սպառումը կանոնաւորելու վրայ, որովհետև բժշկական օգնութիւնից օգտւելու համար հարկաւոր է կանոնաւոր առևտուր անել կօօպերատիվի մագազիններում:

Ուրիշ քաղաքներում ընդունւած սովորութեան հակառակ „Maison du Peuple"-ը անհրաժեշտ դեղօրայքը ստանում է նրա հետ համաձայնութիւն կայացրած 21 դեղագործներից:

Իսկ Գենտում, Ժօլիմօնում և մի քանի ուրիշ վայրերում

հիմնւած են կօօպերատիվ դեղատներ, որոնց կառավարիչներ են ֆարմացէվտի վկայագիր ունեցող անհատները: Vorruit օր. ունի այդպիսի չորս դեղատուն, «Le Progres» կօօպերատիվը Ժօլիմօնում—երկու:

Բրիւսէլում նոյնպէս գոյութիւն ունեն ժողովրդական դեղատներ, բայց հիմնւած լինելով փոխադարձ օգնութեան 35 ընկերութիւնների կողմից, որոնք ոչ մի քաքաքական գունաւորում չունեն, նրանք բոլորովին չէզոք են, թէև իրանց անդամների շարքերում հաշւում են և սօցիալիստներին:

Անկասկած զարմանալու ոչինչ չկայ, որ խիստ էժան գներով դեղեր ծախող այս հիմնարկութիւնները, յարուցանում են դեղագործարանատէրերի կողմից մեծ դժկամակութիւն: Վերջինները 1897 թ. սկսեցին մի եռանդուն պայքար փակելու կօօպերատիվ դեղատները, կամ յամենայն դէպս արգելելու, որ կօօպերատիվները իրաւունք չունենան բացի իրանց անդամներից կողմնակի մարդկանց էլ դեղեր վաճառելու:

Բայց այդ դեղագործների ջանքերը զուր էին. 1898 թ. մարտի 19-ի օրէնքը, որ փոփոխութեան ենթարկեց 1894 թ. յունիսի 23-ի օրէնքը փոխադարձ օգնութեան ընկերութիւնների մասին, թոյլ տւեց, որ իրաւաբանօրէն ճանաչւած այն ընկերութիւնները, որոնք ունեն դեղօրայք վաճառող կօօպերատիվ ապտեկների փայեր կամ ակցիաներ, ինչպէս և ոչ անդամները, հրաժարւեն կառավարչական այդ հաստատութիւնից: Այսպիսի հրաժարւելու միակ գործնական հետևանքն այն է, որ այդպիսի ընկերութիւնները այլ ևս չեն կարող նպաստներ ստանալ կառավարութիւնից կամ ինքնավարութեան մարմիններից: Եւ իրաւ անթոյլատրելի էր ճանաչւած, որ կառավարութիւնը կամ ինքնավարութեան մարմինները դրամական նպաստ տային այնպիսի՝ մի առևտրական ձեռնարկութիւններին, որոնք մրցում են միւս առևտրականների հետ:

§ 2. Բանւորական միութիւնները

Բելգիայի սինդիկալական շարժումն ուսումնասիրելու համար իրաւաբանօրէն ճանաչւած պրօֆեսսիօնալ միութիւններին վերաբերող ստատիստիքան աւելի քիչ կարող է օգնել, քան փոխադարձ օգնութեան ընկերութիւնների ստատիստիքան միւտիւ-

լիստական (փոխադարձ օգնութեան Ծ. Թ.) շարժման ուսումնասիրութեան, որովհետև արդիւնաբերական բանւորների միութիւնները, շատ քիչ բացառութեամբ հրաժարւում են այդպիսի իրաւաբանական վաւերացումն ստանալուց։

Միւս կողմից ստիպւած ենք ցաւելով մատնանշել և այն հանգամանքը, որ միւս երկրների համեմատութեամբ, որտեղ սինդիկալական կազմակերպութիւնը խիստ կենտրօնացած է, Բելգիայում դժւար է ճիշտ տեղեկութիւններ ստանալ բանւորական միութիւնների թւի, նրանց անդամների քանակութեան և միջոցների մասին։ Միութիւններից շատերը կամ բոլորովին չեն հրատարակում իրանց հաշիւները, կամ թէ հաղորդում են տեղական ազգաբնակութեան նեղ շրջանին։ Շատ յաճախ նրանք կարևոր չեն համարում պատասխանել այն հարցապնդումներին, որ անում են նրանց Աշխատանքի Մինիստրութեան ծառայողներն ու թղթակիցները կամ բանւորական կուսակցութեան սինդիկալական կօմմիսիայի անդամները, այնպէս որ ահա երկու թէ երեք տարի է, ինչ որ ո՛չ «Bulletin mensuel du travail», ոչ սինդիկալական կօմիսիայի օրգան «Journal des Correspondances»-ը չեն կարոնում տալ սինդիկալական շարժման ընդհանուր պատկերը։

Այն միակ փաստաթղթերը, որոնք մեր տրամադրութեան տակն են գտնւում, նրանք ևս ներկայացնում են այն անյարմարութիւնը, որ նրանք կամ հատ ու կտոր են, կամ թէ ներկայացնում են միայն յետադարձ հետաքրքրութիւն։

Մինչև 1892 թիւը եղած սինդիկալական կազմակերպութեան և շարժման մանրամասն տեսութիւնը կարելի է գտնել մեր աշխատութեան մէջ՝ „Enguete sur les association professionnelles d'artisans et d'ouvriers en Belgique" *)։

Այն ժամանակ, երբ լոյս տեսաւ այս գիրքը գործարանային արդիւնաբերութեան կազմակերպւած բանւորների թիւը հասնում էր մօտաւորապէս 17 հազարի։ Աւելացնելով սրան այն միութիւնները, որոնք ստեղծւել էին կռիւ մղելու արտադրող արդիւնաբերական ասպարէզում (հանքերը, քարհատութիւն և այլն), այն ժամանակ մենք կըստանանք ընդհանուր առմամբ 60—70,000

*) Vandervelde Enquête sur les associetion professionelless d'artisans et d'ouvriers en Belgigue. 2 volumes. Bruxelles 1892

մարդ կամ որ միևնոյն է՝ ամբողջ արդիւնաբերական ազգաբնակութեան 1/10-ից մի փոքր աւելի *)։

Տասը տարի անց մեր աշխատութիւնը լրացրեց նոր տեղեկութիւններով և ժողովրդականացրեց Լիւի Վարլէն, որ Փարիզի «Musée Social»-ի մէջ տպագրեց մի յիշատակագիր՝ «Quelques pages d'histoire sindical en Belgique» **)։

Այս յօդւածի մէջ, որ կազմւած է շատ բովանդակալից կերպով և հարուստ է փաստաթղթերից վերցրած ցիտատներով, Լիւի Վարլէն Բելգիայի սինդիկալական շարժման մէջ որոշում է երեք ուղղութիւն, որոնք mutatis mutandis համապատասխանում են Գերմանիայում գոյութիւն ունեցող հետևեալ երեք բաժանմունքներին՝ այն է. Հիրշ-Դունկերիան բանւորական միութիւնները, քրիստոնէական սինդիկատները և Gewerkschaften սօցիալիստական տենդենցներով։

Առաջին ուղղութեան ներկայացուցիչները Բելգիայում այն միութիւններն են, որոնք յարում են ազատամիտ բանւորական կուսակցութեան. երկրորդ ուղղութեան—բելգիական դեմօկրատական լիգային յարող սինդիկատները (կաթօլիքական լիգիայի), երրորդը—այն սինդիկատները, որոնք յարում են բանւորական կուսակցութեան սիդիկալական կօմիսիային։

Մենք այսպիսի դասաւորութեան դէմ ոչինչ չունենք ընդիմախօսելու, բացի գուցէ այն հանգամանքից, որ ազատամիտ սինդիկատները, ինչպէս և ազատամիտ բանւորական կուսակցութիւնը գոյութիւն ունի ոչ այնքան իրականութեան, որքան այն մարդկանց յօյսերի աշխարհում, որոնք կը ցանկանային ազատամտութիւնից խլել նրա բացառապէս բուրժուական բնաւորութիւնը։ Ամենաշատը, որ կարելի է դրանց հետքերից գտնել մի բան, դրանք ազատամիտ պրօֆեսիօնալ միութիւնների այն մի քանի թոյլ սաղմերն են, որ կարելի է հանդիպել Գենտում, Անտվերպենում և Ֆլանդրիայի մի քանի վայրերում, որտեղ ձեռնարկող-

*) Ibid. Annexe, vol. I. p. 271. et suiv statistique des socie'te's de re'sistance.

**) Le Ahuse'e social. Supple'ment aux Annales Mars 1902 Paris Brusselau. 1902

-ների՝ գործատէրերի մի մասը ազատամիտներ են և վարձում են գլխաւորապէս իրանց քաղաքական համախոհներին։

Իսկ ինչ վերաբերում է բելգիական դեմօկրատական լիգային յարած կաթօլիկ բանւորական միութիւններին, կաթօլիկ քահանայ Geslaw Rutten-ը այդ լիգայի կօնգրէսին, որ կայացաւ 1901 թ. փետրւարի 22-ին Բրիւգէում, նրա անդամների թիւը հաշւում էր 11 հազար. 1904 թւին, Լիւվիէրի կօնգրէսում նա անդամների թիւը հաշւում էր 14,759 մարդ։ Դեռ մինչև այժմ էլ այս սինդիկատները ներկայացնում են ընկերութիւններ, որոնք հիմնւած են կուելու աւելի շատ սօցիալիզմի, քան թէ կապիտալիզմի դէմ։ Բայց որովհետև դժւար է բանւորներին կազմակերպել նրանց պրօֆեսսիօնալ շահերը պաշտպանելու համար այնպէս որ այդ բանւորները վաղ թէ ուշ լրջութեամբ կը վերաբերւեն իրանց շահերին, այդ պատճառով էլ պահպանողականներից շատերը թերահաւատութեամբ կամ նոյն իսկ թշնամաբար են վերաբերւում ամէն միութեան, անկախ նրա բնաւորութիւնից, և հէնց այստեղ է թաղնւած այն երևոյթի գաղտնիքը, որ Բելգիայում քրիստոնէական սինդեկալական շարժումը միայն երկրորդական նշանակութիւն ունի։

Այս պատճառով ընդհանրապէս ասած, իբրև իսկապէս մարտական կազմակերպութիւններ, մենք կարող ենք հաշւել միայն սօցիալիստական սինդեկատները և չէզօք միութիւնները, որոնք մեծ մասամբ յարում են բանւորական կուսակցութեան սինդիկալական կօմիսսիային *)։

Բանւորական կուսակցութեան սինդիկալական կօմիսսիան, որ ստեղծւել է համաձայն Վերվիէի սօցիալիստական կօնգրէսի որոշման, իրան նպատակ է դնում ուսումնասիրել բանւորական հարցը ինչպէս արտասահմանում, նոյնպէս և մեր երկրում, աջակցել բանւորական միութիւններին յարաբերութիւններ ստեղծել միմիանց և արտասահմանի նման միութիւնների միջև, հրատարակել իրանց աշխատութիւնների և ուսումնասիրութիւնների հետև-

*) Սինդիկալական կօմիսսիայի կազմակերպութեան և գործունէութեան մասին տես նրա օրգանը. «La journal des Correspondances» և 1899, 1900, 1901 և 1902 թւերի սինդիկալական 1, 2, 3, 4, 5 կօնգրէսների արձանագրութիւնները հրատ. Բրիւսսէլում, տես նոյնպէս „Revue du Travail"-ում հրատարակւող հաշիւները։

անքները, ինչպէս նաև կազմակերպել բանւորական ասսօցիացիաների ներկայացուցիչների կօնգրեսներ»։

Նա բանւորական կուսակցութեան ընդհանուր խորհրդի մի սեկցիա է, բայց թոյլ է տալիս իրան յաջակցելու այն բոլոր սինդիկատներին, որոնք ընդունում են քաղաքական կուի անհրաժեշտութիւնը. այսպիսով նա աջողեցրեց իրան միացնելու կարևորագոյն չէզօք միութիւնները ինչպէս օր. Féde'ration du livre, l'Union verrière, l'Assosiation ge'ne'ral des diamantaires d'Anvers։

Բայց թէև սինդիկալական կօմիսսիայի օգտին նշանակած անդամավճարը ուղղակի չնչին է—տարեկան հինգ սանտիմ ամէն մի մարդուց,—այնուամենայնիւ միութիւնների մեծ մասը անկանոն է կատարում իր պարտականութիւնը կօմիսսիայի վերաբերմամբ, որով նորից ցոյց են տալիս Բելգիացւոց յատուկ այն հակակրութիւնը, որ նա տածում է դէպի ամէն մի կենտրօնացում։

Եւ իրաւ, չը նայելով որ կուսակցութեան ընդհանուր խորհուրդը տարեկան տալիս է 800 ֆր. նպաստ, այնուամենայնիւ սինդիկալական կօմիսսիայի տարեկան բիւջէն ընդամենը 2:000 ֆր. է մի թիւ, որ իսկապէս ծիծաղելի է, եթէ յիշենք, որ կօմիսսիային յարած են և նրա կօնգրեսներին սովորաբար ներկայացւած են լինում 80,000 մարդ։

Սա օրինակ երևում է հետևեալ աղիւսակից, որ ցոյց էր տւած 1902 թ. դեկտեմբերի 24-ին 25-ին կայացած բանւորական միութիւնների չորրորդ կօնգրէսին *)։

Այսպիսով 1902 թւի վերջը սինդիկալական կօմիսիան հաշւում էր, 101,461 բանւոր, որոնք մտնում էին միութիւնների մէջ, նրանցից 83,677 բանւոր յարում էին կօմիսիային, 2,133-ը պատկանում էին ազատամիտ միութիւններին և 3,747-ը կաթօլիկական միութիւններին։

Այս թւերը, որոնք սօցիալիստական տենդենցներ ունեցող սինդիկատների վերաբերմամբ մօտաւորապէս ճիշտ են, անկասկած իրականից աւելի փոքր են միւս խմբերի և մանաւորապէս կաթօլիկական միութիւնների վերաբերմամբ։ Շատ հաւանական է, որ ընդամենը 800,000 բանւորներից, որոնցից 600,000 տղամարդիկ էին, պրօֆեսսիօնալ բանւորական այս միութիւնները

*) Տես աղիւսակ—110-րդ երես։

Միութիւններ, որոնք յարում են սինդիկալական կոմիսիայի. | Որոնք չեն յարում

	1901 թ. Տղամարդիկ	1901 թ. Կանայք	1901 թ. Ընդամենը	1902 թ. Տղամարդիկ	1902 թ. Կանայք	1902 թ. Ընդամենը	Կաթոլիկներ	Ազատամիտներ	Չէզոքներ	1902 թ. միութիւնների մէջ մտնող բոլոր անդամների ընդհանուր թիւը.
Արհեստաւորներ . . .	328	6	334	315	3	318	33	—	—	351. Նրանցից կանայք 3.
Տեղափոխութիւն . . .	1,975	—	1,975	900	—	900	41	567	—	1,508.
Լեռնահանքերի բանուորներ .	45,000	—	45,000	55,000	—	55,000	—	—	—	55,000.
Մետալուրգիական արդիւնաբեր.	3,787	3,144	6,931	3,543	2,720	6,263	2,560	1,390	2,675	12,888, որից 3,245 կին պատ. են յարող միութիւններին.
Ապակէ արդիւնաբերութիւն .	7,026	—	7,026	7,262	—	7,262	509	144	35	7,950.
Հագուստ և կօշիկներ . .	—	—	—	—	—	—	—	—	6,700	6,700.
Կառուցագործական արդիւն.	1,363	30	1,393	1940	312	2,252	130	—	—	2382-312 կին պատ.յար.մ-թ-ն.
Քարհատներ, քարտաշներ, քար բերողներ, սալողներ . .	3,803	—	3,803	4503	—	4,503	130	—	—	4,633.
Փայտի մշակումն և կահ կարասիքի պատրաստելը . .	1,922	6	1,928	2,107	9	2,116	106	32	175	2,429-9 կին պատ. յար. մ-թ-ն.
Թութուն	1,400	—	1,400	1,400	—	1,400	—	—	—	1,400.
Գրքեր (տպագր. և կազմար.) .	677	50	727	677	50	727	—	—	2,318	30 45-50 կին պատ.յար.մ-թ-ն.
Հում և մշակած կաշիներ . .	980	—	980	1090	—	1,090	—	—	—	1,090.
Թամքի և կառքի արդիւնաբեր.	255	—	255	338	—	338	—	—	—	338.
Սննդարար նիւթերը . .	500	—	500	522	—	522	28	—	—	550.
Գլխարկի արտադրութիւն . .	725	—	725	689	—	689	—	—	—	689.
Զանազան արտադրութիւններ .	314	—	314	297	—	297	210	—	—	507.
	70.055	3,236	73,291	80,583	3,094	83,677	3,747	2,133	11903	101.460, որից 3,619 կ. պատ. չէզօք կամ յար. միութիւնն.

1902 թ. ընդհանուր առմամբ հաշւում էին 110,000 մարդ։

1902 թւից սկսած այս թւերը բաւական փոփոխութեան ենթարկւեցին, բայց մենք դժբաղդաբար այս տեսակէտից չենք կարող հաղորդել ճիշտ տեղեկութիւններ։

Յայտնի է օր. որ 1902 թւի ապրիլին այն գործադուլի անյաջող ելքը, որը սկսւած էր պաշտպանելու ընդհանուր ընտրողական իրաւունքի պահանջը և ոտքի էր կանգնեցրել երեք հարիւր հազար մարդ, այն հետեւանքն ունեցաւ, որ շատ տեղեր պակասեց անդամների թիւը և նոյն իսկ «Լեռնահանքերի բանուորների դաշնակցութեան» մի քանի խմբերը լուծւեցին։

Բայց միւս կողմից քարածխի հանքերում նկատելի է մի լուրջ հոսանք, որ ուղղւած է ստեղծելու «բազմատեսակ նպատակներ» (à bases multiples) սինդիկատներ-այսինքն այնպիսի սինդիկատներ որոնք փոխադարձ օգնութիւնը զուգորդէին կապիտալի դէմ մղւող կուին, այնպէս որ յիշեալ դաշնակցութիւնը վերջ ի վերջոյ աւելի շուտ ուժեղանում է, քան թուլանում։

Նոյն դրութեան մէջ է և միւս միութիւնների մեծամասնութիւնը, չը նայելով այն ժամանակաւոր թուլացման, որ նրանք զգացին 1902 թւի գործադուլից յետոյ։

Շնորհիւ եռանդուն պրօպագանդին և ոգևորւած այն յաջողութեամբ, որին հասել են Գերմանիայում, բելգիական բանուորներն էս սկսում են հասկանալ—լաւ է ուշ, քան երբէք—որ եթէ կամենում են, որ ընկերութիւնների անդամները սերտ կապով կապւած լինեն նրանց հետ, այնպիսի կապով, որ հէնց առաջին անյաջողութեան դէպքում չը թուլանայ և չը կտրւի, անհրաժեշտ է, որ մեծացնեն անդամավճարը։

Եւ իրաւ, եթէ աչքի անցնենք սինդիկալական կոմիսիայի տարեկան կօնգրեսների արձանագրութիւնները, բոլոր դեբատներից պարզ կը տեսնենք այն փաստը, որ տիրապետող ձգտումն է—մեծացնել անդամավճարները, ստեղծել մշտական և վճարովի քարտուղարներ, կապիտալի դէմ մաքառման աւելացնել փոխադարձ օգնութիւնը կամ գործազրկութեան դէպքերի համար ապահովագրութիւնը։

Այս տեսակէտից բանւորական կուսակցութեան բոլոր կազմակերպութիւններից անկասկած ամենից յաջողութիւն կունենան այն սինդիկատները, որոնք յարում են Գենտի դաշնակցութեան։

Ինչ վերաբերում է գործազրկութիւնից ապահովագրելուն, նրանք ամենից խոշոր օգնութիւնը ստացան ստեղծելով գործազուրկների համար Գենտի համայնական ֆոնդեր։ Մենք կարծում ենք, որ այստեղ հետաքրքիր կը լինի մի քանի մանրամասնութիւններ յիշել Գենտի քաղաքային ինքնավարութեան այս ձեռնարկութեան մասին։

Սօցիալիստակա ձայնաւորների առաջարկութեամբ Գենտի համայնական խորհուրդը արդէն մի քանի անգամ փորձել էր որ և է միջոց գտնել արդիւնաբերական գործազրկութեան քրօնիկական չարիքի առաջն առնելու համար. 1898 թւին դեկտ. 19-ին որոշուած էր հիմնել մի առանձին յանձնաժողով, որ այս խնդրի վերաբերմամբ պիտի մշակէր որևէ առաջարկ։ 1900 թւի յունիսի 14-ին յանձնաժողովը առաջարկեց իր զեկուցումը, որով նա առաջարկում էր հիմնել առանձին խնայողական գանձարաններ, այն բանւորների համար, որոնք չեն մտնում միութիւնները և նպաստներ տալ այն գործազուրկներին, որոնք օգնութիւն են ստանում իրանց սինդիկատներից։ Խորհուրդը ընդունեց երկու առաջարկութիւններն ես և 1901 թ. յունւարի 28-ին որոշեց տալ իւրաքանչիւր տարի 10,000 ֆր. գործազուրկների համար ֆոնդ ստեղծելու նպատակով։ Սրա հետ միաժամանակ խորհուրդը նշանակեց այս սիստեմի հեղինակ Լիւի Վարլէի նախագահութեամբ և մի ժասնաժողով, որի կէսը կազմուած էր ձայնաւորներից, իսկ կէսը՝ պրօֆեսսիօնալ միութիւնների ներկայացուցիչներից, որի պարտականութիւնն էր նշանակած նպաստը բաշխել շահագրգռուած կողմերի միջև։

Ինչպէս երևում է միութիւններից դուրս մնացած բանւորների համար հիմնուած խնայողական գանձարանները, գոնէ մինչև այժմ, զարգացման ոչ մի նշան չեն ցոյց տալիս։ Ընդհակառակն այն սիստեմը, որի հիման վրայ սինդիկատներին նպաստ է տրւում համապատասխան այն ծախքերի, որ նրանք անում են գործազուրկներին օգնելու համար, այդ սիստեմը միանգամայն անսպասելի հետևանքներ ունեցաւ։

Թէև Գենտի կօմիսիայի տրամադրութեան տակ գտնուած միջոցները աւելի քիչ էին, քան այն միջոցները, որ ունեն Գերմանիայում, և Շվէյցարիայում գոյութիւն ունեցող անգործութիւնից ապահովագրող ազատ գանձարանները, այնուամենայնիւ մի

տարւայ ընթացքում կարողացաւ համախմբել 28 պրօֆեսիօնալ կազմակերպութեան 12,906 անդամներով, այսինքն անհամեմատ աւելի անդամներ, քան թէ կարելի է գտնել արտասահմանեան որևէ ուրիշ անգործութիւնից ապահովագրող ընկերութեան, կամ թէ նոյն իսկ բոլոր գանձարանների մէջ։

Այժմ գոյութիւն ունի կօմիսիային յարող 34 սինդիկատ, իսկ Գենտի բոլոր սինդիկատները, ըստ կօմիսիայի հաշւի, 1903 թւին 37 էին։

Այս սինդիկատները ըստ իրանց քաղաքական տենդենցների և անդամների քանակութեան բաժանւում էին այսպէս։

ա) Ազատամիտ սինդիկատներ

Կտաւատի արդիւնաբերութեան բանւորների և բանւորուհիների սինդիկատ	560 մ.
Բամբակէ արդիւնաբերութեան բանւորների և բանւորուհիների սինդիկատ	120 »
Փայտ մշակող բանւորների ընկերակցութիւն . .	30 »
Մետալլուրգիական բանւորների սինդիկատ . .	122 »
Կուի ազատամիտ գանձարան	30 »
	862 մ.

բ) Սօցիալիզմի դէմ կռւող սինդիկատներ.
(կաթոլիքական).

Կտաւատի բանւորների և բանւորուհիների սինդիկատ	868 մ.
Բամբակի բանւորների միութիւն . . .	517 »
Ջուլհակների միութիւն	940 »
Քարհատների միութիւն	192 »
Նկարիչների ընկերութիւն	61 »
Փայտ մշակող բանւորներ	536 »
Հացթուխներ :	36 »
Մսագործների գիլդիան	24 »
Դերձակների սինդիկատ	138 »
Կօշկակարների միութիւն	50 »
Գործակատարներ, արհեստաւորներ, կառապաններ .	88 »
	3,578 մ.

գ) Սօցիալիստական սինդիկատներ

Կտաւատի բանուորներ և բանուորուհիներ	1,200 մ.
Բամբակի արդիւնաբե. բանուորներ և բանուորուհիներ	1,397 »
Ջուլհակների եղբայրութիւնը	1,467 »
Քարհատներ	247 »
Նկարիչների լիգան	110 »
Փայտ մշակող բանուորներ	600 »
Ատաղձագործների	102 »
Մետալլուրգիական բանուորների լիգան	1,332 »
Ոսկեզօծողներ	163 »
Թութունի արդիւնաբերութեան բանուորներ	230 »
Բուլօչնիկներ	80 »
Դերձակներ	40 »
Կօշկակարներ	38 »
Սօցիալիստ մշակներ	553 »
Փողոց մաքրողներ	50 »
Կուի գանձարան	262 »
	7,871 մ.

դ) Չէզօք սինդիկատներ

Տպարանական լիգա	324 մ.
Կազմարարների լիգա	90 »
Վիմագիրների միութիւն	23 »
Գեղարուեստական արդ. բան. սինդիկատ	68 »
	505 մ.

Ինչպէս տեսնում էք Գենտի միութիւնների 12,816 անդամների համարեա երկու երրորդականը պատկանում է սօցիալիստական սինդիկատներին, չը նայելով նրան, որ պահպանողականները ոչ մի տեղ այնքան ջանք չեն գործ դրել բանուորներին պրօֆեսսիօնալ հողի վրայ կազմակերպելու, որքան Գենտում:

Բրիւսսէլում համարեա բոլորովին անյայտ են ազատամիտ բանուորների սինդիկատները: «Բանուորական Տան» յարող «Բրիստոնեայ կօրպօրացիաները» համարեա ոչ մի նշանակութիւն չունեն և բացի չորս անկախ սինդիկատներից—տպարանական բան-

ւորների, ձեռնոցագործների, ակնագործների, ձեռքով գլխարկ կարողների—միացած բոլոր սինդիկատները, որոնք որևէ ազդեցութիւն ունեն, յարում են բանուորական կուսակցութեան Բրիւսէլի դաշնակցութեան:

Այս դաշնակցութեան յարող սինդիկատները 1892 թւին հաշւում էր 33, երեք հազար անդամներով. ներկայումս նրանք հաշւում են 59—մօտաւորապէս վեց հազար անդամներով:

Այս սինդիկատներից կարևորագոյները համախմբւում են հետևեալ տեղական դաշնակցութիւնների շուրջը.

Մետալուրգիական բանուորների դաշն.		1,263 մ.
Շինարարական բանուորների	»	450 մ.
Տպարան. արդիւնաբեր. (կազմարարներ, վիմագրողներ)	»	480 մ.
Կաշուի արդիւնաբեր. բանուորն.	»	425 մ.
Կառքերի արդիւնաբեր. բանւ.	»	210 մ.
Կահ-կարաս. արդիւնաբ. բանւ.	»	670 մ.
Փոխադր. արդիւնաբեր. բանւ.	»	400 մ.
Կօշկեղէնի արդիւնաբ. բանւ.	»	325 մ.
Հագուստեղէն պատրաս. բանւ.	»	575 մ.
Ուտելեղէններ պատրաս. բանւ.	»	280 մ.
Պահեստն. և գրասենեակն. ծառ.	»	350 մ.

Պէտք է նկատել, որ այս թւերը, ընդհանուր առմամբ, իրականութիւնից աւելի փոքր են, որովհետև բանուորական կուսակցութեան յարող սինդիկատները ցոյց են տալիս մի ոչ գովելի յատկութիւն՝ այն է փոքրացնել իրանց անդամների թիւը, որ որքան կարելի է քիչ անդամավճար տան դաշնակցութեան:

Բացի Գենտից և Բրիւսսէլից կարևորագոյն սինդիկատներ գոյութիւն ունեն Վերվէում—բրդէ արդիւնաբերական բանուորների, Անտվերպէնում—մշակների, ակնագործների և թութունի արդիւնաբերական բանուորների, կենտրոնական նահանգում և Շարլըրուայի շրջանում—մետալլուրգիական, հանքագործական և ապակէ գործարանների բանուորների շրջանում:

Այս կազմակերպութիւններից մի քանիսը կրում են տեղական բնաւորութիւն. այսպէս է օրինակ, Անտվերպէնի ակնագործների հզօր «Ընդհանուր Կազմակերպութիւնը», ուր մտնում է այս պրօֆեսսիայի բանուորների մեծամասնութիւնը. (1905 թ. յունւ.

1-ին բոլոր 3,500 բանւորներից՝ 3,209 մարդ)․ «Բուրդ մշակող բանւորների դաշնակցութիւն» որ բրդէ արդիւնաբերութեան նման կենտրօնացած է Վերվէում և նրա շրջականերում. «Ապակագործների Միութիւնը» Լօդելինսարում (Շարլըրուայ), որ հաշւում է 5,500 անդամ և 1904 թ. յուլիսին ունէր 100,000 ֆր. աւելի արժեցող անշարժ կալւածք, իսկ գանձարանում՝ արձեռն դրամ 1 միլլիօն ֆրանկ. *)։

Միւս միութիւններն ընդհակառակն կազմում են ազգային դաշնակցութիւններ, որոնցից գլխաւորագոյներն են. Fe'de'ration du livre (տպարանական արդիւնաբերութիւն), որ ունի չէզօք բնաւորութիւն. փայտ մշակող բանւորների դաշնակցութիւն, քար մշակող բանւորների դաշնակցութիւն, մետալլուրգիական բանւորների դաշնակցութիւն և այլն։

Մետալլուրգիական բանւորների դաշնակցութիւնը, որ հիմնւած է 1886 թւին, կարօղ է համարւել իբրև տիպիքական կազմակերպութիւն բանւորական կուսակցութեան սինդիկալական դաշնակցութիւնների համար։ Նա բաղկացած է 51 խմբից, որոնցից 5-ը գտնւում են Անտվերպենի գաւառում, 15-ը Բրաբանտում, 25 Գենօւում,3 Լիէժի գաւառում և 3-ը երկու Ֆլանդրիայում։ Այս տեղական խմբերը, սովորաբար, իրանց համար դնում են զանազան նպատակներ. կռիւ կապիտալիստների դէմ, օգնութիւն գործազուրկներին, երբեմն նոյնպէս հիւանդութեան դէպքերում ապահովագրութիւն և թօշակներ ծերերին։ Նրանք ամեն մի անդամի համար ամսական տալիս են դաշնակցութեան օգտին 25 սանտիմ, իսկ դաշնակցութիւնը գործադուլի դէպքում տալիս է ամեն մի անդամի համար օրական 2 ֆրանկ։

Մետալլուրգիական բանւորների դաշնակցութիւնը 1887 թ. հաշւում էր 2,118 անդամ. 1892 թ.—3,747 անդ., 1902—7,026, 1905—7,460.—Նրանցից մօտ 7,000 մարդ կանօնաւոր կերպով վճարում էին իրանց անդամավճառները։

Սակայն, եթէ յիշենք, որ մետալլուրգիական արդիւնաբե-

*) Շարլըրուայի շրջանում բացի «ապակեգործների միութիւնից» գոյութիւն ունի նաև «անկախ ապակեգործների սինդիկատը» (դեղին), որ ունի 800—900 մարդ. կայ նաև պահեստներում ծառայողների սինդիկատ (ապակի կտրողներ, գաստւորողներ և սրողներ)։

րութեամբ զբաղւած են հարիւր հազարից աւելի բանւորներ, այն ժամանակ դաշնակցութեան անդամների թիւը չափազանց սահմանափակ կերևայ. բայց սա էլ ինքն ըստ ինքեան մի ամուր գունդ է որի բարոյական ոյժը և ամբողջ կօրպօրացիայի վրայ ունեցած ազդեցութիւնը գերազանցում է նրա թւական ոյժին։

Բայց մետալուրգիական բանւորների դաշնակցութիւնը—բանւորական կուսակցութեան սինդիկալական դաշնակցութիւնների մէջ ամենից լաւ կազմակերպութիւններից մէկն է, գուցէ և միակը՝ այս պատճառով պէտքէ խոստովանել, որ սինդիկալական տեսակէտից բելգիական պրօլետարիատը դեռ շատ բան ունի անելու, որպէսզի կանգնի մի և նոյն բարձրութեան վրայ, ինչ բարձրութեան վրայ կանգնած են—չենք ասում Անգլիայի տրէդ—ունիօնները, որոնք կարող են առիթ տալ շատ իրաւացի նկատողութիւններին, այլ Գերմանիայի պրօֆեսիօնալ միութիւնները, սօցիալիստական տենդենց ունեցող Gewerkschaften, որոնք վերջին տասը տարւայ ընթացքում այնքան զարմանալի արագութեամբ զարգացան։

Մենք մտադիր չենք այստեղ ցոյց տալու Բելգիայի միութիւնների համեմատական թուլութեան պատճառները. այսքան միայն ասենք, որ հէնց այն հանգամանքը, որ գոյութիւն ունի մի այդպիսի հզօր կօօպերատիվ կազմակերպութիւն, որ միւս կազմակերպութիւնների վերաբերմամբ խաղում է օժանդակ և լրացուցիչ օրգանի դերը և կրիտիքական րօպէներին տալիս է նրանց նպաստներ,—այս հանգամանքը այն հետևանքն ունեցաւ, որ սկսեցին աւելի պակաս չափով զգալ այնպիսի ուժեղ պրօֆեսիօնալ միութիւնների անհրաժեշտութիւնը, որոնց պաշտպանելու համար ստիպւած պիտի լինէին մեծ անդամավճարներ տալ։

Միւս կողմից քաղաքական և տնտեսական կռիւների սերտ կապակցութիւնը թէև ունի իր անպայման նպաստաւոր կողմը, բայց և այնպէս չը պէտք է մոռանալ և այն, որ սինդիկատների՝ բանւորական կուսակցութեան յարելը կարող էր ունենալ և այն հետևանքը, որ բանւորների մի մասը, որ կապիտալիստների դէմ կռւելու համար անհրաժեշտ գիտակցութիւն ունի, բայց սօցիալ-դեմօկրատիայի վերջնական նպատակներին վերաբերում է թըշնամաբար կամ անտարբերութեամբ, որ այդ մի մասը կը մնար սինդիկալական շարժումից դուրս։

Յամենայն դէպս անկասկած է, որ այնպիսի ուժեղ պրօֆեսիօնալ ընկերակցութիւնները, ինչպէս օր, «Տպարանական արդիւնաբերութեան բանւորների դաշնակցութիւնը», «Իւվելիրների ընդհանուր ընկերակցութիւնը», «Ապակագործների միութիւնը» թէև յարած են «Սինդիկալական կոմիսիային» և իրանց շարքերում հաշւում են բաւական քանակութեամբ սօցիալիստներ, այնուամենայնիւ գերադասում են չը միանալ բանւորական կուսակցութեան. իսկ մի քանի վայրերում և մանաւանդ Անտվերպենում, Վիրվէում և նոյն իսկ Շարլըրուայի աւազանում վերջին ժամանակներս շօշափելի կերպով նկատելի է միութիւններին չէզօք բնաւորութիւն տալու ձգտումը:

Սօցիալիստներից շատերը միաժամանակ կարծում են, թէ չէզօք բնաւորութիւնը սօցիալիզմի համար աւելի շուտ նպաստաւոր է, քան աննպաստ, որովհետև թեթևացնելով տնտեսական հողի վրայ բոլոր բանւորներին միացնելու գործը, այդ չէզօք բանւորութիւնը թերևս յետագայում հեշտացնի և նրանց քաղաքական միացումը: Մենք մտադիր չենք այժմ քննելու այս խնդիրը, որ ինչպէս թւում է մեզ, լուծւում է յարմարութեան և ոչ թէ սկզբունքային դիտողութիւնների հիման վրայ: Եւ իրաւ ամենքը համաձայն են, որ չափազանց ցանկալի է բանւորական կուսակցութեան և սինդիկալական կազմակերպութիւնների միջև ստեղծել որքան կարելի է սերտ և մօտ յարաբերութիւններ ու կապեր: Ամբողջ հարցը կայանում է նրանում, թէ ո՞ր ճանապարհով աւելի լաւ է մօտենալ այս կապը ստեղծելու հարցին-արդեօք պէտք է պինդ բռնել այն տեսակէտից, թէ բանւորական կուսակցութեան պատկանելը պէտք է համարել մի անհրաժեշտ պայման այնուհետև սինդիկալական կազմակերպութիւնը մտնելու համար, թէ ընդհակառակն գերադասելի է սինդիկատների շարքն ընդունել բոլոր ցանկացողներին, որպէսզի այնուհետև նրանցից որքան կարելի է շատ կողմնակիցներ գինւորագրել բանւորական կուսակցութեան համար:

Ներկայումս գործադրւում է թէ մէկ և թէ միւս մեթոդը. մենք գերադասութիւն ենք տալիս առաջին մեթոդին, բայց և չենք վիճում, որոշ պայմաններում կարելի է շատ հիմնաւոր դիտողութիւններ առաջ բերել և յօգուտ երկրորդ մեթոդի:

§ 3. Կօօպերատիվ հիմնարկութիւններ

Մեր երկրներում կօօպերատիվ շարժումը նշանաւոր չափեր
է ընդունում միայն 25 տարի սրանից առաջ—այն ժամանակից
սկսած, երբ ժողորդական դեղատներն ու մանաւանդ «Vooruit»
սօցիալիստական փուռը ստեղծեցին ասսօցիացիայի (ընկերակցութեան) միանգամայն ինքնուրոյն և բանւորական դասակարգի
պահանջներին ու տենդենցներին յարմարեցրած նոր ձևեր:

Բելգիայի կօօպերացիայի պատմութիւնը իր առաջին քայլերում, ոչ այլ ինչ է, եթէ ոչ անյաջողութիւնների պատմութիւն,
որի հետ ծանօթացնում է մեր բարեկամ Բերտրանը բազմաթիւ
թանկագին փաստեղթեր պարունակող իր աշխատութեան մէջ *):
1848 թ. Ֆրանսիայի օրինակի հետևողութեամբ հիմնել էին
արտադրողական ընկերութիւններ, որոնք սակայն երկու տարի
էլ չը կարօղացան գոյութիւն ունենալ: Կարօղացաւ իր գոյութիւնը պահպանել միայն Բրիւսէլի «Տպարանական ասսօցիացիան»,
բայց նա էլ կորցրեց իր կօօպերատիվ բնաւորութիւնը: 1865 թ.
Բրիւսէլի «Ազատ քարտաշները» նախաձեռնեցին ժողովրդական
կօօպերատիվ մի ռէստօրան, որ մինչև այժմ էլ գոյութիւն ունի
Fourneaux e'conomiques» անունով:

Ինտերնացիօնալի պրօպօգանդայի հետ միասին սկսեց և
մի շրջան, որ յայտնի դարձաւ իր բազմաթիւ սպառողական ընկերութիւններով: Նրանց տիպիքական ձևն էր բակալէյնի և գաղութային ապրանքների ու ալիւրի մագազինը: 1871 թ. այնքան
շատ էին այս ընկերութիւնները, որ մտադրութիւն կար ստեղծել
մի դաշնակցութիւն ապրանքները հակով գնելու համար: Բայց
ինտերնացիօնալի լուծւելով կանգ առաւ կօօպերատիվ շարժումը
և 1878 թ. յունվ. 1-ին ամբողջ Բելգիայում հաշւում էին միայն
13 կօօպերատիվ ընկերութիւններ, որոնք ճանաչւած էին իրաւաբանօրէն. սրանց թւումն էին վեց ժողովրդական բանկեր, որոնք
բաղկացած էին գլխաւորապէս արհեստաւորներից և մանր բուրժուազիայից: Յաջորդ երկու տարիների ընթացքում «Moniteur»-ը
յիշատակում է միայն ութը նոր ընկերութիւնների մասին, բայց

*) L. Bertrand. Historie de la cooperation en Belgique, avec préface d'E. Vandervelde. 2. Vol. Bruxelles Dechenne, 1903.

1880 թուից՝ «Vooruit»-ի հիմնարկութիւնից սկսած կօօպերատիվ հիմնարկութիւններն ընդհանրապէս և սօցիալիստականները մասնաւորապէս արագ և մեծ յաջողութիւններ են անում։

1873 թուից՝ այն է կօօպերատիվ ընկերութիւններին վերաբերող օրէնքի հրատարակութեան մօմենտից սկսած մինչև 1885 թիւը, հիմնուած է միայն 82 ընկերութիւն, այսինքն տարէնը միջին թւով 7 ընկերութիւն. 1885 թուից մինչև 1894 թ. հիմնուեցին 417 ընկերութիւններ. տարէն—45. վերջապէս վերջին հինգամեակի ընթացում հիմնեցին 1,294, այսինքն տարէնը 259 ընկերութիւն։

1903 թւի դեկտեմբերի 31-ին Բելգիայում հաշւում էին 2,001 կօօպերատիվ ընկերութիւն. նրանք հիմնուել էին զանազան նպատակներով՝ օր. սպառողներին ապրանք մատակարարելու, կօօպերատիվ արտադրութիւն կազմակերպելու, խնայողական և վարկի գանձարաններ հիմնելու, երկրագործական արդիւնաբերութեան հետ կապուած գործունէութիւն կազմակերպելու, բանւորական բնակարաններ շինելու, ապահովագրութիւն կազմակերպելու, ծերութեան դէպքում թոշակ տալու համար և այլն *)։

Ինչ վերաբերում է մասնաւորապէս սօցիալիստական կօօպերացիաներին, «Կօօպերատիվ ընկերութիւնների դաշնակցութիւնը», որ յարում է բանւորական կուսակցութեան, 1903 թ. դեկտ. 31-ին հաշւում էր 175 խումբ, համարեայ 85,000 անդամով **)։

Բոլոր արդիւնաբերական կենտրոններում, որտեղ բանւորական կուսակցութիւնը ձեռք է բերել որոշ նշանակութիւն, «Ժողովրդական Տունը», որ Գենտի «Vooruit»-ի օրինակով հիմնուած մի սօցիալիստական կօօպերացիա է, ամբողջ բանւորական կազմակերպութեան համար ծառայում է այսպէս ասած մի հիմնաքար և իբրև ընդհանուր կանոն, իր շինութիւնը սիրալիր կերպով թողնում է ուրիշ խմբերի տրամադրութեան։

Բոլոր սօցիալիստական կօօպերացիաները, մեծ կամ փոքր

*) Մանրամասնութիւնները տես La coope'ration en Belgique (1898—123) «Revue du travail» թերթում։

**) Fe'de'ration des socie'te's coope'ratives belges. Լուի Բերտրանը հաշւում է մօտաւորապէս երկու հարիւր հազար անդամ բոլոր բելգիական կօօպերացիաներում, հաշւելով և երկրագործականները (կաթնատնտեսից, և այլն)։

չափով, այն ընդհանուր և բնորոշ առանձնայատկութիւնն ունեն,
որ նրանք ոչ միայն որոշ նպատակներ ունեցող կազմակերպու-
թիւններ են, այլ և ծառայում են պրօպագանդայի և համապրօ-
լետարական կուի գործին, նրանք չեն սահմանափակւում միայն
նրանով, որ զանազան օգուտներ են խօստանում իրանց անդամնե-
րին. նրանք իրանց անդամներից պահանջում են նաև զոհողու-
թիւն։ Որքան էլ, շնորհիւ տարբեր շրջապատի պայմանների, տար-
բեր լինեն նրանց նպատակները, այնուամենայնիւ նրանց բոլոր
կանոնադրութիւնների մէջ կարելի է գտնել որոշ քանակու-
թեամբ բնորոշ որոշումներ, որ նրանց տալիս է միանգամայն ինք-
նուրոյն բնաւորութիւն։
Այս որոշումներից կարևորագոյները հետևեալներն են.
1) Ամեն մի ընկերութեան կանոնադրութիւն յիշեցնում է
կօօպերացիայի անդամներին, որ «ընկերութիւնը նախ և առաջ
քաղաքան սօցիալիստական խումբ է և որ մէկը գրւելով կօօպե-
րատիվի անդամ, դրանով նա ինքն ըստ ինքեան յարում է բանւո-
րական կուսակցութեան»։
2) Սօցիալիստական կօօպերացիա մտնելու համար, իբրև
մի ընդհանուր կանոն, բաւական է համապատասխանել երեք
պայմանի. ա) ընդունել բանւորական կուսակցութեան ծրագիրը.
բ) տալ անդամակցելու համար նշանակուած առաջին մինիմալ
վճարը (Ժօլիմօնում՝ 50 ս., Բրիւսսէլում 40 ս. և համարեա միւս
բոլոր վայրերում՝ 25.), գ) գրւել օրինակ, տասը ֆրանկ գնանոց
ակցիայի, որի գինը կօօպերացիայի ամեն մի անդամ ոչ թէ
վճարում է կանխիկ դրամով, այլ գոյանում է նրան հասնող ար-
դիւնքի մի մասը բռնելով, այնպէս որ նոյն իսկ ամենաղքատ
մարդիկ ոչինչ կամ համարեա ոչինչ չը ծախսելով հնարաւորու-
թիւն ունեն կօօպերացիայի անդամ դառնալու։
Արդիւնքը բաժանւում է հետևեալ երեք նպատակների վրայ.
ա) պարտք հանգցնելը և պահեստի գումար. բ) ուրիշ հաշւի փո-
խանցումը և երբեմն արդիւնքները կօօպերացիայի անդամներին
յատկացնելը, գ) բանւորական կուսակցութեան կազմակերպած
պրօպագանդը։
Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ խիստ անկայուն է
պրօպագանդին յատկացւող գումարը։ Կարելի է իբրև ընդհա-
նուր երևոյթ դիտել, որ մանր կօօպերատիվներից շատերը բա-

ւականանում են բանւորական կուսակցութեան վճարելով իր տարեկան վճարը՝ մարդուն 10 սանտիմ. ընդհակառակն խոշոր ընկերութիւնների մէջ սօցիալիստական ոգին սովորաբար անհամեմատ աւելի է զարգացած և նրանց մասին կարելի է միանգամայն պնդել, որ նրանք կթան կովեր են կուսակցութեան համար։

Սա պարզ կը լինի, եթէ ուսումնասիրենք այնպիսի տեխնիքական ընկերութիւնների կազմակերպութիւնների գործունէութիւն, ինչպէս օրինակ, Գենտի «Յառաջ»-ը (Vooruit), Ժոլիմոնի «Յառաջադիմութիւն»-ը և Բրիւսէլի «Ժողովրդական Տուն»-ը։

«Յ Ա Ռ Ա Ջ»

«Vooruit»-ի («Յառաջ»-ի) հիմնւելու թւականից՝ այն է 1885 թւից դեռ առաջ, 1873 թ. Գենտի մի քանի բանւորներ հիմնեցին կօօպերատիվ բուլօչնայեա «De Vrije Bakkers» (ազատ հացթուխներ) անունով։ Բայց այս ընկերութիւնը մի առանձին ծաւալ չը ստացաւ։ Նրան վիճակւեց մի շարք անյաջողութիւններ և մի գեղեցիկ րօպէ պարզւեց, որ նրա ղեկավարները տարբեր կարծիքներ ունեն այն ճանապարհի մասին, որով նրանք պէտք է ընթանան։ Ոմանք պնդում էին, որ ընկերութիւնը մնայ չէզօք, գոնէ առերևոյթ։ Միւսները, և նրանց թւում Anseele-ն ու Van Bevern-ը ցանկանում էին ընկերութիւնը դարձնել կռւի միջոց և չը ծածկել իրանց վրայ սօցիալիստական դրօշակը։

Վերջ ի վերջոյ աւելի երկչոտները կազմեցին մեծամասնութիւն և գրաւած դիրքը պահեցին իրանց ձեռքին։ Միւսները, որոնց յանդուգն խելացնորներ էին համարում, հիմնեցին նոր կօօպերացիա «Vooruit» («Յառաջ») անունով։

Սեցեսսիօնիստները *), կազմակերպելով այս նոր գործը, որին սպասում էր այնքան հուժկու զարգացում, հիմնական դրամագլուխ ունէին ընդամենը 67 ֆր. 50 ս. բայց ջուլհակների հին ընկերութիւն «Broedarlijke wevers maatschappij», որ գոյութիւն ունէր 1857 թւից սկսած, փոխարինաբար տւեց նրանց 2000 ֆր. և մի քանի շաբթից յետոյ Saint—Gilles փողոցի վրայ գտնւող փոքրիկ խանութի բակում սկսեցին հարիւր յիսուն մարդու համար սօցիալիստական հաց թխել։

*) Անջատականները։ Ծ. Թ.

Ներկայումս «Vooruit»-ը եօթը հազարից աւելի անդամ ունի։ Նրա շրջանառութիւնը շուտով երեք միլլիօն ֆրանկի կը հասնի. հացի արտադրութիւնը, որ մինչև հիմայ էլ կազմում է նրա գործունէութեան գլխաւոր ճիւղը, շաբաթական 90,000-ից մինչև 100,000 կիլօգրամ հաց է տալիս։

Հետևեալ աղիւսակը մի քանի բնորոշ թւերով ցոյց է տալիս այս ընկերակցութեան յաղթական գնացքի կարևորագոյն էտապները։

Տարին	Անդամների թիւը	Բուլօչնայի եկամուտը
1881	400	70,720 ֆր.
1885	1,750	227,560 »
1888	2,300	599,410 »
1891	4,608	777,840 »
1895	5,340	805,984 »
1900	6,921	1.091,612 »
1905	7,250	—

Բայց «Vooruit»-ի գործունէութիւնը միայն հաց թխելով չի սահմանափակւում։ Բելգիայի և ոչ մի կօօպերատիվ չունի այնքան բազմատեսակ և բարդ գործունէութիւն, որքան Գենտի այս նշանաւոր բանւորական կազմակերպութիւնը։

Բացի հացի արտադրութիւնից, որով զբաղւած են յիսուն հացթուխ և տասնհինգ շրջիկ հացավաճառ, «Vooruit»-ը ունի 12 բակալէյնի խանութ և 4 դեղատուն, և այս ձեռնարկութիւններից ամեն մէկը տարեկան 100,000 ֆր. շրջանառութիւն ունի. «Vooruit»-ը տարեկան ծախում է քառորդ միլլիօն ֆրանկից աւելի ածուխ. նա շինում և ծախում է կօշիկներ և շորեր, քաղաքի հէնց կենտրոններում, Palce de Vendredi-ի վրայ նա ունի ահագին մագազիններ, որտեղ բանւորները կարող են գնել իրանց անհրաժեշտ ամեն ինչ, կէս շռայլութեան իրերից սկսած մինչև ամենաանհրաժեշտ կենսական մթերքները։

Այս հսկայական առևտրական ու արդիւնաբերական ձեռնարկութիւնը, որ այնքան համեստութեամբ ձեռնարկեց գործունէութիւնը սրանից քառորդ դար առաջ,—այժմ էլ պահել է գործունէութեան այն բնաւորութիւնը, ինչ որ նա ունէր սկզբում։

Նա այժմ, ինչպէս և սկզբում, ըստ Անսէլէի պատկերաւոր արտայայտութեան, նախ և առաջ մի սօցիալիստական ամրոց է, որտեղից ռմբակոծում են բուրժուական հասարակութիւնը գետնախնձորի պարկերով և հացի երկու գրւանքանոց կտորներով։

«Vooruit»-ի արդիւնքը համարեա ամբողջապէս ծածկում է Ֆլանդրիայում մղւող պրոպօգանդի ծախքերը. «Vooruit»-ը օգնութեան է հասնում միւս պակաս բախտաւոր ձեռնարկութիւններին. նա փոխարինաբար անհրաժեշտ միջոցներ է տւել կօօպերացիաների մեծ մասին, որոնք իբրև նրա զաւակներ, առաջ են եկել Ֆլանդրիայի փոքրիկ վայրերում։ Մօտ ժամանակներս բանւորների ունեցած խնայողութեան նա աւելացրեց հարիւր հազար ֆրանկ և այս միջոցներով հիմնեց ջուլհակագործական կօօպերատիվ ֆաբրիկա, որ ղեկավարում է Անսէլէն, նա կառուցեց հոյակապ բնակարաններ, որոնք նա սիրով թողնում է Գենտի դաշնակցութեան զանազան խմբերի տրամադրութեան։

Որպէսզի գաղափար կազմենք այն ահագին ազդեցութեան մասին, որ չափազանց բազմաթիւ շրջանների վրայ անում է Vooruit-*ը, բաւական չէ ուսումնասիրել նրա կիսամեայ հաշւեկշիռները, որոնց վրայ ընկերութիւնը դնում է իր նախամտածւած համեստութեան կնիքը, դրա համար պէտք է կարդալ մանրազննին կերպով մշակած այն գլուխը, որ նւիրել է նրան Բերտրանը իր՝ Բելգիայի կօօպերացիաների պատմութեան մէջ, պէտք է տեսնել Գենտի բոլոր անկիւններում նրա հպարտ ցուցանակը* «Samenwerkende Maatschappiy Vooruit» *№ 1, 2, 3 և այլն։*

Քաղաքի ներքին ծայրում տեղաւորւած են հացի ֆաբրիկան, ածխի պահեստը. այնտեղ է և Van Biesaroek-*ի քանդակագործական-գեղարւեստական արհեստանոցը (ինչպէս տեսնում էք Գենտի սօցիալիստների համար ոչ մի մարդկային բան օտար չէ)։* Hôtel da Ville-*ի կողքին հանդիսա փողոցի վրայ, կաթոլիկական գրավաճառանոցի կողքին, որտեղ ծախւում են գլխաւորապէս սրբերի պատկերներ, գտնւում է սօցիալիստական գրավաճառանոցը,* «Vooruit»-*ի ժուրնալի խմբագրութեան գրասենեակը, կենտրօնական սօցիալիսաական ապարանը։ Բանւորների բնակած բոլոր գլխաւոր փողոցներում գտնւում են կօօպերատիվ դեղատներ և բակալէյնի մագազիններ, Անսէլէի տան շարքում գտնւում է*

կօօպերատիվ ջուլհակային ֆաբրիկան, որի գործւածքները արդէն անցեալ տարւանից վաճառքի հանւեցին։

Գենտի հրապարակ Place de Vendredi-*ի վրայ քաղաքի ամենագլխաւոր խանութների կողքին գտնւում է* Ons Huis *(«Մեր Տունը»), որ ծառայում է իբրև սօցիալիստական սինդիկատների ժողովատեղի. և,* last the not least, *Գենտի ամենաարիստօկրատ կվարտալում* rue de Baguettes *փողոցի վրայ կօօպերացիային պատկանում է մի ահագին շինութիւն, որ յատկացրւած է տօնախմբութիւնների համար։*

Այս շինութիւնը առաջ պատկանում էր մի զուտ բուրժուական ընկերութեան։ Երբ յիշեալ ընկերութիւնը տեսաւ, որ այս շինութրւնը իր համար չափազանց թանկ է, այն ժամանակ բոլորի համար անսպասելի կերպով Գենտի բանւորները գնեցին այդ շինութիւնը ուրիշի անունով և ինչպէս երևում է rue de Baguete *փողոցի վրայ գտնւած բոլոր բնակարանների գները անմիջապէս զգալի չափով ընկան։ Այն այգիներում, ուր առաջ յաճախում էին բուրժուազիայի ամենահարուստ խաւերին պատկանող տիկինները, այնտեղ այժմ ամեն կիրակի պարում են ֆաբրիկայում ծառայող աղջիկները։ Համերգներին Բրաբանսօնին, ազգային և արքայական երգերին փոխարինեց Ինտերնացիօնալը. եռագոյն դրօշակին փոխարինեց կարմիրը և սօցիալիստական խոշոր տօներին խաղաղ բուրժուաները վարագոյրի յետևը թագնւած, երկիւղով դիտում են, թէ ինչպէս խաղաղ փողոցով յեղափոխութեան կարապետների նման շարժւում են բանւորների սև շարքերը։*

«Յ ա ռ ա ջ ա դ ի մ ու թ ի ւ ն»

Եթէ «Vooruit»-*ը գլխաւորապէս Ֆլամանդրիայի շրջանի մանելու արդիւնաբերութեան բանւորների կօօպերացիա է, Ժօլեմօնի «Յառաջադիմութիւնը», որ գտնւում է լայնատարած արդիւնաբերական շրջանի հէնց կենտրօնում և մի քանի Լիէ տարածութիւն ունեցող շրջանին մատակարարում է հաց, զարմանալի կերպով լաւ է ներկայացնում Վալլօնիայի քարածխի և երկաթի արդիւնաբերութեան բանւորական կօօպերատիվ հիմնարկութիւնների տիպը։*

Կօօպերատիվ «Յառաջադիմութիւն» ընկերութիւնը, որ այժմ

հաշւում է 20,426 անդամ, հիմնւել է 1886 թ. յունիսի 21-ին
ինտերնացիոնալի մի վետերան Թէօֆիլ Մասսարի նախաձեռ-
նութեամբ և ունեցել է հիմնական դրամագլուխ՝ 3,000 ֆր.։
Նրա տունը, որտեղ մինչև այժմ էլ գտնւում է ընկերու-
թիւնը և որի ծայրայեղ պարզութիւնը մի հազւագիւտ հա-
կապատկեր է ներկայացնում ժողովրդական Տների հիմնած
կոոպերատիվների շքեղ արտաքինին,—այդ տունը առաջ պատ-
կանում էր «Արհեստների Միութեան» զանազան պրոֆեսիոնների
բանւորների սինդիկատներին։ Երբ վճռւեց հիմնել «Յառաջադի-
մութիւնը», այն ժամանակ դեռ սինդիկատներին մասնակցող
բանւորները վճռեցին այդ տունը նւիրաբերել նոր ընկերութեան։

Վերջինս սկզբնական ծախքերի համար դրամ չունէր, այս
պատճառով էլ ստիպւած եղան դիմելու կամաւորների օգնութեան
և տասնուհինգ օր շարունակ առանց որևէ վարձատրութիւն ստա-
նալու, յիսուն բանւոր աշխատում էին օրական մի քանի ժամ։
Մի քանի ժամանակից յետոյ հիմնւեցին այստեղ փուռը, մի բան,
որ համարեա նորութիւն էր այս տեղի համար, որտեղ տանտի-
կինները դեռ պահել էին տանը հաց թխելու սովորութիւնը։
1887 թ. դեկտ 31-ին «Յառաջադիմութիւն»-ը ունէր 2,499 ան-
դամ։ Այն ժամանակից սկսած կարելի է ասել ոչ մի րոպէ չի
դադարել ընկերութեան անդամների թւի և շրջանառութեան գու-
մարի աճումը։

Չը հաշւելով փուռը, որ տարեկան երեք միլլիոնից աւելի
հաց է արտադրում—ամեն մի հացը 2 կիլօգր. ծանրութեամբ
(1904 թ. արտադրել էր 3,820,057 հաց), «Յառաջադիմութիւն»-ը
ունի պատրաստի հագուստեղէնի երկու խանութ, մէկը Houdeng-
ում, միւսը La Louviere-ում, երեք կօշկեղէնի խանութ, մէկ կօլ-
բասի խանութ, երեք դեղատուն)։ որի գլխաւոր կլինիկն է (առե-
տուր անողը), 13,000 անդամ ունեցող փոխադարձ օգնութեան սօ-
ցիալիստական դաշնակցութիւնը», բացի սրանից ընկերութիւնն
ունի հինգ ժողովրդական տուն, որոնք իրանց շինութիւնը թող-
նում են բանւորական ընկերութիւնների տրամադրութեան (Ժօ-
լիմօնում, La Louvieer-ում Houdeng-ում Morlonnez-ում La Hestr-
ում) և վերջապէս ունի գարեջրի մի գործարան, որ հիմնւած է
1897 թ., և որի նշանակութիւնը տարէց տարի աւելանում է։

Ահա ինչպէս է նկարագրում այս նոր կոոպերատիվ արտադ-

րութեան առաջին քայլերը Լիւի Բերտրանը իր՝ «Բելգիայի կօօ-
պերացիաների պատմութեան մէջ»։

«1896 թ. «Յառաջդիմութիւնը» վճռեց հիմնել գարեջրի կօօ-
պերատիվ գործարան։ Կենտրոնում սպառւող գարեջուրը միշտ էլ
աննդարար և լաւ տեսակի չէր լինում։ Ուրեմն ինչու մի կօօ-
պերացիա, որ այդքան լաւ և այնքան էժան հաց էր պատրաս-
տում, չը պիտի կարողանար և հրաշալի գարեջուր պատրաստել։
Եթէ նոյն իսկ մի կողմ թողնենք այն խնայողութիւնը, որ կարե-
լի է անել, չի՞ կարող արդեօք գարեջրի վաճառատուն ինքնըս-
տինքեան մի լաւ միջոց դառնալ ալկօհօլականութեան դէմ մա-
քառելու համար։ Այդպէս էին դատում «Յառաջադիմութեան» ղե-
կավարները։ «Իսկոյն և եթ վճռւած էր հիմնել գարեջրի գործարան։
Բայց ո՞րտեղ հիմնել այս նոր կօօպերատիվ գործարանը։ Ժօլիմօ-
նում, հէնց փռան կողքին գտնւում էր մի կիսաւեր ջրաղաց, որ այն
ժամանակ ծախւում էր։ «Սա հէնց այն է ինչ որ հարկաւոր է
մեզ»—ասաց Թ. Մասսարը և մի համեստ գնով կօօպերատիվը
սեփականատէր դարձաւ այդ հին ջրաղացը։ Վերջինս վերանորո-
գեցին և վերածեցին ժամանակակից գարեջրագործարանի, առաջ-
նակարգ տեխնիքական յարմարութիւններով։

Որոնք են նոր ձեռնարկութեան գործունէութեան հետևանք-
ները։

Վեր նկարագրած ժամանակը Կենտրոնական շրջանի գարեջ-
րագործարանները գարեջրի տօնը ծախում էին 18 ֆրանկի։ Կօօ-
պերատիւը հէնց սկզբից նշանակեց 13 ֆր. 50 ս., այսինքն 4 ֆր.
50 ս. աւելի էժան»։

Չը նայելով որ այսքան իջեցրեց գարեջրի գինը, մի բան,
որ ի հարկէ առաջ բերեց գարեջուր պատրաստողների առելու-
թիւնը, կօօպերատիվ գարեջրագործարանը այնուամենայնիւ կարճ
ժամանակում դարձաւ առաջին եկամուտների աղբիւր և ներկա-
յումս նա, թէև փռան համեմատութեամբ հինգ անգամ պակաս
շրջանառութիւն ունի, բայց բերում է հացավաճառութեան ար-
դիւնքի կէսը։

Օրինակ 1904 թւին յունւարի 3-ից մինչև յուլիսի 3-ը գա-
րեջրագործարանը ծախել է 171,136 ֆր. գարեջուր և արդիւնք
44,001 ֆր., մինչդեռ փուռը ծախել է 803,038 ֆր. հաց, իսկ ար-
դիւնք ունեցել է 91,060 ֆր.։

Նոյն ժամանակամիջոցում (յունուարի 3-ից—յուլ. 3) ամբողջ ձեռնարկութեան զուտ արդիւնքը հասնում էր 129,370 ֆր. տարեկան սա կանի 250,000 ֆր. զուտ արդիւնք 2,000,000 ֆրանկից աւելի շրջանառութիւն ունեցող մի ձեռնարկութեան համար։

Չը պէտք է մոռանալ և այն, որ կոօպերատիվում արդիւնքի թիւը ինքն ըստ ինքեան շատ մեծ արժէք չունի, որովհետև նրան մեծացնելու կամ փոքրացնելու համար բաւական է որ մեծացնենք կամ փոքրացնենք միւս հաշիւներին փոխադրւած գումարները։

Մեզ հետաքրքրող տեսակէտից ամենից կարևորն է, որոշել թէ ինչպէս են գործադրւում այդ արդիւնքները, ցոյց տալ այն բաժինը, որ գործադրւում է կուսակցական կուի կարիքների համար և այն մասը՝ որ գործադրւում է հանրօգուտ հիմնարկութիւնների վրայ։

Այսպէս ահա, եթէ վերցնենք վերջին կիսամեակի հաշւետւութիւնը (1904 թւի յունւար—յուլիսը), կը տեսնենք, որ ստացւած արդիւնքը բաշխւում է այսպէս.

Փոխադրութիւն միւս հաշիւներին .	74,300 ֆր.
Թոշակարկղ, փոխադարձ օգնութիւն .	26,000 »
Պարտքեր հանգցնելը, մեքենաների մաշւելու	18,522 ֆ. 80 ս.
Արդիւնք, որ պիտի բաժանւի, թոշակարկղի և փոխադարձ օգնութեան գանձարանների ծառայողների անունով տրւելիք վճարները	2,785 ֆ. 25 ս.
Պրօպագանդը, յայտարարութիւնները և այլն	7,762 ֆ. 04 ս.
	129,370 ֆ. 09 ս.

Մենք տեսնում ենք, որ յիշեալ կիսամեակի ընթացքում ծառայողների և կոօպերատիվի անդամների անունով թոշակատու գանձարաններին տւած վճարներն ու նրանց օժանդակութիւնը կլանում էին համարեա երեսուն հազար ֆրանկ, այն ժամանակ, երբ պրօպագանդի, րէկլամի և այլ ծախքերը կազմում էին համեմատաբար փոքրիկ գումար՝ 7,762 ֆր., որ տարեկան անում է 15,000 ֆր. ճիշտ է այս գումարը միակ օգնութիւնը չէ, որ կոօպերատիվը անում է սօցիալիստական պրօպագանդին. ուշադրութեամբ ուսումնասիրելով հաշւետւութիւնը, այնտեղ մենք կը գտնենք 52,581 ֆրանկի մի գումար, որի խոշոր մասը կազմում են սօցիալիստական „Le Peuple“ («Ժողովուրդ») թերթի ակցիա-

ները (բաժնետոմսերը). պէտք է հաշւի առնել և այն ծախքերը, որ ընկերութիւն անում է վերաշինելու և կարգի պահելու իր բնակարանը, որ տալիս է բանւորական կուսակցութեան զանազան խմբերի ժողովումների համար։

Բայց «Յառաջադիմութեան» ղեկավարները սօցիալիստներ են և նրանք անկասկած կուսակցութեան աւելի մեծ օգնութիւն կարող էին անել, եթէ որ նրանց առաջ ուղղակի կանգնած չը լինէր թշնամին, յանձին «Bon Grain» կաթօլիքական ընկերութեան, որ ստեղծւած է մասնաւորապէս նրա գործի զարգացումը դանդաղեցնելու համար։

Իր ղեկավարներին որքան կարելի է մեծ ազատութիւն տալու նպատակով այդ ընկերութիւնը, որ կազմւեց 1890 թ. ընդունեց ակցիոներական ընկերութեան ձև, բայց հիմնւած լինելով նախ և առաջ սօցիալիզմի դէմ մաքառելու նպատակով, նա իր գնողներին տալիս է նոյն նիւթական օգուտները, ինչ օգուտներ տալիս են և կոօպերատիվ ընկերութիւնները։

Որքան կարելի է դատել, նրա հացի արտադրութիւնը նոյնքան, բայց գուցէ, և աւելի մեծ է, քան «Յառաջադիմութեան» արտադրութիւնը. բայց այն ժամանակ, երբ վերջինս իր անդամներին փնտռում և գտնում է միայն բանւորական դասակարգի մէջ, «Bon Grain»-ի սպառողներն ընդհակառակն պատկանում են բոլոր դասակարգերին, նրանց թւումն են և բանւորները, որոնք կամ գործատիրոջ ճնշման ազդեցութեան տակ, կամ որովհետև իրանք պահել են հակասօցիալիստական աշխարհայեացք, առնում են մթերքներ այդ կաթօլիք ընկերութիւնից։

Կենտրօնական շրջանի հացի այս երկու ֆաբրիկաների միջև մի քանի անգամ բռնկւել են կատաղի ընդհարումներ, որոնք նոյն իսկ հասել են դատարանի և 1902 թ. կար մի մօմենտ, երբ հիմք կար վախենալու, թէ խախտւած է «Յառաջադիմութեան» բարեկեցութիւնը և անւանարկւած է նրա վարկը շնորհիւ այն ստի, որ տարածում էր յետադէմ մամուլը և այն իրաւաբանական բնաւորութիւն ունեցող դաւադրութիւնների, որ կարող էին առաջ գալ նրա կանօնադրութեան կարծեցեալ ապօրինութիւնների պատճառով։

Բայց այս առիթով սկսւած դատարանական քննութիւնը բարեյաջող ելք ունեցաւ կոօպերատիվի համար, իսկ միւս կողմից

բուրժուական լրագիրների սկսած պայքարը ունեցաւ միանգամայն հակառակ հետեւանքներ այն բոլորի, ինչ որ սպասում էին այդ պայքարի նախաձեռնողները։

Կենտրոնական շրջանի սօցիալիստ բանւորները, որոնք մինչև յուսահատութիւնն էին հասել շնորհիւ այս յարձակումների, իրանց բոլոր ոյժերը լարեցին որքան կարելի է լայն չափերով զարգացնելու պրօպօգանդը և—զարմանալի բան—կօօպերատիվի անդամների թիւը այս ճգնաժամի ընթացքում աւելանում էր անհամեմատ աւելի ուժեղ կերպով, քան առաջ, այնպէս որ նոյն իսկ մեր հիմնարկութիւնների բարեկեցութեան տեսակէտից աւելի նպաստաւոր է կռւի, քան անշարժութեան, շրջանը։

«Ժողովրդական Տունը»

Չը նայելով պահպանողականների ստեղծած հացի միւս փռների կատաղի մրցման—Բրիւսէլի «Ժողովրդական Տունը» երկրի ամենամեծ փուռն է։

Նրա առաջին քայլերը—ինչպէս և «Vooruit»-ի և «Le Progres»-ի չափազանց համեստ էին։ 1881 թւի օգոստոսին Բրիւսէլի մի խումբ բանւորներ,—մեծ մասամբ սօցիալիստ—վճռեցին Գենտի բանւորների նման հիմնել «բանւորական փուռն»։ Փայատէր գրւեցին 80 մարդ, որոնք միասին հաւաքեցին 600 ֆր.։ Մի փոքրիկ խանութի բակում վարձեցին 30 ֆր. ամսավճարով վարձեցին մի հացթուխ վառարան. մի Ջրաղացպան փոխարինաբար տւեց 50 պարկ ալիւր։ Վարձեցին երկու հացթուխ բանւորներ օրական 3 ֆր. 50 ս. վարձադնով, գնեցին սայլակ և մի շուն—ինչպէս ընդունւած է Բրիւսէլում—ընկերութեան անդամների տները հաց տանելու համար։

Կէս տարուց յետոյ նրանք թխում էին 680 կիլօգր. հաց, որ բաւարարութիւն էր տալիս հարիւր մարդու սպառողական միջոցներին։

«Նոր ձեռնարկութիւնը—ասում է Լիւի Բերտրան,—«չափազանց նշանաւոր արդիւնքներ էր տալիս, որովհետև հացթուխները ամեն մի հացից իրանց օգտին վերցնում էին 8—12 սանտիմ։ Սա մեծ խնայողութիւն էր բանւորական ընտանիքի համար։ Կանայք սկսեցին սրա մասին խօսել իրանց հարևանուհիների հետ և այսպիսով անդամների թիւը փոքր առ փոքր 80-ից բարձրացաւ մինչև 250։ Չորս տարուց յետոյ ընկերութիւնը ունէր արդէն 400 անդամ։ Ստիպւած եղան թողնել հին շինութիւնը և կառուցանել երկու նոր վառարան. 1886 թ. բանւորական փուռը ունէր արդէն 600 անդամ»...

Ահա այդ ժամանակ նրա ղեկավարները դառնալով բանւորական կուսակցութեան անդամներ, 5,000 ֆր. տարեկան վճարելով վարձեցին մի մեծ շինութիւն, որ առաջ ծառայում էր իբրև սինագօգա և թողեցին այդ շինութիւնը բանւորական և սօցիալիստական ընկերութիւնների տրամադրութեան։ Այն ժամանակից սկսած թէ այդ շինութիւնը և թէ հէնց ինքը կօօպերատիվ ընկերութիւնը սկսեցին անւանել «Ժողովրդական Տուն»։

Այս նոր անւան տակ կօօպերատիվը սկսեց զարմանալի արագ կերպով յառաջադիմել։ Անհրաժեշտ եղաւ քաղաքի վերին և ներքին մասերում մինը միւսը յետևից հիմնել հացի երկու ֆաբրիկա։ Հաց թխելուն աւելացրին ածխի առևտուրը, մսի և բակալէյնի ապրանքների, պատրաստի հագուստեղէնի, և մանուֆակտուրային ապրանքների վաճառումը։ Անդամների թիւը, որ 1886 թ. հաւասար է 660-ի, 1904 բարձրացաւ համարեա մինչև քսան հազար, որ հաշւելով ամեն մի ընտանիքի վրայ միջին թւով հինգ հոգի, կանի հարիւր հազար սպառող *)։

1904 թւի առաջին կիսամեակի ընթացքում «Ժողովրդական Տան» երկու ֆաբրիկաներում պատրաստել էին 5,472,048 հաց, սա հաւասար է տարեկան տաս և մէկ միլլիօն կիլօգրամ հացի արտադրութեան.

Միւս ձեռնարկութիւնները, որոնք կազմակերպւած են իբրև կօօպերատիվներ,—բակալէյնի և մանուֆակտուրային խանութներ, մսավաճառութիւնն ու ածխավաճառութիւնը, ինչպէս և ճաշարանները—թէև չունեն նոյն նշանակութիւնը, բայց գտնւում են փայլուն վիճակի մէջ և նպաստում են ընդհանուր արդիւքի աճման։ Օրինակ վերջին կիսամեակում, երբ ալիւրի գինը բարձր էր, և հետևաբար հետևանքները այնքան էլ փայլուն չէին,

*) Ինչպէս և Ժօլեմօնի «Յառաջադիմութեան» վերաբերմամբ մենք այստեղ բերում ենք այն թւերը, որ տալիս են վերջին կիսամեակի հաշիւները, բայց ի նկատի ունենալով, որ տարեկան սպառւում է մօտ 11 միլլ. հաց, պէտք է ենթադրել, որ իսկական անդամների թիւը 15—16 հազարից չի աւելանում։

ինչպէս լինում է սովորաբար, այդ արդիւնքները հասնում էին 261,945 ֆր.։

Ահա 1903 և 1904 թ. թ. համեմատական թւերը.

	I կիսամեակ 1903	I կիսամեակ 1904
Զուտ արդիւնք, գոյացած զանազան ապրանքների վաճառումից	26.165,63	28.230,18
Հացի վաճառումից գոյացած զուտ արդիւնք	225.383,29	187.276,14
Զուտ արդ. գոյացած ածխավաճառումից	13.044,19	15.569,02
Զուտ արդիւնք պատրաստի հագուստեղէնի և նոր ձևի գործւածքներից	24.174,35	19,780,94
Զուտ արդ. «Ժողովրդ. Տնից» (սրճարան)	12,153,13	12,151,77
Զուտ արդիւնք Molenbeeck-ի «Ժող. Տնից»	19,64	305,00
Զուտ արդիւնք մսավաճառութիւնից	,,	2,628,69
	300.939,63	265,941,47
Մսավաճառութեան վնասը	931,44	— —
Ընդամենը	300.008,19	265.941,74

Ընդհանրապէս ասած վերջին երեք-չորս տարիների կիսամեակային արդիւնքը տարածւում է երկու հարիւր յիսուն հազարից մինչև երեք հարիւր հազար ֆրանկ. տարեկան սա կանի հինգից մինչև վեց հազար ֆրանկ։

Ինչ վերաբերում է այս արդիւնքի բաշխման, 1904 թւի սեպտեմբերի 18-ին ընդհանուր ժողովին ներկայացրած հաշւետւութիւնից ստանում ենք հետևեալ տեղեկութիւնները։

	I կիսամեակ 1903	I կիսամեակ 1904
Պարտքերի հանգցումը . . .	—	—
Ժողովրդական Տուն, ածխի խանութ և այլն	55.400,00	46.500,00
Բժշկ. օգնութիւն, ձրի դեղորայք ընտ. ունեցող անդամներին . . .	29.759,97	31,591,52
Հաց, որ տրւում է կօօպերացիայի հիւ. անդ.	7.914,00	6.671,25
Ընդհ. պրոպագանդ, նպաստ և օգնութիւն. որ տր. չքաւ. խմբերին և առանձին անդ.	17.398,48	10,994,65
$2^1/_2{}^0/_0$, որ գնում է յօգուտ ծառայողների	7.500,21	6,648,57
Գումարը, որ բաշխւում է բուլօչ. գնող. միջև	159.147,96	135,660,75

	I կիսամեակ 1903	I կիսամեակ 1904
Գրւած ակցիաների վճարները . .	387,57	2,37500
$6^0/_0$, որ պէտք է բաշխւի բակալէյնի և մսի խանութների գնողների միջև . .	15.000,00	17.000,00
$5^0/_0$, որ պիտի բաշխւի պատ. հագուստեղէնի և նորաձև գործւածք. գնողների միջև	7.500,00	6.500,00
$2^0/_0$, որ պիտի բաշխւի մխ գնողների միջև	—	2.000,00
Ընդամենը ֆր.	300.008,19	265.941,74

Ինչպէս տեսնում ենք, չը նայելով մրցող ընկերութիւնների գործ դրած ճնշման, անմիջապէս պրոպօգանդներին յատկացրւող գումարը ճգնաժամի շրջանում 20,000 ֆրանկից աւելի է, իսկ երբ գործերը լաւ են գնում, 30,000-ից էլ աւելի։ Բացի դրանից պէտք է ի նկատի ունենալ և այն ընդհանուր պրոպագանդը, որ պարտաւոր են անել բոլոր ծառայողները, և ձրի բնակարանները, որ թողնւում են կուսակցութեան տրամադրութեան։

Բրիւսէլի կօօպերացիան բացի քան զանազան ճիւղերից, երկու ֆաբրիկայից և սեփական ածխախանութից, ներկայումս ունի հինգ Ժողովրդական Տուն, որոնցից երկուսը գտնւում են Բրիւսէլի արւարձաններում և (Saint Gills-ում և Molenbeeck-ում), որտեղ կօօպերատիվին պատկանում նոյնպէս մի կաթնարան, և վերջապէս հէնց Բրիւսէլում ունի կենտրոնական շինութիւն։

Նոր Ժողովրդական Տունը, որ իսկապէս մի պալատ է և բացւած է 1899 թւին, արժէ մի միլլիօն երկու հարիւր հազար ֆրանկ։

Այս գումարը ձեռք բերելու համար անհրաժեշտ էր եօթը հարիւր հազար ֆրանկի փոխառութիւն անել. սրա համար սկըզբում վճռել էին դիմել մի քանի բանկիրներին և իբրև ապահովութիւն գրաւական առաջարկել երկու փուռն ևս։

Սակայն այս առաջարկութիւնը մերժւեց (թէև դա կապւած էր կօօպերատիվի համար որոշ դրամական կորստի հետ). դրամատէրերը ճիշտ է, առաջարկւող գրաւականը համարում էին բաւարար ապահովութիւն, բայց բոլորովին տրամադրութիւն չունէին նպաստելու յեղափոխական ձեռնարկին։ Ահա այսպիսի պայմաններում, երբ համարեա այլ ևս ոչ մի տեղից յոյս չը կար,

անդամներից մէկը փորձեց դիմել մի խնայողական գանձարանին,
որ թէև օգտւում էր կառավարչական ապահովագրութեամբ, բայց
համաձայն իր կանոնադրութեան միանգամայն ւտօնօմ էր։

Պատահմամբ գլխաւոր վերատեսուչը հետաքրքրւեց այդ ա-
ռաջարկութեամբ։ Նա կարողացաւ համոզել և կարգադրիչ խոր-
հրդի մի քանի անդամներին։ Միւս անդամները—արձակուրդի
պատճառով բացակայ էին, և խնդիրը վճռւեց։ Բայց ապահովու-
թիւնը ուժեղացնելու և ապագայում ամեն տեսակ յարձակումներից
խուսափելու համար, այս փոխառութիւնը տւեցին ոչ թէ անմի-
ջապէս Ժողովրդական Տան, այլ բանւորական կուսակցութեան
12 անդամներից բաղկացած մի խմբակին, որոնք ներկայացրին
նաև անձամբ իրանց անունից ապահովութիւն։

Ներկայումս այս փոխառութեան մեծ մասը արդէն յետ է
վճարւած և Ժողովրդական Տան կարգադրիչ խորհուրդը վերջին
ընդհանուր ժողովին տւած իր զեկուցման մէջ միանգամայն ի-
րաւունք ունէր հպարտութեամբ ասելու հետևեալը.

«1887 թւից սկսած մինչև 1903 թւի դեկտեմբերի 31-ը ու-
նեցած շրջանառութիւնից երևում է, որ այդքան ժամանակամի-
ջոցում Ժողովրդական Տունը բէալիզացիայի է ենթարկել 4,700,000
ֆր. արդիւնք և բաժանել է—100,000,000 հաց 2,500,000 ֆրան-
կից աւելի արժողութեամբ։

Այս արդիւնքից նա փոխադրել է մանուֆակտուրայի և բա-
կալէյնի խանութների հաշւին 200,000 ֆրանկ։

Կօօպերացիայի հիւանդ անդամներին տւել են 100,000 ֆր.։

Պրօպագանդին, բանւորների կազմակերպման և այլն տւել
368,000 ֆր.։

Ծառայողներին իբրև արդիւնքի նրանց հասնող բաժին տը-
ւել է 113,000 ֆրանկ։

Եօթը տարւայ ընթացքում կօօպերատիվը ծախսել է բժշկա-
կան և դեղօրայքով օգնելու գործին 266,000 ֆրարկ.

1889 թւին Ժողովրդակար Տան ակտիվը հասնում էր 100,000
ֆրանկ։

Ներկայումս նա կազմում է 290,000 ֆրանկ։

1887 թւին դրամագլուխը կազմում էր 623 ֆր.։ Ներկայումս
նա կազմում է 250,000 ֆրանկ։

1887 թւին տեխնիքական յարմարութիւնները արժէին
30,000 ֆրանկ։

Նրանք ներկայումս արժեն—2,200,000 ֆրանկ։

Այս հետևանքները անկասկած ընդունակ են շահագրգռել։

Սակայն մենք դաւաճանած կը լինենք օբեկտիվ լինելու
պարտականութեան, եթէ այս բոլորին աւելացնենք և այն, որ
ահա մէկ թէ երկու տարի է ինչ «Ժողովրդական Տան» զարգա-
ցումը կարծէք թէ կանգ է առել։ Անդամների քանակութիւնը
համարեա չի աճում։

Հացի սպառումը, որ 1902 թւի մայիսին կազմում էր շա-
բաթական 230,000 կիլօգրամ, մի փոքր կրճատւել է։ Նոր անդամ-
ներ գրաւելուն խանգարում են վերջին ժամանակները առաջ ե-
կած կօօպերատիվ—կամ իրանք իրանց կօօպերատիվ անւանող,
ինչպէս օրինակ «Bon Grain»—ընկերութիւնները։

Բայց մեր կարծիքով սրա համար մենք չը պէտք է ցաւենք,
որովհետև սօցիալիստական կօօպերացիաները երբեք ոչ մի շահ
չունեին իրանց կազմակերպութիւնն ընդունելու այնպիսի մարդ-
կանց որոնք մտնում են այնտեղ միայն նիւթական արդիւնքեր
ստանալու համար։ Որոշ տեսակէտից մենք պէտք է նոյն իսկ ու-
րախանանք, որ մեզ խանգարում են «Ժողովրդական Տան» զար-
գացման հակառակորդները, որովհետև լարւող կռիւը կստիպի
Բրիւսէլի կօօպերատօրներին աւելի ուժեղ կերպով շեշտելու
իրանց պրօպօգանդի սօցիալիստական բնաւորութիւնը և այժմ
աւելի քան երբ և իցէ դիմել պրօլետարիատի անձնազոհութեան
և յեղափոխական զգացմունքին։

Բանւորական կուսակցութեան զաւառական դաշնակցութիւն-
ներին պատկանող կօօպերատիվ կազմակերպութիւններից շատերը
նոյնպէս կենտրօնացած են, ինչպէս և Գենտում, Բրիւսէլում և
և կենտրօնական շրջանում. սովորաբար զաւառի գլխաւոր քաղա-
քում գտնւում է մի ընկերութիւն, որ տարածում է իր գործու-
նէութիւնը շրջակայ բոլոր վայրերի, շատ անգամ նոյն իսկ մի
քանի լիէ տարածութեան վրայ։

Այս բոլորը վերաբերում է Անտվերպենի «Werker» (բանւոր),
Louvain-ի «Prolétarie» («Պրօլետար»), Nivelles-ի «Persévérance»
(«Յամառութիւն»), Dinauv-ի «Maison du Peuple» («Ժողովրդա-
կան Տուն»), Վերվիէի «Buche ouvriere“ («բանւորական փեթակ) և

Վարեննի «Justice» («Արդարութիւն») կոօպերացիաներին։ Վերջին կոօպերացիան ներկայանում է մի շատ հետաքրքիր օրինակ կէս արդիւնաբերական, կէս երկրագործական ընկերակցութեան, որ վարում է որոշ չափով գիւղատնտեսական գործունէութիւն և ծառայում է մեծ մասամբ գիւղացի գնողներին։

Բայց այս կենտրոնացած կոօպերացիաների հետ միասին մենք տեսնում ենք և տեղական կոօպերատիվներ իրանց սահմանափակ գործունէութեամբ մի քանի շրջաններում և մանաւանդ Լիէժի, Մօնսի և Շարլըրուայի քարածխի աւազաններում։

Լիէժի շրջանում «La Populaire» կոօպերացիան, որ գտնւում է գլխաւոր քաղաքում, ունի երեքից կամ չորս հազարից ոչ աւելի անդամ, բայց և այս շրջանի ամեն մի համայնքում կարելի է գտնել սօցիալիստական կոօպերատիվներ, որոնք ոչնչով կամ համարեա ոչնչով պակաս չեն կենտրոնական ընկերութիւնից։

Շատ նման դրութիւն է տիրում և Շարլըրուայում։ Բայց վերջին տարիների ընթացքում նկատելի է կենտրոնացման ձգտումը և այժմ «La Concord» («Համաձայնութիւն») ընկերակցութիւնը, որ ունի երկու բուլօչնայա, մէկը Ռու քաղաքում, միւսը Շարլըրուայում, այնքան խոշոր առևտուր է անում որ շուտով կը կարօղանայ մրցել Ժօլեմօնի «Յառաջադիմութեան» հետ։

Ահա այն աղիւսակը, որ նա հրատարակել է իր վերջին հաշւետւութեան մէջ։

1) Անդամների թիւը	11,308	
2) Տարեկան եկամուտը . . .	1,522,601,05	ֆր.
3) Տարեկան արդիւնաբերութիւնը .	2,690,880	հաց
4) Տարեկան արդիւնք	156,193,09	ֆր.
5) Տարեկ արդ. որ բաշխւած է անդամն. միջև	52,106,19	ֆր.
6) Նպաստներ	31,327,16	ֆր.
7) Պահեստի գումար	82,781,73	ֆր.

Շնորհիւ գլխաւորապէս «Համաձայնութեան» աջակցութեան Շարլըրուայի սօցիալիստական ֆեդերացիան իր փոխադարձ օգնութեան ընկերութիւնների, իր սինդիկատների և քաղաքական խմբերի համար ունի երեք մշտական քարտուղարներ։

Մօնսի (Բօրինաժ) գաւառում սօցիալիստական կոօպերատիվները աւելի բազմամարդ են և աւելի տեղական բնաւորութիւն ունեն քան երկրի ուրիշ որ և է մասում։ Այս շրջանում տիրապե-

տող նեղ տեղային ոգին մինչև այժմ էլ հանդիսանում է իբրև անխորտակելի մի արգելք ամեն մի գիւղում գոյութիւն ունեցող ընկերութիւնների կենտրոնական կամ գոնէ դաշնակցութեան համար։ Այս ընկերութիւններից շատերի գործերը չափազանց լաւ են գնում, բայց նրանցից մի քանիսներն էլ զբաղւած են իրանց առևտրի զարգացման, քան թէ բանւորական կուսակցութեանը զգալի միջոցներ հայթհայթելու գործով։ Բայց անարդարութիւն կլինէր, եթէ չը խոստովանէինք, որ նկատւում է իրերի այսպիսի դրութիւնը փոխելու ձգտում և որ բանւորական կուսակցութեան սկզբունքներն ու տակտիկան քանի գնում այնքան աւելի ու աւելի են նւաճում Բօրինաժի կոօպերացիաներին։

Անկախ այն կապերից, որ գոյութիւն ունեն կոօպերատիվների և նրանց միացնող շրջանային դաշնակցութիւնների միջև, համարեա բոլոր ընկերութիւնները յարում են «Բելգիական կոօպերատիվ հիմնարկութիւնների սօցիալիստական դաշնակցութեան», որ ստեղծւել է 1900 թւին հակով ապրանքներ գնելու գործը կազմակերպելու նպատակով։

Ինչպէս տեսանք Բելգիական «Wholesale»-ից առևտուր անող բոլոր ընկերութիւնների թիւը 1903 թ. դեկտեմբերի 31-ին 175 էր, որոնք ունէին 80,000-ից աւելի անդամ։ Բայց մինչև հիմայ ևս դաշնակցութեան շրջանառութիւնը չի հասել այն չափերի, ինչ որ յոյս ունէին նրա հեղինակները։ 1903 թւի շրջանառութեան ընդհանուր թիւը հաւասար էր 1.485,572 ֆրանկի, այսինքն նախընթաց տարւայ համեմատութեամբ յաւելումը արտայայտւել 200,000 ֆրանկով։

Հաւատարիմ մնալով իրանց տեղական ինքնուրոյնութեան, որի գոյութիւնը կազմում է բելգիական բնաւորութեան ոյժը, բայց որի չափազանցութիւնը—կազմում է նրա թոյլ կողմը—խոշոր կոօպերացիաներից շատերը դիմում են դաշնակցութեան համեմատաբար փոքր նշանակութիւն ունեցող ապրանքների համար, իսկ խոշոր առևտուրը գերադասում են անել կանխօրէն։ Միւս կողմից դաշնակցութիւնը չըկարողացաւ գնողների որոշ շրջանում բաւարարաչափ զարգացնել իր գործունէութիւնը, որովհետև նա չէր կարող, կամ չէր ցանկանում—մի քանի առևտրականների նման—երեք ամսւայ կամ աւելի ժամանակով ապառիկ ապրանք բաց թողնել։

Բայց պէտք է նկատել, որ ապագայի վերաբերմամբ նկատւում են աւելի լաւ հեռանկարներ և եթէ հին ընկերութիւններից շատերը միայն ձևականօրէն են միացել, նորերից շատերը մտնում են դաշնակցութեան շարքերը։

Դաշնակցութիւնը 1902 թւից սկսած Բրիւսսէլում ունի կենտրոնական խանութ, իսկ Անտվերպենում՝ պահեստ։ 1903 թւին նա հիմնեց սուրճ չորացնելու մի փոքրիկ ֆաբրիկա։ Նա այսուհետև մտադիր է կազմակերպել մանանեխի պատրաստելը, մի քանի գաղութային ապրանքների աղալը, դուցէ և շօկօլադի ֆաբրիկա։ Բացի դրանից նա աշխատում է օժանդակել և արտադրող ընկերութիւններին, վաճառում է նրանց գործւածքները և և ժողովրդականացնում է նրանց առանձին յայտարարութիւնների միջոցով և սպառողների տները յաճախելով։ Բայց ընդհանրապէս խօսելով—և այս տեսակէտից Բելգիան ևս բացառութիւն չի կազմում—արտադրողական ընկերութիւնները, որոնք մեծ մասամբ ոչ այլ ինչ են, եթէ ոչ գործադուլների արհեստանոցներ, որոնք ստեղծւում են միայն նրա համար, որպէսզի աշխատանք տան բանւորական միութիւնների գործադուլ անդամներին—այդ արտադրողական ընկերութիւնները բարեյաջող հետևանքների շատ քիչ են հասնում, դուցէ այն պատճառով, որ նրանք չունեն բաւարարաչափ մեծ դրամագլուխ, կամ դուցէ որովհետև չըկայ շուկայ, կամ դուցէ վերջապէս այն պատճառով, որ նրանց ղեկավարները չունեն անհրաժեշտ հմտութիւն։

Բայց այս ընդհանուր կանոնից կան և շատ կարևոր բացառութիւններ։ Ցոյց տանք նախ և առաջ Գենտում գտնւող կօօպերատիվ ֆաբրիկան, որ գործում է անցեալ տարւանից, Huy-ից ոչ հեռու գտնւող Vierset Barse-ի կօօպերատիվ քարհատութեան գործարանը, որ ունի մօտ 60 բանւոր և Գենտի կենտրոնական Սօցիալիստական տպարանը, որ կազմում է բանւորական կուսակցութեան ամենալաւ հիմնարկութիւններից մէկը։ Այս տպարանը ունի 80 փայատէր, որոնք տւել են 20,000 ֆր. 2%-ից աւելի չը ստանալու պայմանով։ Մնացած արդիւնքը ծախսւում է սօցիալիստական պրօպօգանդի (50%), պարտքերը հանգցնելու (20%), պահեստի գումար կազմելու (20%) և ծառայողների համար թոշակարկղ կազմելու (10%) նպատակներին։

Կենտրոնական տպարանը այս արդիւնքներից Գենտի դաշ-

նակցութեան տալիս է ընտրողական բիւրօ հիմնելու համար 3,000 ֆր. տարեկան. Նա ծածկում է «Vooruit («Յառաջ»-ի) դեֆիցիտը (վնասը), որ 1904 թւին կազմում էր 5,100 ֆր. տալիս է 500 ֆ. նպաստ «Toekomst» շաբաթաթերթին, որ հրատարակւում է ֆլանդրիայի գիւղական ազգաբնակութեան համար և 500 ֆր. Գենտում գոյութիւն ունեցող բանւորական ակումբներին։

Ինչպէս տեսնում ենք բելգիական բանւորական կուսակցութեան բոլոր կօօպերատիվ հիմնարկութիւններին յատուկ է մի և նոյն սօցիալիստական ոգին, որ տալիս է նրանց ինքնուրոյն բնաւորութիւն և այնպիսի սօցիալիական նշանակութիւն, որ չունեն միւս երկրների նման ընկերակցութիւնները, որոնք հետևում են բացառապէս տնտեսական նպատակների։

Մենք ի հարկէ երբեք չենք էլ մտածում ժխտել այն ծառայութիւնները, որ այդ տեսակէտից կօօպերացիան կարող է մատուցել պրօլետարիատին։ Քսան և հինգ տարւայ ընթացքում, Բելգիայում նրանց ունեցած գործունէութեան շրջանում, սօցիալիստական և ոչ սօցիալիստական կօօպերացիաները ուժեղ կերպով նպաստեցին առաջին անհրաժեշտութեան իրերի գները իջեցնելուն։ Եթէ ի նկատի ունենանք զանազան հանրօգուտ նպատակների վրայ նրանց արած ծախքերը, այն ժամանակ միլլիօններով պէտք է հաշւել այն գումարները, որ նրանք խնայել են իրանց անդամների համար։ Նրանք բանւորական դասակարգի համար ստեղծեցին ծառայողների մի շրջան, որոնց ընդունակութիւնները գործադրութիւն են գտնում և կօօպերատիվներից դուրս։ Բայց այս բոլոր օգուտները ինքն ըստ ինքեան չէին արդարացնիլ այն ջանքերը, որ անհրաժեշտ են կօօպերացիաներ ստեղծելու համար, եթէ վերջիններս մի և նոյն ժամանակ չը ծառայէին սօցիալիստական պրօլէտարիատի համար և պրօպօգանդի ու կռւի իբրև անփոխարինելի մի միջոց։

Նրանց շնորհիւ բանւորական դասակարգը ամենուրեք ունի առատ միջոցներ։

Ամեն մի փոքր ի շատէ աչքի ընկնող արդիւնաբերական համայնքում ևս ունի իր «Ժողովրդական Տունը»—«մատուռ, տաճար կամ մայր եկեղեցի»,—որ տալիս է բանւորներին ժողովատեղի ծառայում է իբրև կենտրոն տեղական սօցիալիստական կեանքի։ Վերջապէս իրանց գործունէութեան պատճառով տեղից զրկւած և

փողոց նետուած բանւորները կօօպերացիաներում գտնում են հաւա-
տարիմ օթևան։ Ուրիշ երկրներում նրանք ստիպուած են լինում
դիմելու տրակտիրի ծառայութեան, մեզ մօտ նրանք մտնում են «Ժո-
ղովրդական Տան» կամ «Vooriut»-ի ծառայութեան և ինչպէս ամեն
մի գիւղում կաթօլիքական գաղափարների տարածման համար կայ
մի կիւրէ, այնպէս էլ ամեն մի արդիւնաբերական կենտրօնում
գոյութիւն ունեն կօօպերացիաների բանւորներ և ծառայողներ
սօցիալիստական գաղափարներ տարածելու համար։

Այդ պատճառով չը պէտք է զարմանալ, որ սօցիալիզմի
հակառակորդները իրանց ամենակատաղի յարձակումները ուղղում
են բանւորական կուսակցութեան կօօպերացիաների դէմ։ Սկզբ-
բում աշխատում էին նրանց դէմ գրգռել մանրավաճառ խանութ-
պաներին, յետոյ սկսեցին ստեղծել մրցող հիմնարկութիւններ.
այժմ էլ նրանց քաղաքական գործածութիւնը ուժասպառ անելու
համար ծրագրում են փոխել առևտրական հիմնարկութիւններին
վերաբերող օրէնքը, արգելելով նրանց բաց թողնել գումարներ
պրօպագանդի համար, ինչպէս նաև արգելել ոչ անդամներին ա-
պրանք վաճառելը։

Բայց այժմ արդէն ուշ է։ Արւեստական խոչընդոտներով
այլ ևս անկարելի է կանգնեցնել բանւորական կազմակերպութեան
զարգացումը։ Եթէ չը յաջողւեց քանդել այն թոյլ սինդիկատները,
որոնք գոյութիւն ունէին 1857 թւից սկսած, ուրեմն ինչպէս կա-
րող են վերացնել բանւորական կուսակցութիւնը, որ իբրև պե-
տութեան մէջ պետութիւն ծածկել է երկիրը իր Ժողովրդական
Տներով և—չը նայելով ընտրողական անարդար օրէնքին—իրանց
տրամադրութեան տակ ունեն հինգ հարիւր հազար ձայն, բոլոր
տուած ձայների մէկ քառորդ մասը։

Այս պատճառով էլ հասկանալի է, որ կառավարութիւնը
չը գիտէ, թէ ինչ անի. նա մի կողմից միւս կողմն է ընկնում,
փոխառութիւն է բանում «Ժողովրդական Տան» համար. և դատ է
սկսում «Vooruit»-ի և Ժօլիմօնի «Le Progrés»-ի դէմ, մանր խա-
նութպաններին ցնորամիտ խոստումներ են անում և միևնոյն ժա-
մանակ ընտրողներին իր հետ հաշտեցնելու համար կօօպե-
րատիվ ընկերութիւններին տալիս է իրական օգուտներ։ Եւ այն
ժամանակ, երբ տիրող դասակարգերը այսպիսով աւելի և աւելի
խոստովանում են, որ իրանք անընդունակ են ղեկավարելու ըն-

րանց աչքերի առաջ կատարւող սօցիալական պրօցեսսը,—բան-
ւորական կուսակցութիւնը շարունակում է իր յաղթական արշա-
ւանքը, անընդհատ ամրացնում է իր դիրքերը և իր տնտեսա-
կան կազմակերպութեան ամրութիւնների վրայ նա պատրաստում
է հիմնել պրօլետարիատի քաղաքական իշխանութիւնը։

ՎԵՐՋԱԲԱՆ

Բելգիայում թէև արդիւնաբերական զարգացումը նոյնքան
արագ և նոյն եռանդով էր ընթանում, որքան և հարևան երկր-
ներում, այնուամենայնիւ այնտեղ կապիտալիզմի սօցիալական
հետևանքների դէմ բանւորական դասակարգի կռիւը սկսւեց ա-
ւելի ուշ և ընթանում էր աւելի դանդաղ կերպով։ Այն ժամանակ
երբ սօցիալ-դեմօկրատիան արդէն խոշոր ոյժ էր ներկայացնում
Գերմանիայում, այն ժամանակ, երբ անգլիական տրէդ-ունիօն-
ները արդէն կարողացել էին ստիպել արդիւնաբերութեան ձեռ-
նարկուներին մանրամասնօրէն կարգաւորել երեխաների և կա-
նանց աշխատանքը (և իբրև սրա հետևանք նաև չափահաս տղա-
մարդկանց աշխատանքը). այն ժամանակ, երբ բանւորական դա-
սակարգը վաղուց արդէն գրաւել էր Ֆրանսիայում քաղաքական
իրաւունքներ, բելգիական պրօլետարիատը ներկայացնում էր իր-
րև մարդկային փոշի, որ ենթակայ է բոլոր քամիների ազդեցու-
թիւններին. գոյութիւն չունէր ոչ մի հովանաւորող օրէնսդրու-
թիւն, որ սահմանափակէր թոյլերի աշխատանքի շահագործումը։
իսկ քաղաքական աշխարհում ցէնզի պայմաններին բաւարարու-
թիւն տւող բուրժուազիայի մօնօպօլիան մնում էր իբրև ճշգրիտ
արտայայտութիւն նրա տնտեսական տիրապետութեան։

Բայց երբ բանւորները եկան իրանց ստորացման գիտակ-
ցութեան և վճռեցին կռիւ սկսել, այն ժամանակ նրանք իրանց
ազատագրութեան այս գործը տարան անընկճելի եռանդով և յա-
մառութեամբ։

Քսան և հինգ տարուց պակաս ժամանակաշրջանում, կարե-
լի է ասել, որ փոխւեց երկրի պատկերը։ Ստեղծւեց բանւորա-
կան կազմակերպութիւն, որ տարածել է իր ճիւղաւորութիւննե-
րը բոլոր արդիւնաբերական կենտրօնների վրայ, առաջարկած

են մի շարք սոցիալական օրէնքներ, որոնք, առանց ներքեւից եկող ճնշման, երբեք չէր վիճակւել աշխարհ տեսնել. կարողացան վերջապէս ձեռք բերել ընտրողական ռէֆօրմ, որ չընդունելով հաւասարների ունեցած եռակի ձայնին—թոյլ է տալիս պրօլետարիատին մասնակցել ներկայացուցչութեան (166 պատգամաւորից 28-ը բանւորական կուսակցութեան պատգամաւորներ են).

Մօտ ապագայում կը յաղթանակի ընդհանուր ընտրողական իրաւունքը. Նրա յաղթանակը անխուսափելի է, որովհետեւ ընդհանուր ընտրողական իրաւունք պահանջում են բոլոր ընդդիմադիր կուսակցութիւններ, որոնց վաղը պատկանելու է մեծամասնութիւն այն ժամանակ բոլոր պարլամենտական սոցիալիստական ֆրակցիաներից ամենից ուժեղը լինելու է բելգիական սոցիալիստական ֆրակցիան:

Բայց մենք չենք գրում ուղերձ, այլ օբեկտիվ և անկեղծ կերպով պատմում ենք այն, ինչ որ կայ. այս պատճառով մենք պէտք է խոստովանենք, որ Բելգիայի բանւորական շարժումը շատ տեսակէտներից տուժում է շնորհիւ նրա հէնց արագ զարգացման: Մեր կօօպերատիվ հիմնարկութիւններ ուժեղ են, բայց բանւորական միութիւնները դեռ շատ թերութիւններ ունեն: Մեր ընտրողները բազմաթիւ են, բայց նրանցից շատերի համար սօցիալիզմը դեռ մի անորոշ տենչանք է, դասակարգային բնազդ, տարերային—ուժեղ, բայց ոչ մշակւած: Մեր սօցիալական օրէնսդրութիւնը կազմում է մի ամբողջ հատոր, բայց նրա գործադրութեան հետեւանքները ամենից քիչ կարելի է բաւարար համարել: Քաղաքային, գաւառական խորհուրդներում և օրէնսդրական ժողովում մենք ունենք շատ ներկայացուցիչներ, բայց հէնց այդ մանդատների շատութեան պատճառով,մենք աւելի ուժեղ կերպով ենք զգում ընդունակ, եռանդուն և կրթւած մարդկանց պակասութիւնը:

Այս պատճառով և բանւորական կուսակցութիւնը վերջին 2—3 տարւայ ընթացքում ուղղեց իր ամենաեռանդուն ջանքերը ստեղծելու այդպիսի մարդիկ, աւելի կրթւած սերունդ, ուժեղացնելու սինդիկալական կազմակերպութիւնները:

Բանւորական միութիւններում մեծանում են անդամավճարները, ստեղծւում են գործազրկութեան դէպքերի համար գանձարաններ, հիմնւում են մշտական սեկրետարիատներ: Գաւառական

դաշնակցութիւնների մէջ կազմակերպւում են ինքնակրթողական խմբեր, ժողովրդական համալսարաններ և ընդհանուր—կրթողական դասընթացքներ. նկատւում է լրագիրների և բրօշիւրների միջոցով պրօպագանդը զարգացնելու ձգտումն:

Բելգիայում այժմ գոյութիւն ունի չորս ամենօրեայ սօցիալիստական թերթ, որոնցից ընդհանուր առմամբ տարածւում է հարիւր հազարից աւելի օրինակ. «Vooruit» («Յառաջ»), որ ունի մասնաւորապէս Անտվերպենի համար մի հրատարակութիւն «La Werker» («Բանւոր») անունով: «Le Peurle» («Ժողովուրդ») իր էժանագին՝ երկու սանտիմանոց «Echo du Peuple» անունով: «Le Journal de Charleroy» և վերջապէս «L'Avenir de Borinage»: Սրանից առաջին երկուսը—մէկ ֆլամանդական լեզւով, իսկ միւսը ֆրանսերէն—կուսակցութեան պաշտօնական օրգաններ են, միւս երկուսը յարում են Շարլըրուայի և Բօրինաժի տեղական կազմակերպութիւններին: Բացի դրանից կարեւորագոյն բանւորական միութիւններն ու գաւառական դաշնակցութիւնները հրատարակում են 22 ամենօրեայ թերթ, 14 ամսագիր և 11 պրօֆեսսիօնալ թերթեր, ի միջի այլոց «Le Laboureor» («Հերկող») թերթը, որ կուսակցութեան պաշտօնական օրգանն է և նշանակւած է գիւղական ազգաբնակութեան համար:

Այնուամենայնիւ բուրժուական մամուլը շնորհիւ յայտարարութիւնների, արդիւնաբերական ընկերութիւնների հաշւետուութեան տպագրութեան և ոչ այնքան մաքուր կողմնակի անդամների, գերակշռում է սօցիալիստական մամուլին թէ իր հրատարակութիւնների քանակութեամբ, թէ նրանց էժանութեամբ և թէ քրօնիկօնի աւելի ճոխ բովանդակութեամբ:

Այս պատճառով բանւորական կուսակցութիւնը իր մամուլի համեմատական պակասը լրացնելու համար, աշխատում է աւելի և աւելի լայն հիմքերի վրայ դնել բրօշիւրների միջոցով մղւող իր կռիւը:

Անկախ միւս կօօպերատիվ սօցիալիստական տպարաններից, որոնք ամեն տարի որոշ քանակութեամբ տպագրում են trakts (թերթեր), Գենտի սօցիալիստական տպարանը այս տեսակէտից արժանի է առանձին ուշադրութեան:

1903 թւի հոկտ. 1-ից մինչև 1904 թ. հոկտ. 1-ը նա օր. երկրում տարածել է ծրագրի 35,000 օրինակ, մանիֆեստի

150,000 օր., 890,150 պրօպագանդի թերթեր, 1,042,850 ֆրան
սերէն և ֆլամանդերէն բրօշիւրներ, բացի դրանից նա հրատա
րակում էր ամենօրիայ «Vooruit» 30,000 օրինակ։

Բայց որպէս զի իր պրօպագանդին տայ աւելի սիստեմա
տիկ բնաւորութիւն, նա ստեղծել էր «Germinal» անունով ար
նեմինտների մի ամբողջական շրջան, որոնք աներևակայելի էժա
գնով—1 ֆրանկով իրաւունք են ձեռք բերում ստանալու տար
ւազն 18 բրօշիւր միջին թւով 32 երեսից բաղկացած ամեն մէկը
որոնցից շատերը հասնում են նոյն իսկ 100 երեսի։ «Germinal»-
առաջին տարին ունէր 3,000 աբօնենտ, բայց կարելի է յուսա
որ յաջորդ տարին նրանց թիւը կեռապատկւի կամ նոյն իս
քառապատկւի։

Դէպի գիրքը հետաքրքրութիւն զարթեցնելու և պրօլետա
րիատին սօցիալիստականօրէն կրթելու այս բոլոր ջանքերը
առհասարակ Բելգիայում անւող փորձերը հանդիպում են երկո
չափազանց կարևոր խոչընդոտների․ այն է խիստ երկարատ
բանւորական օրը և սկզբնական կրթութեան անբաւարար կազ
մակերպութիւը։

Բելգիայի բուրժուազիան պէտք է կրէ պատմութեան առա
այն նախատինքը, որ այն ժամանակ, երբ տօնւում է նրա թա
գաւորութեան եօթանասնամեակը, Բելգիան Արևմտեան Եւրոպա
յում միակ երկիրն է, որտեղ դեռ գոյութիւն չունի պարտա
դիր ուսումը և որտեղ նորակոչ զինւորների մէջ հաշւում են 10
անգրագէտներ։

Պրօլետարիատը ընդհակառակն, կարող է պարծենալ, որ այ
քան անբարեյաջող պայմաններում, երբ նա ստիպւած է միաժա
մանակ կռւելու տիրող դասակարգի կոյր եսականութեան և իր ս
փական տգիտութեան դէմ, որին սիստեմատիքաբար նպաստում
կապիտալիստներն ու եկեղեցին, նա այնուամենայնիւ կարողա
ցաւ այնքան պատւաւոր տեղ գրաւել միջազգային սօցիալ-դեմօ
րատիայի շարքերում։

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀՀ Ազգային գրադարան
NL0200219

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Բախ.—Հարուստներ և աղքատներ. II տպագրութիւն . 15
2. Պեշեխոնով.—Հաց, լոյս և ազատութիւն . . 12
3. Ֆէդորօվիչ.—Ինչպէս են ժողովում և ծախս. ժող. փողերը 5
4. Կարմօլին.—Նոր լերան քարոզը . . 2
5. Չերնով.—Գիւղացին և բանւորը 15
6. Գերմենրոտորֆեր.—Ազգային հարցը և սօցիալ-դեմօկրատ. 5
7. Պրամպոլինի.—Գիւղացիներին 5
8. Է. Թոփչեան.—Արհեստակցական միութիւններ. . 15
9. Նօվոտորժսկի.—Ինչ է իրաւական պետութիւն . . 15
10. Ն. Կարանով.—Հողային հարցը Նոր Զելանդիայում . 2
11. Ժան Ժորէս.—Բուրժ. սեփ. և նրա ապագայ գրաւումը 5
12. Ս. Արեգեան.—Դեմօկրատական ընտրութիւններ . 12
13. Կարլ Կաուցկի.—Ազգութիւնների հարցը Ռուսաստանում 3
14. Ա. Ահարոնեան.—(Դարեր) Ազատութեան ճանապարհին 80
15. Ֆ. Լասալ.—Սահմանադրութեան էութեան մասին . 5
16. Ա. Ն.—Ինչպէս կարելի է լուծել հողային հարցը . 2
17. Վասիլի Գալուբեվ.—Ինչ է ժողովրդապետութիւնը . 2
18. Ս. Զաւարեան.—Վիճակ. տեղ. գիւղական ապար. . 25
19. Ալֆոնս Գիւնան.—Ժողովրդ. օրէնսդր. դաշ. Զւիցերիայում 20
20. Դիկշտէյն.—Ով ինչով է ապրում 7
21. —Մի զրոյց հողի մասին 5
22. Լ. Տիշկո.—Ագրարային ծրագրի հարցը . . . 7
23. Ա. Նիկոլայեվ.—Կոոպերացիա 5
24. Տապեցէք օգտուել ձեր իրաւունքներից. . . 1
25. Լ. Պետրով.—Երկու ծրագիր 20
26. Ս. Վշօսկ.—Պետ. կազմակերպ. հիմքերը Արևմուտ. 12
27. Անսկի.—Գիւղացիական հարցը Ֆրանսիայում. . 7
28. Միքայէլ Յովհաննիսեան.—Դաշնակց. և նրա հակառակորդ. 50
29. Ժ. Գէդ և Պ. Լաֆարգ.—Տնտես. զարգ. և Սօցիալիզմ. 5
30. Նօվոտորժսկի.—Ազգային հարց. Աւտօնօմիա և ֆէդէրացիա 7
31. Խորամանկ կարգեր. 7
32. Միքայէլ Յովհաննիսեան.—Գորդեան հանգոյցը . . 20
33. Հրահանգներ պատանիների համար 1
34. Չերնով.—Դասակարգային կռւի թէօրիայի շուրջը . 10
35. Լ. Տիշկո.—Նւազագոյն ծրագիրը 12
36. Ս. Նեկրասով.—Ինչ կարգեր են հարկաւոր ժողովրդին 10
37. Ա. Տախաթ.—Ֆէդէրալիզմ և դեմօկրատիզմ . . 30
38. Արամայիս.—Վնասակարը. 4
39. Արամայիս.—Մի քանի գլուխ հայ-թրքակ. ընդհար. 25
40. Միքայէլ Յովհաննիսեան.—Կովկասեան փանդէան 25
41. Ծ. Գօրցե.—Ինչպէս իրակ. Ազգութիւն. հաւաս. . 7
43. Վ. Չերնով.—Պրօլետար. և աշխատ. գիւղացիութիւնը 18
44. Աբրամօվա.—Գիւղացին և բանւորը . . . 3
45. Է. Վանդերվելդ.—Բանւոր դաս. գրաւթ. Բելգիայում 45

Պատրաստւում են տպագրութեան համար մի շարք ուրիշ գրք

Գինն՝ Թիֆլիս «Փարոս», Երևանեան հրապարակ: